



ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՐՈՒՄՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նվիրված Կ.Ա. Միրումյանի հիշատակին

Գիտաժողովի նյութերի ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ՈՀՀ հրատարակչություն

2024

МИНИСТЕРСТВО НАУКИ И ОБРАЗОВАНИЯ
РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

МИРУМЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

Посвященная памяти К.А. Мирумяна

Сборник материалов конференции

ЕРЕВАН
Издательство РАУ
2024

УДК 1/14:3(082)
ББК 6/8я43
Н 345

*Печатается по решению Ученого
и Редакционно-Издательского советов РАУ*

Ответственный редактор: зав. кафедрой политологии им. К.А. Мирумяна
Российско-Армянского (Славянского) университета, к. филос. н., доц. **О.Л. Саркисян**

Н 345 «Мирумяновские чтения. Научная конференция, посвященная памяти К.А. Мирумяна»: Сборник научных статей. – Ер.: Изд-во РАУ, 2024. – 208 с.

В данную книгу включены материалы организованной и проведенной 13 декабря 2022 года в Российско-Армянском (Славянском) университете научной конференции, посвященной памяти доктора философских наук, профессора К.А. Мирумяна.
Публикация сборника «Мирумяновские чтения» осуществлена в соответствии с требованиями ВАК РА к сборникам научных трудов.

УДК 1/14:3(082)
ББК 6/8я43

ISBN 978-9939-67-315-8

© Издательство РАУ, 2024



Можно завоевать народ, но идея принадлежности к нации
может исчезнуть только вместе с нацией.









Именно через идентичность можно прийти к общечеловеческим
ценностям. Потому что, если мое «Я» не уничтожено,
я готов уважать, принимать что-то чужое.
Но не за счет своего «Я».

СОДЕРЖАНИЕ

Выступления на торжественном заседании	11
Научные доклады	
Мирумян Р.А. Карлен Мирумян – армянский философ рубежа XX–XXI веков (традиционалист и новатор)	88
Ананян Ш. К.А. Мирумян – неутомимый исследователь истории армянской философской мысли	105
Маргарян С.Б. Мирумяновские «отправные точки» исследования отечественной истории	111
Аревшатян А.С. Карлен Мирумян – эстетик	123
Асатрян Л.Т. Карлен Мирумян: у истоков армянской педагогической мысли	133
Сарвазян Л.С. Интерпретация методологических принципов исследования национальной политико-философской мысли в трудах Карлена Мирумяна	140
Авакян М.Э. Армянская политическая мысль сквозь призму мировоззрения К.А. Мирумяна	153
Габриелян А.А., Дунамалян Н.А. История политической науки с точки зрения государствоцентричности (обзор трудов Карлена Артаваздовича Мирумяна)	159
Ширханян С.С. Концепция демократии Алексиса Де Токвиля: «Мирумяновское» прочтение	163
Залинян Т.Г. Научный подвиг Карлена Мирумяна	170
Тадевосян Ж.А. Национальное бытие как основа методологии истории армянской политической мысли	178
Приложение	
«Частица Бога» (интервью К.А. Мирумяна)	182
Биография К.А. Мирумяна	195
Библиография К.А. Мирумяна	199

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանդիսավոր նիստի ելույթներ	11
Գիտական զեկույցներ	
Ռ.Ա. Միրումյան. Կառլեն Միրումյան՝ XX-XXI դարերի սահմանագծի հայ փիլիսոփա (ավանդապաշտ և նորարար)	88
Շ.Անանյան. Հայ փիլիսոփայական մտքի պատմության անխոնջ մշակը. Կառլեն Միրումյան	105
Ս.Բ. Մարգարյան. Ազգային պատմության հետազոտության միրումյանական ելակետերը	111
Ա.Ս. Արևշատյան. Կառլեն Միրումյանը որպես գեղագետ	123
Լ.Թ. Ասատրյան. Կառլեն Միրումյանը՝ հայ մանկավարժական մտքի ակունքներում.....	133
Լ.Ս. Սարվազյան. Ազգային փիլիսոփայաքաղաքական մտքի հետազոտության մեթոդաբանական սկզբունքները Կառլեն Միրումյանի մեկնաբանությամբ	140
Մ.Է. Ավագյան. Հայ քաղաքական միտքը Կառլեն Միրումյանի աշխարհայացքի շրջանակում	153
Հ.Ա. Գաբրիելյան, Ն.Ա. Դունամայան. Քաղաքագիտության պատմությունը պետականակենտրոնության տեսակետից (Կառլեն Արտավազդի Միրումյանի աշխատությունների ակնարկ)	159
Ս.Ս. Շիրխանյան. Ժողովրդավարությունը և ժողովրդավարացումը Ալեքսիս Դը Տոկվիլի քաղաքական հայեցակարգում. միրումյանական ընթերցում	163
Թ.Գ. Զալինյան. Կառլեն Միրումյանի գիտական սխրանքը	170
Ժ.Ա. Թադևոսյան. Ազգային կեցությունը որպես հայ քաղաքական մտքի պատմության մեթոդաբանական հիմք	178
Հավելված	
«Աստծո մասնիկը» (Կ.Ա. Միրումյանի հարցազրույցը)	182
Կ.Ա. Միրումյանի կենսագրությունը	195
Կ.Ա. Միրումյանի աշխատությունների ցանկը	199



ВЫСТУПЛЕНИЯ

ԵԼՈՒՅԹՆԵՐ



АРМЕН ДАРБИНЯН

**Ректор Российско-Армянского
(Славянского) университета
(2001–2023гг.), д.э.н., профессор,
член-корреспондент НАН РА,
иностраннный член РАН**

В университете мы придаем большое значение развитию науки и мысли, исследованию армянской научной мысли, определению ее значения в нашей повседневной жизни и особой актуальности в условиях современных политических процессов. К сожалению, наше академическое сообщество не имеет должного влияния на протекающие политические процессы и не обладает должным восприятием со стороны ответственных за политическую деятельность лиц. Вся жизнь и деятельность Карлена Мирумяна была развитием и диктовкой этой мысли, особенно для тех, кто несет ответственность за принятие политических решений, осмысление исторических процессов и реалий. Он всегда задавал вопросы, эти вопросы были обращены даже к хрестоматийным истинам, и Мирумян находил ответы и старался направить в нужное русло. И в нем удивительным образом сочетались скромность и научная сила. Своей жизнью, своей работой, всем своим существованием, своей самоотверженностью он заставлял считаться с этой скромной мощью.

И не случайно, что сегодня мы с большой серьезностью относимся к его наследию, к его научным трудам, к его роли в контексте бытия, жизни университета. Мы доверяли ему не только как непререкаемому авторитету в области философии, в области истории и культуры, политологии, мы доверяли ему как одному из лучших наших профессоров, который придавал большое значение преподаванию, воспитанию, образованию, готовя наше поколение к новым вызовам.

В нашей памяти всегда останутся все эпизоды, когда профессор Мирумян проявлял по-отечески строгое, но справедливое отношение к своим студентам, и неслучайно, его ученики и все те, кто имел отношение к научной и педагогической деятельности Карлена Мирумяна, вспоминают его самыми добрыми словами.

Карлен Мирумян с достоинством нес свой крест первооткрывателя в науке и проблем, которые были связаны исключительно со здоровьем. Мы, как представители университетского, академического сообщества, обязаны оглашать, представлять, выделять представителей научной мысли и сделать все, чтобы наше влияние на лиц, принимающих решения, было прямым и абсолютным, что очень важно, и нет ничего важнее в данный момент. К сожалению, мы недостаточно заботимся о наших выдающихся людях, что является настоящей трагедией.

Я очень благодарен всем присутствующим здесь: представителям институтов, академического сообщества, профессорам. Карлен Мирумян со многими лично сотрудничал, были совместные работы. И это – не просто мероприятие, дань должному, но и наш долг перед будущим. Все это надо помнить, углубляться во все это, понять и найти решения – часть нашего обязательства выйти из этой ужасной ситуации.

Мирумян много писал об интеллигенции. Интеллигенция – это веление ума, диктат интеллектуалов. Мы должны принять этот диктат и быть готовыми также ответить перед нашими поколениями. Жизнь и деятельность Мирумяна были именно таким ответом, но он давал свой личный ответ. Мы его, как могли, подбадривали, поддерживали, во всем помогали, но это не личная проблема, это – системная проблема, которую мы, присутствующие здесь и многие другие подвижники науки, должны принять, взять на себя и нести с честью, ценя историю, науку, научную мысль. Ведь, не имея государства, мы создали великие труды, показали огромные научные результаты. Именно это является арменоведением, арменоведение – это мысль, которая на протяжении тысячелетий поддерживала нас и делала сильнее.

Это очень незначительное обращение к огромному богатству, которым мы обладаем в виде наследия уважаемого Мирумяна. И мы обязательно постараемся сохранить и приумножить это наследие.

ԱՐՄԵՆ ԴԱՐԲԵՆՅԱՆ

**Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարանի ռեկտոր (2001–2023թթ.),
տ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ, Ռուսաստանի Դաշնության
Գիտությունների Ակադեմիայի
արտասահմանյան անդամ**

Մենք համալսարանում անչափ կարևորում ենք գիտության և մտքի զարգացումը, հայ գիտական մտքի հավաքագրումը, դրա նշանակությունը մեր առօրյայում, և այսօր առանձնակի կարևորում ենք դա մեր արդի քաղաքական գործընթացներում: Ցավոք, մեր ակադեմիական հանրությունը պատշաճ ազդեցություն չունի առկա քաղաքական գործընթացների վրա և պատշաճ ընկալում չունի քաղաքական գործընթացների պատասխանատուների կողմից: Կառլեն Միրումյանի ամբողջ կյանքը և գործունեությունը հենց այդ մտքի զարգացումն ու թելադրանքն էր հատկապես նրանց, ովքեր պատասխանատու են քաղաքական որոշումներ կայացնելու, պատմական գործընթացները և իրողությունները մեկնաբանելու համար: Նա միշտ հարցեր էր դնում, այդ հարցերն ուղղված էին անգամ դասագրքային ճշմարտությունների նկատմամբ, և Միրումյանը գտնում էր պատասխաններն ու փորձում ուղղորդել: Եվ իր մեջ զարմանալիորեն տեղավորվում և ամփոփվում էր համեստությունը գիտական հզորության հետ: Իր կյանքով, իր աշխատանքով, իր եղելիությամբ, նվիրումով ինքը պարտադրում էր հաշվի նստել այդ համեստ հզորության հետ:

Եվ պատահական չէ, որ մենք այսօր մեծ լրջությամբ ենք մոտենում իր թողած ժառանգությանը, գիտական աշխատանքներին, իր եղելիությանը, համալսարանական կյանքում իր դերակատարմանը: Մենք նրան վստահում էինք ոչ միայն որպես անառարկելի հեղինակությանը փիլիսոփայության ոլորտում, պատմամշակութային ոլորտում, քաղաքագիտության ոլորտում, մենք նրան վստահում էինք որպես մեր լավագույն պրոֆեսորներից մեկին, ով դասավանդմանը, կրթմանը, կրթությանը, մեր սերնդին նոր մարտահրավերներին պատրաստելուն շատ մեծ տեղ էր տալիս: Մշտապես մեր հիշողության մեջ են բոլոր այն դրվագները, որտեղ պրոֆեսոր Միրումյանն իր հայրական խիստ, բայց և արդար վերաբերմունքն էր ցու-

ցաբերում իր ուսանողների նկատմամբ, և պատահական չէ, որ նրան շատ բարի բառերով են հիշում իր ուսանողներն ու բոլոր նրանք, ովքեր առնչություն են ունեցել Կառլեն Միրումյանի գիտական և մանկավարժական գործունեության հետ:

Կառլեն Միրումյանն արժանապատվորեն կրում էր գիտության ռահվիրայի իր խաչն ու այն մարտահրավերները, որոնք զուտ առողջական էին: Մենք որպես բուհական, ակադեմիական հանրություն պարտավոր ենք բարձրաձայնել, ներկայացնել, կարևորել գիտական մտքի ներկայացուցիչներին և անել ամենինչ, որպեսզի մեր ազդեցությունը որոշում ընդունողների վրա լինի բացահայտ և բացարձակ, ինչը շատ կարևոր է և որից կարևոր բան չկա այս պահին:

Ցավոք, մենք բավարար չափով չենք անդրադառնում մեր մեծերին, ինչն իսկական ողբերգություն է: Ես շատ շնորհակալ եմ բոլոր ներկաներին՝ ինստիտուտների ներկայացուցիչներին, ակադեմիական հանրությանը, պրոֆեսորներին: Շատերի հետ Կառլեն Միրումյանն անձամբ գործակցել է, համատեղ աշխատություններ ունի: Սա միջոցառում չէ, սա ոչ միայն մեր հատուցման պարտքն է, այլ նաև պարտքն է ապագայի նկատմամբ:

Այս ծանրագույն իրավիճակից դուրս գալու մեր պարտավորության մի մասն է այս ամենը

հիշելը, այս ամենի մեջ խորանալը, հասկանալը և լուծումներ գտնելը: Շատերը չեն ընկալում, չեն խորանում, չեն էլ ուզում խորանալ, ինչը մեծ ողբերգություն է:

Միրումյանն ինտելիգենցիայի մասին շատ էր գրում: Ինտելիգենցիան մտքի թելադրանքն է, ինտելեկտուալների թելադրանքը: Մենք այդ թելադրանքը պետք է ստանձնենք և պատրաստ լինենք ու պատասխան տանք մեր սերունդների առջև: Միրումյանի կյանքը և գործունեությունը հենց այդ պատասխանն էր, բայց ինքն իր սեփական պատասխանն էր տալիս: Մենք ինչքան կարողանում էին իրան ոգևորում էինք, սատար կանգնում, օգնում ամեն ինչով, բայց սա անձնային խնդիր չէ, սա համակարգային խնդիր է, որը մենք՝ ներկաներս և շատ գիտության նվիրյալները, պետք է վերցնենք, ստանձնենք և պատվով կրենք՝ կարևորելով պատմությունը, գիտությունը, գիտական միտքը: Չէ՞ որ մենք, պետություն չունենալով, հսկայական աշխատություններ ենք տվել, հսկայական գիտական արդյունքներ: Հենց սա՝ է հայագիտությունը, հենց միտքն է հայագիտությունը, որը հազարամյակներ ի վեր մեզ ամուր է պահում:

Սա շատ փոքր անդրադարձ է այս վիթխարի հարստությանը, որը մենք ունենք ի դեմս պարոն Միրումյանի կողմից թողած ժառանգությանը: Եվ մենք անպայման կփորձենք այդ ժառանգությունը պահպանել ու հարստացնել:



ОГАНЕС САРКИСЯН

**Заведующий кафедрой политологии
Российско-Армянского (Славянского)
университета, к. филос. н., доцент**

Великое наследие Карлена Артаваздовича Мирумяна я, конечно же, представляю очень поверхностно, потому что представить его за 10–15 минут просто невозможно.

Это мероприятие должно было состояться еще при жизни нашего знаменитого ученого, в январе 2021 года, когда ему исполнилось 70 лет. В то время была издана вторая из презентуемых сегодня книг – «Армянская политическая мысль», и руководство нашего университета не только высказалось «за», но и сочло просто необходимым провести мероприятие, посвященное юбилею Карлена Мирумяна, совместно с презентацией этих книг. К сожалению, мы не успели этого сделать по объективным, известным всем нам, причинам.

Что касается первой книги – «Антологии армянской педагогической мысли», то эта книга была издана в конце 2019 года, когда началась пандемия, и презентация не состоялась. Об этих книгах мы еще поговорим сегодня, а сейчас позвольте мне обратиться к пройденному Карленом Мирумяном пути, его научному наследию.

Карлен Артаваздович Мирумян родился в 1952 году в Кировабаде, но большую часть жизни провел в Ереване, посвятив всю свою жизнь науке и образованию. Нельзя, говоря о профессоре Мирумяне, не упомянуть о его связи (которую он лично всегда подчеркивал и гордился) со своим учителем.

Его учителем был Сен Суренович Аревшатян, академик, который на протяжении многих лет являлся директором Матенадарана. Карлен Мирумян всегда подчеркивал это и постоянно говорил об этом с какой-то внутренней гордостью, и не только формально, потому что Аревшатян руководил его диссертацией, но, мне кажется, и потому, что академик Аревшатян также признавал, что его главным последователем в плане видения ис-

тории армянской философской мысли, понимания армянской культуры был профессор Мирумян. Эта связь между двумя великими учеными, на мой взгляд, очень важна, и наша задача сегодня – понять, переосмыслить оставленное ими наследие и постараться сохранить его в той или иной форме и, по возможности, сделать его основой для дальнейшего развития.

«Мировоззрение Ованеса Саркавага» – первая монография профессора Мирумяна и, по сути, его кандидатская диссертация. В прошлом году, когда мы с профессором Мирумяном обсуждали сегодняшнее, тогда еще предстоящее событие, он сказал, что его эволюция началась от отдельных философско-персоналий к конкретным сферам научно-философской мысли и к общему восприятию не только армянской философской мысли, но и армянской духовной культуры в целом.

В 1980 году в Ереване состоялся большой международный форум, посвященный 1500-летию Давида Непобедимого, который имел громадное значение с точки зрения знакомства мира с философским наследием нашего великого философа, представления его миру по-новому. Сборник избранных докладов форума был издан в Москве в издательстве «Наука» именно усилиями профессора Мирумяна. В сборник вошли далеко не все доклады той большой конференции. Профессор Мирумян выбрал лишь некоторые из них и расположил их в типологическом порядке. И он всегда рассказывал, каким образом ему удалось опубликовать эту книгу в Москве. Именно он был ответственным секретарем сборника. Другими словами, это произведение, которое создал именно он.

Другой работой г-на Мирумяна является его докторская диссертация «Становление естественнонаучной мысли в Армении». Начав с конкретных философов, Карлен Миру-

мян перешел к различным направлениям армянской мысли. Первым было осмыслено зарождение и формирование естественнонаучной и натурфилософской мысли в Армении. В будущем будет также рассмотрена юридическая и политическая сферы, педагогическая мысль, эстетическая мысль.

К.А. Мирумян долгие годы работал в Институте философии, социологии и права Национальной академии наук (где и я когда-то был аспирантом, а позже – научным сотрудником). В нашем отделе, занимавшемся историей армянской философской мысли, царила творческая аура: два раза в неделю организовывались встречи и дискуссии на очень интересные темы (конечно, стараниями г-на Мирумяна). К этим собраниям присоединялись и «старейшины» нашей философской мысли из соседних отделов. Речь идет об академике А. Геворгяне, профессоре Якове Хачикяне, всемирно известном культурологе Э. Маргаряне и других ученых.

Параллельно, Карлен Мирумян преподавал в Институте народного хозяйства, позже – в Брюсовском университете, вел спецкурсы в ЕГУ. И, конечно же, с начала 2002 года творческий и педагогический путь Карлена Мирумяна был связан с Российско-Армянским университетом, здесь он внес огромный вклад в становление политологической специализации, воспитание новых поколений специалистов, а также в становление науки и научной мысли в целом. Некоторые книги были изданы самим Российско-Армянским университетом, и он это высоко ценил.

Лекции профессора Мирумяна были не просто передачей информации, а уроками в прямом смысле этого слова. Лекциями, которые заставляли задуматься, критически мыслить. Многие, кто общались с ним, являлись его учениками, стараются подражать его стилю преподавания, а также воздействовать на

студентов путем трансляции человеческих ценностей.

Профессор Мирумян также внес громадный вклад в становление многих ученых (речь идет не только о философской, но и о политической и правовой мысли). Карлен Мирумян был научным консультантом многих диссертантов. Хотя людей, которые защитились под его руководством, не так много: по причине его требовательности до защиты дошли немногие.

В 1990-е годы (наше поколение хорошо помнит, насколько трудными были эти годы: с одной стороны, национальный подъем, восстановление национальной государственности, с другой – война, энергетический коллапс), когда кто-то уехал из страны, кто-то занялся бизнесом и т.д., профессор Мирумян, на мой взгляд, написал свои лучшие произведения, или, по крайней мере, произведения, которые легли в основу всех его дальнейших работ.

Во-первых, я хотел бы выделить труд «Культурная самобытность в контексте национального бытия», представляющий собой небольшую по объему – около 100 страниц, небольшого формата книгу, в которой, на мой взгляд, были сформулированы те концептуальные идеи, сквозь призму которых он освещал как армянскую философскую мысль, армянскую политическую мысль, так и, в целом, – армянскую духовную, письменную культуру.

В те же 1990-е были опубликованы и другие его известные произведения. Поскольку, с одной стороны, было национальное пробуждение, восстановление государства, а с другой – серьезные вызовы и проблемы, важное значение приобрели не только политические, но и гражданские проблемы.

И неслучайно, что в те годы профессор Мирумян, выйдя за рамки сферы философии,

и вообще – истории культуры, поставил проблемы, связанные с сущностью национальной интеллигенции, с соотношением «интеллигенция-политика-власть», т.е. он попытался концептуализировать и представить свое – гражданское – видение происходящего.

В конце 1990-х годов профессор Мирумян основал важную серию сборников «Армянская философия в системе духовной культуры», в подготовке которых, начиная с третьего выпуска, я также участвовал. Здесь Карлен Артаваздович сформулировал проблематику методологических вопросов, относящихся к изучению не только армянской философии, но и духовной культуры в целом. В данной работе принимали участие и наши самые известные ученые, философы, теоретики культуры. Из произведений Мирумяна, изданных в этих сборниках, я бы выделил две работы. Это – статьи, но они имеют ключевое значение. Одна из них посвящена методологии изучения армянской культуры, где Карлен Мирумян выдвинул свою концепцию исследования, основанную на национальном бытии. Другая – как результат реализации данной концепции – его знаменитая работа о переоценке павликианского движения.

Профессор Мирумян основал еще один цикл «Имастасерк айоц», в котором первой опубликованной работой была его монография, посвященная Анании Ширкаци. Позже в этой серии появились и другие работы, в том числе работы профессора Римы Мирумян.

Учебники Карлена Мирумяна также очень оригинальны. Это не просто учебники, они одновременно являются исследованием. Например, об античной философии написано много, но я считаю небольшой учебник-исследование Мирумяна самым оригинальным, в сжатой форме передающим суть этой философии исследованием.

Роль Карлена Мирумяна колоссальна и с точки зрения развития политологической мысли. В результате коллективной работы был опубликован «Политология: энциклопедический словарь», который, кстати, был первым армяноязычным политологическим словарем. Другие его работы посвящены истории политической мысли. Особое место среди них занимает «История армянской политической мысли». Карлен Мирумян проделал также очень важную работу в плане представления истории политической мысли в целом. Когда профессор Мирумян начал работать здесь, в Российско-Армянском университете, он понял, что учебников много, но они неполные. И создал двухтомник «История политической науки». К сожалению, продолжения данной работы в виде учебника нет, но наши студенты в настоящее время учатся также по оставленным профессором текстам. Мирумян всегда гордился и отмечал, что в работе представлены ряд авторов, которые не упомянуты в других русскоязычных пособиях, учебниках, а он их «открыл» для читателей.

Следующим является произведение «Идеология и Конституция», созданное совместно с Валерием Погосяном. Здесь опять-таки речь идет не только о чисто философском, но и политическом, гражданском сознании.

Еще одним важным явлением была публикация первого тома «Истории армянской философии». Авторами были профессор Мирумян и академик Аревшатын. Этот труд является синтезом подходов двух известных ученых к пониманию армянской раннесредневековой философии. Позже Святой Эчмиадзин переиздал данный труд.

В рамках сегодняшней презентации представлены две его последние работы. Первым является труд «Антология армянской педагогической мысли». Перед тем, как эта ра-

бота была опубликована, мы много говорили с профессором Мирумяном, и он всегда упоминал, что начал работать над этой книгой еще в советское время, когда готовил Антологию педагогической мысли советских народов, которая, по моему мнению, не была опубликована из политических соображений, потому что у армянского народа педагогическая мысль была очень развита, а у остальных в те века вообще ничего не было. И профессор Мирумян всегда выражал сожаление, что огромную работу, проделанную им, кстати, в одиночку (а антологии обычно создаются коллективом авторов), не допустили к печати. Тем не менее, он закончил ее. И книга вышла в свет совместными усилиями нашего университета и Института философии, социологии и права. И мы считаем это ярчайшим презентационным материалом не только для нашего университета или другого научного учреждения, но и с точки зрения нашего национального имиджа.

Другая работа, которая также сегодня продемонстрирована, это работа «Армянская политическая мысль». В наших с профессором Мирумяном беседах мы часто говорили (и эта мысль, кстати говоря, проходит «красной нитью» во всех его работах) о том, что познание собственной политической мысли сегодня весьма актуально, потому что определенный кризис, наличный у нас сегодня, а также некоторые кризисные явления в вопросах, связанных с сознанием, культурой, идентичностью, иногда приводят к крайностям в суждениях, в том числе и о нашем прошлом, и существование таких произведений показывает нам, что нам не нужно впадать в эти крайности. Более того, профессор Мирумян всегда подчеркивал одно очень интересное обстоятельство: на этапах развития, когда у нас не было государственности, мы пытались на уровне сознания, на том высоком уровне

культуры компенсировать то, чего у нас не было. Так, не имея государства, мы создавали гениальные судебники, «Западню честолюбия»; не имея государства, у нас были гениальные политические мыслители. И Мирумяну всегда казалось парадоксальным, что, имея сегодня государство, мы как бы пренебрегаем этим пластом политического сознания, культуры и т.д., и не развиваем все это.

Кстати, позвольте мне сказать еще несколько слов относительно «Антологии». В нашем Институте философии мы также начали работу над антологией армянской философской мысли, уже большой группой, в которую входил, в том числе, и я. К сожалению, позже эта работа по каким-то причинам была прекращена. И это тоже очень печально, поскольку у нас есть огромный философский материал, который не представлен. Часть вообще не переведена на современный язык, и это странно, ведь мы хотим, чтобы нас знали другие, но мы сами себя не знаем. И этот вопрос становится сегодня актуальным, потому что с уходом таких людей, как профессор Мирумян, мы медленно теряем ту связь, традицию, которые мы должны попытаться восстановить и сохранить.

Профессор Мирумян, по сути, закончил еще одну свою работу, посвященную павликианству. И последний наш чисто научный разговор был об этом: тогда он два часа взволнованно рассказывал, что нового он открыл.

Также хочу сообщить, что ежегодно нашей кафедрой будет проводиться мероприя-

тие, которое, по-видимому, будет именовано «Мирумяновские чтения» и посвящено широкому пониманию арменоведения, потому что профессор Мирумян был арменоведом именно в широком смысле этого слова.

Сегодня мы в основном занимаемся, так сказать, армяноописанием, а профессор Мирумян занимался арменоведением. У него самого были свои концептуальные теории, на которых он строил всю картину нашего народа. Возможно, с ними можно не соглашаться, критиковать, но у Мирумяна это было, а в других случаях, к сожалению, очень часто мы имеем простое перечисление фактов, описание каких-то элементов, не укладывающихся в общую картину и не представляющих особое значение. Он отвечал на вопрос «почему», а наука есть только там, где ответ на вопрос не только в самом факте вопроса, ответ на вопрос – в теории. У Мирумяна были теоретические основы, с помощью которых он отвечал на вопрос «почему».

Свою часть выступления я хочу завершить следующим: профессор Мирумян в предисловии к своему труду, посвященному Ширакаци, поместил цитату философа: «Все, что имеет начало, непременно имеет и конец, но конец чего-то одного есть начало другого». К сожалению, профессор Мирумян закончил свою земную жизнь, но я надеюсь, что он заложил основы нового начала, и наш долг – создать новое и развить его на основе того, что он сделал.

Интеллигент – синтетический термин. Это не только гражданин данного общества, не только носитель интеллектуальных ценностей, но одновременно и носитель духовно-нравственных ценностей, принципов.

К.А. Мирумян

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՎ քաղաքագիտության ամբիոնի վարիչ, փ.գ.թ., դոցենտ

Ես շատ մակերեսորեն կներկայացնեմ Կառլեն Արտավազդի Միրումյանի մեծ ժառանգությունը, քանի որ այն անհնար է ներկայացնել 10-15 բուպենների ընթացքում:

Այս միջոցառումը պետք է լիներ մեր հռչակավոր գիտնականի կենդանության օրոք՝ դեռ 2021 թվականի հունվարին, երբ լրացավ նրա 70-ամյակը: Այդ ժամանակ հրատարակվեց այս գրքերից երկրորդը՝ «Հայ քաղաքական միտքը», և մեր համալսարանի ղեկավարությունը ոչ միայն կողմ էր, այլև համարեց, որ պարտադիր է անցկացնել Կառլեն Միրումյանի հոբելյանին նվիրված միջոցառումը, և այս գրքերի շնորհանդեսն իրականացնել: Ցավոք սրտի, մենք չհասցրինք դա անել՝ բոլորիս հայտնի օբյեկտիվ պատճառներից ելնելով:

Ինչ վերաբերում է առաջին գրքին՝ «Հայ մանկավարժական մտքի անթուղզիային», այս գիրքը հրատարակվել է 2019 թվականի վերջին, երբ սկսվեց պանդեմիան, և շնորհանդեսը տեղի չունեցավ: Այս գրքերի մասին մենք այսօր դեռ կխոսենք, իսկ հիմա թույլ տվեք մի փոքր անդրադարձ կատարել Կառլեն Միրումյանի անցած ուղուն, նրա գիտական ավանդին:

Կառլեն Արտավազդի Միրումյանը ծնվել է 1952թ. Կիրովաբադում, բայց կյանքի մեծ մասն անց է կացրել Երևանում՝ իր ամբողջ կյանքը նվիրելով գիտությանն ու կրթությանը: Անհնար է խոսել պրոֆեսոր Միրումյանի մասին և չհիշատակել իր կապը (որն ինքն անձամբ միշտ ընդգծում էր, միշտ շեշտում և հպարտ էր դրանով) իր ուսուցչի հետ:

Իր ուսուցիչը Սեն Սուրենի Արևշտյանն էր՝ ակադեմիկոսը, ով երկար տարիների ընթացքում Մատենադարանի տնօրենն էր: Կառլեն Միրումյանը միշտ ընդգծում էր դա ու միշտ ներքին հպարտությամբ խոսում դրա մասին, և ոչ միայն ֆորմալ, քանի որ Արևշտյանը ղեկավարել էր իր ատենախոսությունը, այլ, ինձ

թվում է՝ նաև այն պատճառով, որ ակադեմիկոս Արևշատյանը նույնպես ընդունում էր, որ իր հիմնական հետևորդը հայ փիլիսոփայական մտքի պատմության առումով, հայ ընդհանուր մշակույթի ըմբռնման առումով հենց պրոֆեսոր Միրումյանն էր: Այդ կապը երկու մեծ գիտնականների միջև, իմ կարծիքով, շատ կարևոր է, և մեր նպատակն է այսօր հասկանալ, վերագնահատել նրանց թողած ժառանգությունը, և փորձել ինչ-որ ձև պահպանել, իսկ հնարավորության դեպքում՝ այն հիմք դարձնել հետագա զարգացման համար:

«Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը» պրոֆեսոր Միրումյանի առաջին մենագրությունն է և, փաստորեն, իր թեկնածուական ատենախոսությունը: Երբ անցած տարի պրոֆեսոր Միրումյանի հետ քննարկում էինք այս միջոցառումը, որը պիտի լիներ, նա ասում էր, որ իր էվոլյուցիան սկսվել է առանձին փիլիսոփաներից դեպի ոլորտներ և դեպի ոչ միայն հայ փիլիսոփայական մտքի, այլ ընդհանրապես հայ հոգևոր մշակույթի ընդհանուր ընկալումը:

1980 թվականին կայացել էր միջազգային հանրահայտ մեծ ֆորումը՝ նվիրված Դավիթ Անհաղթի 1500-ամյակին, որը վիթխարի նշանակություն ունեցավ մեր մեծ փիլիսոփայի ժառանգության նորովի ներկայացման համար, աշխարհին նրան նորովի ծանոթացնելու համար: Եվ սա ֆորումի ժողովածուն է, սակայն պարոն Միրումյանի հոդվածն այստեղ չկա: Բայց այսօր ներկայացրել ենք այս ժողովածուն, քանի որ պրոֆեսոր Միրումյանը միշտ հպարտանում էր ժողովածուով, քանի որ այս գիրքը հրատարակվել է Մոսկվայում՝ «HAУKA» հրատարակչությունում:

Այստեղ այդ մեծ համաժողովի ոչ բոլոր գեկույցներն են: Պարոն Միրումյանն ընտրել է որոշները և տիպական դասավորել: Նա միշտ

պատմում էր, թե ինչպես կարողացավ Մոսկվայում այս աշխատանքը տպագրել: Նա ժողովածուի պատասխանատու քարտուղարն էր: Այսինքն, սա էլ է նրա ստեղծած աշխատանքը:

Պարոն Միրումյանի մյուս աշխատանքն իր դոկտորական դիսերտացիան է՝ «Բնագիտական մտքի կայացումը Հայաստանում»: Սկսելով կոնկրետ փիլիսոփաներից, Կառլեն Միրումյանը գնաց դեպի հայկական մտքի տարբեր ոլորտներ: Առաջինը՝ Հայաստանում բնագիտական, բնափիլիսոփայական մտքի ծագման, ձևավորման իմաստավորումն էր: Հետագայում կոլիտարկվի նաև իրավաքաղաքական ոլորտը, մանկավարժական միտքը, գեղագիտական միտքը: Կ. Միրումյանն երկար տարիներ աշխատեց Գիտությունների Ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում (որտեղ ժամանակին ես նույնպես եղել եմ ասպիրանտ, հետագայում՝ գիտաշխատող): Մեր բաժինը, որը զբաղվում էր հայ փիլիսոփայական մտքի պատմությամբ, շաբաթական երկու անգամ շատ հետաքրքիր թեմաներով հավաքներ (իհարկե, պարոն Միրումյանի ջանքերով), քննարկումներ էր կազմակերպում: Այդ հավաքներին միանում էին նաև մեր փիլիսոփայական մտքի «նահապետները» կողքի բաժիններից: Խոսքն ակադեմիկոս Գևորգյանի, պրոֆեսոր Յակով Խաչիկյանի, աշխարհահռչակ մշակութաբան Մարգարյանի և մյուս գիտնականների մասին էր:

Զուգահեռ Կառլեն Միրումյանը դասավանդել է այն ժամանակ հայտնի Ժողովրդական տնտեսության ինստիտուտում, հետագայում՝ Բրյուսովի անվան համալսարանում, մասնագիտական կուրսեր էր կարդում նաև ԵՊՀ-ում: Եվ, իհարկե, 2002 թվականի սկզբից Կառլեն Միրումյանի ստեղծագործական և դասավանդման ուղին կապվեց Հայ-Ռուսական համալսարանի հետ, որտեղ նա վիթխարի ա-

վանդ ունեցավ քաղաքագիտական մասնագիտացման կայացման, նոր սերունդների կրթման, և նաև գիտության, գիտական մտքի կայացման մեջ: Գրքերի մի մասը հրատարակվել է հենց Հայ-Ռուսական համալսարանի կողմից, և ինքը դա շատ բարձր էր գնահատում:

Պարոն Միրումյանի դասերը ոչ միայն զուտ ինֆորմացիայի փոխանցում էր, այլ դրանք դասեր էին բառի հենց բուն իմաստով: Դասեր, որոնք ստիպում էին մտածել: Քննադատաբար մտածել: Շատերն, ովքեր իր հետ շփվել էին, եղել են նրա աշակերտները, փորձում են նմանակել դասավանդման իր այդ ձևը, և նաև մարդկային արժեքներով ազդել ուսանողի վրա:

Պրոֆեսոր Միրումյանը նաև վիթխարի նշանակություն է ունեցել շատ-շատ գիտնականների կայացման համար (խոսքը ոչ միայն փիլիսոփայական, այլ նաև քաղաքական, իրավական մտքի մասին է): Կառլեն Միրումյանը բազմաթիվ ատենախոսների խորհրդականն է եղել: Մեփական պաշտպանած անձինք այդքան էլ շատ չեն. իր խստապահանջության պատճառով քչերը հասան պաշտպանությանը:

1990-ական թվականներին (որոնք մեր սերունդը լավ է հիշում՝ ինչ ծանր տարիներ էին. մի կողմից ազգային ոգևորություն, ազգային պետականության վերականգնում, մյուս կողմից՝ արցախյան ճգնաժամ, էներգետիկ կոլապս), երբ մի մասը լքեց երկիրը, մի մասը սկսեց զբաղվել բիզնեսով և այլն, պրոֆեսոր Միրումյանն, իմ կարծիքով, գրեց իր լավագույն աշխատությունները, կամ գոնե այն աշխատությունները, որոնք հիմք հանդիսացան հետագա իր բոլոր աշխատությունների համար:

Այս առումով «Մշակութային ինքնությունը ազգային կեցության համատեքստում» աշխատությունը, որը փոքրիկ, մոտ 100 էջանոց, ոչ մեծ ֆորմատի գրքույկ է, ես համարում եմ այն հիմքը, որի վրա, իմ կարծիքով, կառուցվեցին

այն կոնցեպտուալ գաղափարները, որոնց ներքոնա լուսաբանում էր և՛ հայ փիլիսոփայական մտքի, և՛ հայ քաղաքական մտքի, և ընդհանրապես՝ հայ հոգևոր, հայկական գրավոր մշակույթի միտքը:

Նույն 1990-ականներին տպագրվեցին նաև իր մյուս հայտնի աշխատությունները: Քանի որ մի կողմից ազգային զարթոնք էր, պետության վերականգնում, իսկ մյուս կողմից՝ լրջագույն խնդիրներ, արժևորվում էին ոչ միայն քաղաքական, այլ նաև քաղաքացիական խնդիրները:

Եվ պատահական չէ, որ պրոֆեսոր Միրումյանն այդ թվականներին, դուրս գալով փիլիսոփայական, կամ ընդհանրապես՝ մշակույթի պատմության ոլորտից, դրեց ազգային մտավորականությանը, «մտավորականություն-քաղաքականություն-իշխանություն» կապին վերաբերող խնդիրները, այսինքն՝ նաև իր քաղաքացիական ըմբռնումները փորձեց կոնցեպտուալացնել և ներկայացնել:

1990-ականների վերջում պրոֆեսոր Միրումյանը հիմնադրեց շատ կարևոր մի մատենաշար՝ «Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում», որի աշխատանքներին, սկսած երրորդ պրակից, նաև ես եմ մասնակցել: Այստեղ նա դրել է հայկական ոչ միայն փիլիսոփայության, այլ ընդհանրապես՝ հոգևոր մշակույթի ուսումնասիրման մեթոդաբանական հարցերի խնդիրները: Այս աշխատանքին մասնակցել են նաև մեր ամենահայտնի գիտնականները, փիլիսոփաները, մշակույթի տեսաբանները: Միրումյանի աշխատություններից ես երկու աշխատություն կառանձնացնեի: Դրանք հոդվածներ են, բայց նույնպես ունեն առանցքային նշանակություն: Մեկը նվիրված էր հայ մշակույթի ուսումնասիրման մեթոդաբանությանը, որտեղ Կառլեն Միրումյանն առաջ քաշեց ազգային կեցության վրա հիմնված ուսումնասիրությունների իր կոնցեպցիան, մյուսը՝ այս կոնցեպցիայի

իրականացման հետևանքով Պավլիկյան շարժման վերագնահատման իր հայտնի աշխատությունն է:

Պրոֆեսոր Միրումյանը հիմնադրեց ևս մեկ մատենաշար, որում առաջին գործը՝ Անանիա Շիրակացուն նվիրված «Իմաստասերք հայոց» շարքն է, հետո նաև այլ աշխատություններ հրապարակվեցին, այդ թվում նաև պրոֆեսոր Ռիմա Միրումյանի աշխատություններն այս մատենաշարում հայտնվեցին: Ընդ որում, եթե կտեսնեք, որ որևէ գիրքը երկու անգամ է հրատարակվել, ապա դա ոչ թե զուտ վերահրատարակում է: Կառլեն Միրումյանը երբեք զուտ այդպես չէր վերահրատարակում: Նա միշտ աշխատում էր, լրացնում իր աշխատությունները, և վերահրատարակումները երբեմն կարող էին կրկնակի ավելի մեծ լինել, քան առաջին տարբերակը:

Կառլեն Միրումյանի դասագրքերը նույնպես շատ ինքնատիպ են: Դրանք զուտ դասագրքեր չեն, ինչպես այսօր շատ հաճախ ընդունված է. ինչ-որ դասախոսություններ միացնել իրար և տպագրել: Նրա ամեն մի դասագիրքը կամ ուսումնական ձեռնարկը նաև հետազոտություններ, մենագրություններ են: Անտիկ փիլիսոփայության մասին շատ է գրվել, բայց Միրումյանի ոչ մեծ աշխատությունը ես համարում եմ ամենաօրիգինալ, ամենասեղմված ձևով էությունը փոխանցող հետազոտություն:

Կառլեն Միրումյանի դերը վիթխարի է քաղաքագիտական մտքի զարգացման առումով: Կոլեկտիվ աշխատանքի արդյունքում տպագրվեց «Քաղաքագիտություն. հանրագիտական բառարան»-ը, որը, ի դեպ, առաջին հայալեզու բառարանն էր: Իր մյուս աշխատությունները նվիրված են քաղաքական մտքի պատմությանը: Օրինակ, «Հայ քաղաքական մտքի պատմությունը», որը ռուսալեզու տարբերակից ծավալով բավականին մեծ է: Սա ոչ միայն դասագիրք է, այլ նաև բավականին լուրջ հետազոտություն:

Կառլեն Միրումյանը շատ կարևոր աշխատանք է կատարել քաղաքական ընդհանուր մտքի պատմության ներկայացման առումով: Երբ պրոֆեսոր Միրումյանը սկսեց աշխատել այստեղ՝ Հայ-Ռուսական համալսարանում, նա հասկացավ, որ կան բազում դասագրքեր, բայց դրանք թերի են: Եվ նա ստեղծեց «Քաղաքական գիտության պատմությունը» երկհատորյակը: Ցավոք, սրա շարունակությունը որպես դասագիրք չկա, բայց պրոֆեսորի կողմից թողնված տեքստերով մեր ուսանողներն այս պահին նույնպես աշխատում են: Միրումյանը միշտ պարծենում էր, որ այստեղ կան մի շարք հեղինակներ, որոնց ռուսալեզու որևէ այլ ձեռնարկներում, դասագրքերում չեն անդրադառնում, բայց ինքը դրել է շրջանառության մեջ:

Հաջորդը «Գաղափարախոսությունը և սահմանադրությունը» աշխատությունն է, որը ստեղծել են Վալերի Պոդոյանի հետ միասին: Այստեղ նորից խոսքը ոչ միայն զուտ փիլիսոփայական, այլ քաղաքական, քաղաքացիական գիտակցության մասին է:

Եվս մեկ աշխատանք, որի առաջին գիրքը հրատարակվեց դեռ ակադեմիկոս Արևշատյանի կենդանության օրոք, «Հայ փիլիսոփայության պատմություն» գիրքն է: Այստեղ սինթեզված է հայ վաղ միջնադարյան փիլիսոփայությունը երկու մեծանուն գիտնականների ըմբռնմամբ: Հետագայում Սուրբ Էջմիածինը վերահրատարակեց այդ աշխատությունն այլ անվան տակ, և, իհարկե՝ որոշակի փոփոխություններով:

Այսօրվա շնորհանդեսին ներկայացված են նրա երկու վերջին աշխատությունները: Առաջինը «Антология армянский педагогической мысли» աշխատությունն է: Մինչև այս աշխատության լույս տեսնելը մենք պրոֆեսոր Միրումյանի հետ շատ էինք զրուցել, և ինքը միշտ հիշատակում էր, որ աշխատանքն այս գրքի վրա ինքը սկսել է դեռ սովետական ժամանակնե-

րում, երբ սովետական ժողովուրդների մանկավարժական մտքի անթուղիան էր պատրաստում, որն այդպես էլ չի հրատարակվել, որքան հասկանում եմ, քաղաքական խնդիրների պատճառով, քանի որ հայ ժողովուրդն ունեցել է վիթխարի միտք, իսկ մնացածներն այդ դարերում ընդհանրապես ոչինչ չունեին:

Եվ պրոֆեսոր Միրումյանը միշտ ավստսանք էր հայտնում, որ այն վիթխարի աշխատանքը, որը նա կատարել էր, ի դեպ, միայնակ (իսկ անթուղիաները սովորաբար մի քանի հեղինակ է գրում) թույլ չէին տվել հրատարակել: Այնուամենայնիվ, նա ավարտեց դա: Եվ գիրքը մեր համալսարանի և Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի համատեղ ջանքերով տպագրվեց: Եվ մենք համարում ենք այն փայլուն պրեզենտացիոն նյութ, ոչ միայն մեր համալսարանի, կամ այլ գիտական հաստատության, այլ նաև մեր ազգային կերպարի համար:

Մյուս աշխատությունը, որն այսօր նույնպես ցուցադրված է, «Հայ քաղաքական միտքը» աշխատությունն է: Պրոֆեսոր Միրումյանի հետ իմ գրույցներում մենք հաճախ ենք խոսել այն մասին (և դա իր բոլոր աշխատություններում «կարմիր թելով», այսպես ասած, անցնում է), որ մեր սեփական քաղաքական մտքի իմացությունն այսօր խիստ արդիական է, որովհետև որոշակի ճգնաժամային մթնոլորտը, որը մենք ունենք, նաև գիտակցության, մշակույթի, ինքնության ինչ-որ ճգնաժամային դրսևորումները բերում են երբեմն ծայրահեղ դատողությունների, այդ թվում նաև մեր անցյալի մասին, և նման աշխատությունների առկայությունը մեզ ցույց է տալիս, որ պետք չէ այդ ծայրահեղ դատողություններն անել: Ընդ որում, պրոֆեսոր Միրումյանը միշտ ընդգծում էր մի շատ հետաքրքիր հանգամանք. այն փուլերում, երբ մենք չունեինք պետականություն, մենք փոր-

ձում էինք մեր գիտակցության մեջ, մշակույթի այդ բարձր մակարդակում կոմպենսացնել այն, ինչ չունեինք. չունենալով պետություն, մենք ստեղծեցինք փայլուն դատաստանագրքեր, «Որոգայթ փառացր», չունենալով պետություն, քաղաքական փայլուն մտածողներ ենք ունեցել: Եվ Միրումյանին միշտ պարադոքսալ էր թվում, որ ունենալով այսօր պետություն, մենք այս քաղաքական գիտակցության, մշակույթի և այլնի շերտը, կարծես թե, անտեսել ենք, և դրա զարգացման վրա կանգ չենք առնում:

Ընդ որում, «Անթուղիայի» մասին մի բան էլ ասեմ: Մեր Փիլիսոփայության ինստիտուտում սկսեցինք աշխատել նաև հայ փիլիսոփայական մտքի անթուղիայի վրա, արդեն մեծ խմբով, այդ թվում նաև ես էի ներառված: Ցավոք սրտի, այդ աշխատանքը հետո ինչ-որ պատճառներով չշարունակվեց: Եվ դա էլ է շատ ցավալի, քանի որ մենք վիթխարի փիլիսոփայական նյութ ունենք, որը ներկայացված չէ: Մի մասն ընդհանրապես թարգմանված չէ աշխարհաբար, և դա տարօրինակ է, քանի որ մենք ուզում ենք, որ մեզ ճանաչեն ուրիշները, բայց մենք մեզ չենք ճանաչում, և դա առավել ակտուալ է դառնում այսօր, քանի որ պրոֆեսոր Միրումյանի նմանների հեռանալով մենք կամաց-կամաց կորցնում ենք այդ կապը, ավանդույթը, որը պետք է փորձենք վերականգնել, պահպանել:

Պրոֆեսոր Միրումյանը, փաստորեն, ավարտել է Պավլիկյանության մասին իր նոր աշխատությունը: Եվ զուտ գիտական մեր վերջին խոսակցությունը եղել է հենց դրա մասին, երբ երկու ժամ շարունակ նա ոգևորված պատմում էր, թե ինչ նոր բան է գտել:

Տեղեկացնեմ նաև, որ տարեկան մեկ անգամ մեր ամբիոնը կանցկացնի միջոցառում, որը, ըստ երևույթի, կանվանենք «Միրումյանական ընթերցումներ», որը նվիրված կլինի հայագիտության լայն ընկալմանը, որովհետև պրո-

Ֆետոր Միրումյանը հայագետ էր հենց լայն, իսկական իմաստով:

Մենք այսօր հիմնականում զբաղված ենք հայանկարագրությամբ, իսկ պրոֆետոր Միրումյանը զբաղված էր հայագիտությամբ: Ինքն ուներ իր կոնցեպտուալ տեսությունները, որոնց վրա կառուցում էր մեր ազգի ամբողջ պատկերը: Գուցե դրանց հետ կարելի է չհամաձայնել, քննադատել, բայց Միրումյանն ուներ դա, իսկ մնացած դեպքերում, ցավոք, շատ հաճախ մենք ունենում ենք զուտ փաստերի թվարկում, ինչոր էլեմենտների նկարագրում, որոնք մեծ պատկերների մեջ չեն տեղավորվում, և համապատասխան արժեք չեն ներկայացնում: Ինքը պատասխանում էր «ինչու» հարցին, իսկ գիտությունը միայն այնտեղ է, որտեղ հարցի պա-

տասխանը միայն հարցի փաստի մեջ չէ, այդ հարցի պատասխանը տեսության մեջ է: Միրումյանն ուներ տեսական հիմքերը, որոնցով «ինչուներին» պատասխանում էր:

Խոսքի իմ մասը կավարտեմ հետևյալ բառերով. պրոֆետոր Միրումյանն իր՝ Շիրակացուն նվիրված աշխատության էպիգրամը դրել էր Շիրակացու հետևյալ միտքը. «Այն, ինչ ունի սկիզբ, հաստատ ունի ավարտ, սակայն մի բանի ավարտը մեկ այլ բանի սկիզբ է»: Ցավոք սրտի, իր երկրային կյանքը պարոն Միրումյանն ավարտեց, բայց ես հուսով եմ, որ նա դրեց նոր սկզբի հիմքերը, և մեր բոլորիս պարտքն է ստեղծել նորը և զարգացնել այն՝ իր կերտածի հիման վրա:



ПАРКЕВ АВЕТИСЯН

**Проректор по науке Российско-
Армянского (Славянского)
университета, к.ф.-м.н., д.ф.н.,
профессор, действительный
член РАЕН**

Профессор Мирумян был очень строг не только к своим студентам, но и ко всем коллегам, особенно в вопросах формулировки научного слова и научной мысли. Позвольте мне изложить некоторые идеи и мысли по поводу «Антологии» на русском языке. Хочу отметить, что эта публикация осуществлена на русском языке, и я считаю это правильным, потому что мир должен знать о развитии армянской педагогической мысли и понимать ее на разных языках, особенно на русском.

Именно наш университет тесно, напрочь связал меня с Карленом Артаваздовичем. На протяжении почти 20-ти лет было большой честью находиться рядом с ним, восхищаться его умозаключениями, получать огромное удовлетворение от его логической трактовки различных концептов, положений истории и философии развития армянской научной мысли и научной мысли вообще. Поэтому, конечно, трудно оценить научно-мыслительную деятельность профессора Мирумяна, учитывая его многогранную направленность, его изыскания в общественно-политической, естественно-научной, педагогической, философской областях, но смею утверждать, что он один из тех, кого можно величать концептуалистом.

Я специально акцентирую эту категорию: концептуалист в указанных областях науки. Мне действительно посчастливилось принять участие также в обсуждении этого прекрасного издания. Смею заметить, что мало найдется в огромной научной мысли в мировом срезе народов, которые сумели на протяжении последних двух тысячелетий создать уникальные педагогические концепции, подходы и мысли.

В «Антологии армянской педагогической мысли» впервые дается систематизация, документальная история становления и раз-

вития армянской просветительской педагогической мысли, начиная с древнейших времен до XVIII века, охватив практически всю школьную систему, учебно-образовательный процесс, формы, методы обучения (причем как в обычной школе, так и в высших школах), и, конечно, воспитание.

Представлены разные этапы этого исторического периода, где мы наблюдаем тесное переплетение педагогической мысли с развитием различных областей духовной культуры, философии и науки, которая составляет, по словам Валерия Брюсова, драгоценный вклад Армении в общую сокровищницу человечества. Карлен Мирумян считал (и мы приверженцы этого), что сказанное в полной мере относится и к сфере образования, школьной системе и, в целом, – просветительско-педагогической мысли.

В данной «Антологии» преимущественно представлены тексты из произведений выдающихся армянских ученых-просветителей, педагогов средних веков, – вплоть до XVIII века. Начиная с раннего Средневековья, от Григора Лусаворича, Месропа Маштоца, Корюна, Павстоса Бюзанда, Езника Кохбаци, Мовсеса Хоренаци, Давида Анахта, Анании Ширакаци, далее средневековый период: Григора Нарекаци, Нерсеса Шнорали, Мхитара Гоша, Киракоса Ганзакеси, Григора Татеваци, и XVII–XVIII вв.: Мхитар Себастици, Овсеп Эмин.

Надо отметить, что в эпоху Средневековья наблюдается тесная связь научно-педагогического и философского знания, принципов систематизации и классификации философии науки и структуры образовательной системы. Сложность данной проблематики и раскрытия исследования заключалась в том, что из огромного пласта разного рода материалов не просто нужно было осуществить должную подборку материалов относитель-

но разных аспектов образования: дидактики, школы. Дело в том, что концептуальные идеи педагогического характера встречаются у разных авторов на различных культурно-исторических этапах. Отмечу, что здесь, как коллеги уже отметили, есть непочатый край для арменоведческой науки, так как каждый срез этого периода представляет действительно место для изысканий как молодых исследователей, так и состоявшихся ученых. В этом трактате красной нитью проходит феномен культуры армянского народа как неотъемлемого компонента его исторического и национально-цивилизационного бытия. А, как известно, образование – это фундамент данной культуры, и высвечивание развития просветительской педагогической мысли проливает свет на все цивилизационное развитие армянского народа.

Профессор Мирумян очень четко реализовывает Марровский принцип: органический процесс развития Армении может быть прослеживаем, прежде всего, в пределах каждого отдельного периода. Функционирование любого общества и государства невозможно без должным образом налаженной системы образования и воспитания, обеспечивающей нравственно-духовное, интеллектуальное и профессиональное воспроизводство в обществе, формирующее гражданскую позицию членов этого общества. Именно педагогическая теория, как отмечал Карлен Мирумян, обеспечивает системность, связывает в единое целое государственные и образовательные задачи.

Но что мы можем отметить сейчас? К сожалению, практика реформирования системы образования в Армении, да и, в целом, на постсоветском пространстве, не учитывает или вообще отбросила педагогическую теорию, хотя именно сейчас – в переломный период общественно-национального развития – важна роль педагогических теорий и кон-

цепций. Уход от основополагающего принципа реформирования образования, а именно: сочетание традиций и новаций, демонстрирует несостоятельность и малоэффективность проводимых реформ. В итоге, мы пришли к некой, как говорил Карлен Мирумян, фрагментаризации не только приобретенных знаний, но и сознания, мышления в целом. Нарушен принцип фундаментальности в образовании, и, как итог, – выхолащивание самого содержания понятия «знание».

Возвращаясь к концептуальности Карлен Артаваздовича, я хочу еще раз отметить, что при дискутировании, обсуждении с Карленом Артаваздовичем, при его представлении в различных форматах в аудиториях, всегда наблюдался следующий подход: именно сохранение теоретического уровня рассмотрения проблемы и системность ее изложения, что, собственно говоря, было продемонстрировано при организации этой уникальной работы.

Знание конкретных фактов, фрагментов
– это еще не знание. Знание в своей
сущности – это системное, я бы сказал
синтетическое явление. Когда ты из
потока информации путем анализа и
синтеза, обобщения и концептуализации и
других научных методов выводешь что-
то, – вот это уже становится знанием.

К.А. Мирумян

ՊԱՐԳԵՎ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀՌՀ գիտության գծով պրոռեկտոր,
փ. գ. դ., ֆ.-մ. գ. թ., պրոֆեսոր**

Պարոն Միրումյանը շատ խստապահանջ էր ոչ միայն իր ուսանողների, այլ նաև իր բոլոր գործընկերների նկատմամբ, հատկապես գիտական բառի, գիտական մտքի ձևակերպման տեսակետից: Թույլ տվեք «Անթուրգիայի» վերաբերյալ որոշ գաղափարներ և մտքեր ես շարադրեմ ռուսերեն: Նշեմ, որ այս հրատարակությունն արվել է ռուսերեն լեզվով, և կարծում եմ, որ դա ճիշտ է, քանի որ աշխարհն առնվազն հայ մանկավարժական մտքի զարգացումից պետք է տեղյակ լինի և ընկալի տարբեր լեզուներով, հատկապես՝ ռուսերենով:

Հենց մեր համալսարանն էր, որ սերտորեն, ամբողջությամբ կապեց ինձ Կառլեն Արտավազդովիչի հետ: Շուրջ 20 տարի մեծ պատիվ էր լինել նրա կողքին, հիանալ նրա եզրակացություններով, մեծ բավականություն ստանալ տարբեր հասկացությունների, հայ գիտական մտքի և ընդհանրապես գիտական մտքի զարգացման պատմության և փիլիսոփայության դրույթների վերաբերյալ նրա տրամաբանական մեկնաբանություններից: Ուստի, իհարկե, դժվար է գնահատել պրոֆեսոր Միրումյանի գիտական և մտավոր գործունեությունը, հաշվի առնելով նրա բազմակողմանիությունը, նրա՝ հասարակական-քաղաքական, բնագիտական, մանկավարժական, փիլիսոփայական ոլորտներում հետազոտությունները, բայց ես համարձակվում եմ ասել, որ նա այն գիտնականներից մեկն է, ում կարելի է կոնցեպտուալիստ անվանել:

Ես հատուկ եմ շեշտում այս կատեգորիան՝ կոնցեպտուալիստ՝ գիտության նշված ոլորտներում: Ինձ իսկապես բախտ վիճակվեց մասնակցելու նաև այս հիանալի գրքի քննարկմանը: Համարձակվեմ նշել, որ համաշխարհային մակարդակով գիտական վիթխարի մտքում քիչ ժողովուրդներ կան, որ վերջին երկու հազարամյակի ընթացքում կարողացել են ստեղծել մանկավարժական յուրօրինակ հասկացություններ, մոտեցումներ և մտքեր:

«Հայ մանկավարժական մտքի անթուղ-գիայում» առաջին անգամ է համակարգվում և ներկայացվում հայ կրթական, մանկավարժական մտքի ձևավորումն ու զարգացումը՝ վավերագրական պատմություն հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դար՝ ընդգրկելով գրեթե ողջ դպրոցական համակարգը, ուսումնական գործընթացը, ձևերը, դասավանդման մեթոդները (ավելին, ինչպես սովորական դպրոցում, այնպես էլ բարձրագույն դպրոցներում), և, իհարկե, կրթությունը:

Ներկայացված են պատմական այս շրջանի տարբեր փուլեր, որտեղ նկատում ենք մանկավարժական մտքի սերտ միահյուսումը հոգևոր մշակույթի, փիլիսոփայության և գիտության տարբեր ոլորտների զարգացման հետ, ինչը, ըստ Վալերի Բյուսովի, Հայաստանի թանկարժեք ներդրումն է մարդկության ընդհանուր գանձարանում: Կառլեն Միրումյանը կարծում էր (և մենք համակարծիք ենք), որ ասվածը լիովին վերաբերում է կրթության ոլորտին, դպրոցական համակարգին և, ընդհանրապես, կրթական և մանկավարժական մտքին:

Այս «Անթուղգիայում» հիմնականում ներկայացված են ականավոր հայ գիտնականների, միջնադարի մանկավարժների ստեղծագործություններից տեքստեր՝ մինչև 18-րդ դարը: Սկսած վաղ միջնադարից՝ Գրիգոր Լուսավորչից, Մեսրոպ Մաշտոցից, Կորյունից, Փավստոս Բյուզանդից, Եզնիկ Կողբացուց, Մովսես Խորենացուց, Դավիթ Անհաղթից, Անանիա Շիրակացուց, դրան հաջորդող միջնադարից՝ Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Տաթևացի, և 17–18-րդ դդ.՝ Մխիթար Սեբաստացի, Հովսեփ Էմին:

Հարկ է նշել, որ միջնադարում գիտամանկավարժական և փիլիսոփայական գիտելիքները, գիտության փիլիսոփայության համակարգման և դասակարգման սկզբունքները և կրթական համակարգի կառուցվածքը սերտորեն

շաղկապված էին: Այս հարցի և ուսումնասիրման ու զարգացման բարդություններից մեկն այն էր, որ տարբեր տեսակի նյութերի հսկայածավալ շերտից պետք էր ոչ միայն կրթության տարբեր ասպեկտների վերաբերյալ՝ դիդակտիկա, դպրոց, պարզապես պատշաճ ընտրություն կատարել: Բանն այն է, որ մանկավարժական բնույթի հայեցակարգային գաղափարներ հանդիպում են տարբեր հեղինակների մոտ՝ մշակութային և պատմական տարբեր փուլերում: Նշեմ, որ այստեղ, ինչպես արդեն ընդգծել էին իմ գործընկերները, հայագիտության համար ուսումնասիրությունների վիթխարի դաշտ է բացվում, քանի որ այս շրջանի յուրաքանչյուր շերտն իսկապես հետազոտությունների մեծ դաշտ է բացում թե՛ երիտասարդ հետազոտողների, թե՛ կայացած գիտնականների համար:

Այս տրակտատում «կարմիր թելով» անցնում է հայ ժողովրդի մշակույթի ֆենոմենը՝ որպես նրա պատմական ու ազգային-քաղաքակրթական գոյության բաղկացուցիչ բաղադրիչ: Եվ ինչպես գիտեք, կրթությունն այս մշակույթի հիմքն է, և դաստիարակչական մանկավարժական մտքի զարգացումը կարևորելը լույս է սփռում հայ ժողովրդի ողջ քաղաքակրթական զարգացման վրա:

Պրոֆեսոր Միրումյանը շատ հստակ իրականացնում է Մարրի սկզբունքը. Հայաստանի զարգացման օրգանական ընթացքին կարելի է հետևել առաջին հերթին յուրաքանչյուր առանձին ժամանակահատվածում: Ցանկացած հասարակության և պետության գործունեությունն անհնար է առանց պատշաճ ձևավորված կրթության և դաստիարակչական համակարգի, որն ապահովում է հասարակության մեջ բարոյական, հոգևոր, մտավոր և մասնագիտական վերարտադրությունը, ինչը ձևավորում է այս հասարակության անդամների քաղաքացիական դիրքորոշումը:

Հենց մանկավարժական տեսությունն է, ինչպես նշում էր Կառլեն Միրումյանը, ապահո-

վում հետևողականությունը, պետական և կրթական նպատակները կապում մեկ ամբողջության մեջ:

Բայց ի՞նչ ունենք այսօր: Ցավոք սրտի, կրթական համակարգի բարեփոխման պրակտիկան Հայաստանում և, ընդհանրապես, հետխորհրդային երկրների տարածքում, հաշվի չի առնում կամ նույնիսկ անտեսում է մանկավարժական տեսությունը, թեև հենց հիմա՝ սոցիալական և ազգային զարգացման կրիտիկական շրջանում, մանկավարժական տեսությունների և հասկացությունների դերը կարևոր է:

Կրթության բարեփոխման հիմնարար սկզբունքից՝ ավանդույթների և նորարարությունների համակցումից շեղումը, ցույց է տալիս իրականացվող բարեփոխումների անհամապատասխանությունն ու անարդյունավետությունը: Արդյունքում հանգեցինք, ինչպես

Կառլեն Միրումյանն էր ասում, ոչ միայն ձեռք բերված գիտելիքների, այլև գիտակցության, ընդհանրապես՝ մտածողության մասնատվածությանը: Խախտվել է կրթության մեջ ֆունդամենտալության սկզբունքը, ինչի արդյունքում «գիտելիք» հասկացության բուն բովանդակությունը խեղաթուրվել է:

Վերադառնալով Կառլեն Արտավազդովիչի կոնցեպտուալությանը, ևս մեկ անգամ ուզում եմ նշել, որ Կառլեն Արտավազդովիչի հետ բանավիճելիս, քննարկելիս, նրա մտքերը լսարաններում տարբեր ձևաչափերով ներկայացնելիս միշտ պահպանվել է հետևյալ մոտեցումը. խնդրի դիտարկման տեսական մակարդակի պահպանում և դրա ներկայացման համակարգվածությունը, ինչն, ըստ էության, դրսևորվել է նաև այս եզակի աշխատանքի ստեղծման ընթացքում:

Те немногочисленные люди, которые
следуют своим принципам, с точки зрения
«нормальных» людей являются людьми
«ненормальными». Но именно эти
ненормальные люди являются критерием
человечности, принципиальности.
И как будто они появляются, чтобы
человечество не забывало, что эти
принципы существуют не на бумаге, не в
законодательных актах, а на самом деле.

К.А. Мирумян



Протоархимандрит ШАГЕ АНАНЯН

**Ректор Свято-Георгиевской
духовной семинарии**

Господин Мирумян был близок с Католиком более тридцати лет. Они знали друг друга со времен основания севанской школы «Вазгениян».

Позвольте мне в качестве управляющего семинарии сказать пару сердечных слов, кои являются скорее личным свидетельством о профессоре Мирумяне.

Как уже было отмечено, господин Мирумян внес важнейший, неоценимый вклад в становление Вазгениянской школы, а затем – в развитие предмета истории армянской философии в Геворгиянской семинарии. Естественно, что в 1992г. (в этом году исполнилось 30 лет) в семинарии и школе профессор Мирумян больше занимался разработкой теоретических, методологических и педагогических положений, необходимых для преподавания истории армянской философской мысли в таком уникальном учреждении, как школа или семинария. Я помню, когда господин Мирумян приходил в семинарию и школу «Вазгениян», он уставал (конечно, высокое место, проблема с давлением), но всегда говорил, что идет в очень важную лабораторию, потому что здесь он мог генерировать и концентрировать все мысли, которые возникали у него относительно национально-духовной культуры.

Это очень важно в том смысле, что подход господина Мирумяна к школе и семинарии был поставлен на уровень взаимодействия, потому что, с одной стороны, он не жалел сил и усердия для передачи своих знаний, с другой – в некотором смысле изобретательно, иногда также путем дискуссии, дебатов мог взять то, что впоследствии было выражено в его важных книгах и идеях. Говорю это не как впечатление, а как свидетельство, о котором он неоднократно говорил и делился как со своими студентами, так и со своими учениками.

Второй важной стороной пребывания Мирумяна в школе и семинарии было его непосредственное участие в организации учебно-воспитательного процесса.

В семинарии Мирумян также внес важный вклад в создание аспирантуры, и до недавнего времени он был членом профессионального совета, членом экзаменационной комиссии и, несмотря на злосчастную болезнь, надеялся, что поправится. Даже в таком состоянии он позвонил мне и сказал, что придет на экзамен, и это был последний раз, когда я его видел.

Он пришел, с честью и достоинством просидел на экзамене часа 2–3, принял вместе с нами экзамен, и я был просто поражен тем, как, несмотря на болезнь и сложнейшую си-

туацию, в которой может оказаться человек к концу жизни, он может проявить такую бесконечную преданность образованию и науке.

В этом смысле профессор Мирумян был не только теоретиком, идейным и методологическим новатором, о чем могут свидетельствовать мои однокурсники, учившиеся вместе со мной или старше меня, он был еще и примером жизни для всех, и он знал, что то, что он собирался сказать об идее, о методе, должен сначала осуществить в своей жизни. Большое спасибо за предоставленную мне возможность, и я не сомневаюсь, что высказанные здесь обещания и мысли, как важнейший фактор переосмысления и развития наследия Мирумяна, будут исполнены.

Տեր ՇԱՀԵ ծայրագույն վարդապետ ԱՆԱՆՅԱՆ

Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ

Պարոն Միրումյանը Վեհափառի հետ ուներ ավելի, քան 30 տարվա մտերմություն: Ճանաչում էին իրար դեռևս Սևանի Վազգենյան դպրանոցի հիմնադրման օրերից: Թույլ տվեք իբրև ճեմարանի ներկայիս տեսուչ սրտի խոսք ասել, որն ավելի շատ անձնական վկայություն է պրոֆեսոր Միրումյանի մասին:

Նշվեց, որ պարոն Միրումյանը շատ կարեվոր, անուրանալի ներդրում ուներ նախ Վազգենյան դպրանոցի կայացման, ապա հետո՝ Գևորգյան ճեմարանում, հայ փիլիսոփայության պատմության առարկայի զարգացման մեջ: Բնական է, որ 1992թ. (այս տարի լրացավ 30 տարին) պարոն Միրումյանը ճեմարանում և դպրանոցում ավելի շատ զբաղված էր տեսական, մեթոդաբանական և մանկավարժական այն դրույթների մշակմամբ, որոնք անհրաժեշտ էին դպրանոցի կամ ճեմարանի նման շատ յուրահատուկ հաստատությունում, ինչ-որ իմաստով գաղափարական առարկա՝ հայ փիլիսոփայական մտքի պատմություն դասավանդելու համար: Ես հիշում եմ, երբ պարոն Միրումյանը ճեմարան էր գալիս և Վազգենյան դպրանոց, հոգնում էր (իհարկե, բարձրադիր վայր, ճնշման խնդիր), բայց միշտ ասում, որ գալիս է շատ կարևոր մի լաբորատորիա, որովհետև այստեղ կարողանում էր գեներացնել, խտացնել այն բոլոր մտքերը, որոնք ունենում էր ազգային-հոգևոր մշակույթի մասին:

Սա շատ կարևոր է այն իմաստով, որ պարոն Միրումյանի մոտեցումը դպրանոցին և ճեմարանին փոխներգործության հարթության վրա էր տեղավորված, որովհետև նա ջանք ու եռանդ չէր խնայում փոխանցելու իր գիտելիքները, բայց ինչ-որ իմաստով հնարամտորեն, նաև երբեմն դեբատների, բանավեճերի միջոցով կարողանում էր վերցնել այն, ինչը հետագայում իր կարևոր գրքերում և գաղափարներում արտահայտվում էին:

Մա ես ասում եմ ոչ թե որպէս տպավորություն, այլ իբրև վկայություն, ինչի մասին բազմիցս նա խոսել է և կիսվել թե՛ իր ուսանողների, և թե՛ աշակերտների հետ:

Միրումյանի՝ դպրանոցում և ճեմարանում ներկայության երկրորդ կարևոր կողմը նրա անմիջական ներգրավածությունն էր ուսումնակրթական գործընթացի կազմակերպման հարցում: Ճեմարանում Միրումյանն ունեցավ իր կարևոր ներդրումը նաև ասպիրանտուրայի կայացման գործում, և մինչև վերջերս էլ նա մասնագիտական խորհրդի անդամ էր, քննություններ ընդունող հանձնաժողովի անդամ, և չնայած չարաբաստիկ հիվանդությանը, լավատեսություն ուներ, որ վերականգնվելու է: Նույնիսկ այդ վիճակում զանգեց ինձ և ասաց՝ գալու եմ քննությանը, և վերջին անգամն էր, որ ես տեսա իրեն:

Եկավ, շատ պատվախնդրորեն և արժանապատվորեն նստեց քննությանը մոտ 2-3 ժամ, մեզ հետ միասին ընդունեց քննություններ:

րը, և այդ ժամանակ ես ուղղակի ցնցված էի, որ հակառակ այն հիվանդությանը, այն ծանր վիճակին, որում մարդը կյանքի վերջում կարող է հայտնվել, նա այդպիսի անմնացորդ նվիրում կարող է դրսևորել կրթությանը և գիտությանը:

Այս իմաստով պարոն Միրումյանը ոչ միայն տեսական, գաղափարաբանական, մեթոդաբանական նորարար էր, ինչի մասին կվկայեն ինձ հետ սովորած կամ ինձնից ավագ իմ համշիրակ եղբայրները, նա նաև կյանքի օրինակ էր բոլորի համար, և գիտեք, որ այն, ինչ ինքը խոսելու էր գաղափարի, մեթոդի մասին, պետք է նախ և առաջ իրականացնի իր կյանքում: Շատ շնորհակալ եմ կրկին այս առիթն ընձեռելու համար և չեմ էլ կասկածում, որ այստեղ հնչեցված խոստումները և մտքերն ի կատար են ածվելու որպէս Միրումյանի թողած ժառանգության վերանայման և զարգացման կարևոր գործոն: Անհամբեր սպասում ենք պարոն Միրումյանի՝ արխիվում թողած ժառանգության հրատարակմանը և վերարժևորմանը:



ГЕВОРГ ПОГОСЯН

Президент Армянской социологической ассоциации, д. социол. н., профессор, действительный член НАН РА, иностранный член РАН

С 1978 года мы вместе работали в тогдашнем Институте философии, права и социологии. Карлен Мирумян был очень простым другом, с ним было нелегко, потому что он был очень строгим, бескомпромиссным в некоторых вопросах, но принципиальным, обладал концептуальным мышлением, был настоящим академиком, ученым-фундаменталистом.

Мы привыкли ценить наших старших после того, как они ушли, потом сожалеть, видя, какое наследие нам осталось, для которого нужны годы, чтобы его прочитать, узнать, дополнить, осмыслить, если сможем.

Если мы посмотрим на биографию Карлена Мирумяна, то это, как принято говорить на английском, “success story”, потому что он приехал в Ереван из далекого Кировабада и стал крупным ученым. Он полностью посвятил себя науке, он не создал семью, у него не было детей, но он всегда говорил, что его дети – это его книги, его любовь – это наука. Я, как социолог, плохо это понимаю, хотя думаю, что он имел право так говорить. Главным достоинством Карлена Мирумяна было то, что он был очень строг к себе, и это давало ему право быть строгим с другими, на что, конечно, многие жаловались.

Я помню много лет назад, когда мы разговаривали с заведующим кафедрой арменоведения нашей Академии – Бархударяном, он мне сказал: знаете, наши философы уже в преклонном возрасте, многие уезжают, некоторые уже состарились (например, Гамлету Геворкяну было за 90), пора уступить место новым философам и выдвинуть кандидатуры.

Я не успел назвать имя Карлена Мирумяна, как это первым сделал он, сказал, что Мирумян очень серьезный ученый, опубликовал много фундаментальных работ: «Думаю, было бы правильным избрать его членом-кор-

респондентом». Его избрали де-факто, оставалось оформить это де-юре, но наступил 2018 год, все изменилось, выборы в Академии так и не прошли, и Карлен остался избранным, но академиком.

То, что он сделал, является величайшим вкладом в историю армянской философии, и не только в философию, но и в политическую и общественную мысль в целом. Мирумян продолжил линию Вазгена Чалояна и Сена Аревшатяна, и мне очень жаль, что эта линия,

похоже, прервалась. Обычно говорят, что незаменимых людей нет, а оказывается, что они есть. Есть незаменимые ученые, которых очень трудно заменить. Я был бы рад, если бы молодежь, сидящая в зале, воодушевилась, занялась философией, культурой и попыталась заменить, пройти и сделать больше.

Карлен Мирумян уже сделал свое дело, нам остается только продолжить это дело и суметь показать свою силу.

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

**Հայկական սոցիոլոգիական
ասոցիացիայի նախագահ,
ս.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ իսկական
անդամ, Ռուսաստանի Դաշնության
Գիտությունների Ակադեմիայի
արտասահմանյան անդամ**

1978թ.-ից միասին աշխատել ենք այն ժամանակվա Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտում: Կառլեն Միրումյանը շատ բարդ ընկեր էր, իր հետ հեշտ չէր, քանի որ նա շատ խստապահանջ էր, չզիջող շատ հարցերում, բայց սկզբունքային էր, կոնցեպտուալ մտածելակերպ ուներ, իսկական ակադեմիական, ֆունդամենտալ գիտնական էր: Մենք սովոր ենք, որ մեր մեծերին իրենց գնալուց հետո ենք գնահատում, հետո ավստում, տեսնում, թե ինչ ժառանգություն է մնացել մեզ հասու, որի համար տարիներ են պետք, որ ժառանգությունը կարդանք, սերտենք, ավելացնենք, ընկալենք, եթե կարողանանք:

Եթե նայենք Կառլեն Միրումյանի կենսագրությանը, ապա այն, անգլերեն ասած, «success story»-ի է, քանի որ նա հեռավոր Կիրովաբադից եկավ Երևան և դարձավ խոշոր գիտնական: Ամբողջությամբ նվիրեց իրեն գիտությանը, ընտանիք չկազմեց, երեխաներ չունեցավ, բայց միշտ ասում էր, որ իր երեխաներն իր գրքերն են, իր սերը՝ գիտությունը: Սա ես՝ որպես սոցիոլոգ, լավ չեմ ընկալում, թեև կարծում եմ, որ նա իրավունք ուներ դա ասելու: Կառլեն Միրումյանի հիմնական առավելությունն այն էր, որ ինքն իր նկատմամբ էլ էր շատ խստապահանջ, և դա հնարավորություն էր տալիս ուրիշների նկատմամբ էլ լինել խստապահանջ, ինչից, իհարկե, շատերը դժգոհում էին:

Հիշում եմ, երբ տարիներ առաջ մեր Ակադեմիայի Հայագիտության բաժանմունքի ղեկավարի՝ Բարխուդարյանի հետ խոսում էինք, նա ասաց՝ զիտես, մեր փիլիսոփաները մեծացել են, շատերը գնում են, ոմանք էլ արդեն մեծ են (օրինակ, Համլետ Գևորգյանը 90-անց էր), ժամանակն է, որ նոր փիլիսոփաներին տեղ տանք ու թեկնածություններ առաջարկենք:

Ես չհասցրեցի ասել՝ Կառլեն Միրումյանին, առաջինն ինքն ասաց՝ շատ լուրջ գիտնա-

կան է, շատ հիմնարար աշխատություններ ունի տպագրված, կարծում եմ, որ ճիշտ կլինի իրեն ընտրենք որպես թղթակից անդամ: Դեֆակտո ինքն ինտրված էր, մնում էր դե-յուրե ձևակերպել, բայց եկավ 2018 թվականն, ամեն ինչ փոխվեց, Ակադեմիայում այդպես էլ ընտրությունները չեղան, և Կառլենը մնաց չընտրված, բայց ակադեմիկոս:

Այն, ինչն ինքը արել է, խոշորագույն ավանդ է հայ փիլիսոփայության պատմության և ոչ միայն փիլիսոփայության, այլ ընդհանրապես քաղաքական մտքի, սոցիալական մտքի համար: Այն գիծը, որը գալիս էր Վազգեն Զալո-

յանից, Սեն Արևշատյանից Միրումյանը շարունակեց, և ես ցավում եմ, որ այդ գիծը, կարծես թե, ընդհատվել է: Սովորաբար ասում են, որ անփոխարինելի մարդիկ չկան, բայց, պարզվում է՝ կան: Կան անփոխարինելի գիտնականներ, որոնց շատ դժվար է փոխարինել: Ես ուրախ կլինեի, որ դահլիճում նստած երիտասարդները ոգևորվեն, զբաղվեն փիլիսոփայությամբ, մշակույթով, և փորձեն փոխարինել, ավելին անել ու անցնել:

Կառլեն Միրումյանն իր գործն արդեն արել է, մեզ միայն մնացել է այդ գործը շարունակել և կարողանալ մեր ուժերը ցույց տալ:



ВАРДАН ДЕВРИКЯН

Директор института литературы
им. М. Абегяна НАН РА,
д. филол. н.

Хотя название нашего института – Институт литературы, господин Мирумян называл его «Литературоведческий институт». Он обладал таким междисциплинарным пониманием, что после философов могли говорить и литературоведы, и художники, и, в какой-то степени, даже историки. Одно из первых его произведений – «Мировоззрение Любомудрия Ованеса Саркавага» – также имеет большое значение с точки зрения изучения истории армянской литературы, поскольку средневековая натурфилософия в равной степени нашла отражение в произведениях армянских средневековых авторов и явилась теоретической основой, что стало поводом для анализа ряда художественных произведений.

У Дмитрия Лихачева есть такая идея: «Даже в основе эстетики должна лежать текстологическая и источниковологическая база». Иными словами, человек не должен высказывать мысли из головы (иногда многие философы делают именно так, высказывают то, что у них в голове), а это должно быть теоретически обоснованным и иметь источниковедческую основу, лучшим примером чего был господин Мирумян. И не случайно, что Карлен Мирумян был одним из самых частых посетителей Матенадарана, и много лет подряд мы встречались именно там.

У классика марксизма была такая мысль (пусть и в отрицании, но в рамках философской характеристики): «Средневековая философия была служанкой богословия». И действительно, очень трудно определить границу между тем, что есть теология, и тем, что есть философия, особенно если это не относится к трудам античных авторов. Можно сказать, что Карлену Мирумяну и Сену Аревшатыану удалось показать философские категории, где теология выступала как философия, или философия проявляла себя в своих формах. Надо сказать, что это – каверзный вопрос, и в случае с армянской средневековой литерату-

рой всегда возникает вопрос, что есть литература, а что – рукопись.

Есть такое понимание, что литература – это то, что имеет внутреннего героя и чувство, а рукопись – то, что не имеет внутреннего героя (автора) и чувства. Например, Нерсес Шнорали в своих тагах выражал ликование в связи с рождением Христа. В своих выступлениях Григор Татеваци объясняет, почему Христос родился и зачем пришел в мир. Поэтому Татеваци не является частью армянской литературы, а Шнорали – является.

Естественнонаучные, эстетические, философские постановки вопросов Карлена Мирумяна помогли нам найти предел того, до какой степени средневековые рукописи могут быть представлены как литература. Должен сказать, что и Карлен Мирумян, и Сен Аревшатыан являются авторами первых 2-х из наших 6-ти томов, и я полагаю, что они останутся таковыми и в будущих очерках по истории армянского искусства и истории армянской эстетической мысли.

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

**ՀՀ ԳԱՍ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի
տնօրեն**

Չնայած, որ մեր ինստիտուտի անունը Գրականության ինստիտուտ է, բայց պարոն Միրումյանն ասում էր Գրականագիտության ինստիտուտ: Ինքն այնպիսի միջգիտակարգային ընգրկում ուներ, որ փիլիսոփաներից հետո երկրորդը կարող էին խոսել թե՛ գրականագետները, թե՛ արվեստագետները, ինչ-որ տեղ նաև պատմաբանները: Նրա առաջին ստեղծագործություններից՝ Հովհաննես Սարկավագի իմաստասերի աշխարհայացքը, մեծապես կարևորվում է նաև հայ գրականության պատմության ուսումնասիրման առումով, որովհետև միջնադարյան բնափիլիսոփայությունը հավասարապես արտացոլվել է հայ միջնադարյան հեղինակների ստեղծագործություններում, և դա այն տեսական հիմքն էր, որն առիթ էր դառնում մի շարք գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծության համար:

Դմիտրի Լիխաչովն այսպիսի մի միտք ունի. «Անգամ գեղագիտությունը տեքստանաբանական և աղբյուրաբանագիտական հիմք պետք է ունենա»: Այսինքն՝ մարդ ոչ թե իր գլխից խոհեր պետք է դուրս տա (երբեմն շատ փիլիսոփաներ հենց այդպես էլ հասկանում են, որ պետք է իրենց գլխի մտածածներն ասեն), այլ որ դա պետք է լինի տեսական, աղբյուրագիտական հիմք ունենա, որի լավագույն ներկայացուցիչներից էր պարոն Միրումյանը: Եվ պատահական չէ, որ Կառլեն Միրումյանը Մատենադարանի, կարելի է ասել, ամենահաճախ եկող ընթերցողներից էր, և երկար տարիներ մենք այնտեղ ենք հանդիպել:

Մարքսիզմի դասականն այսպիսի մի միտք ուներ (թեկուզ ժխտողականության մեջ, բայց փիլիսոփայության բնորոշմամբ). «Միջնադարյան փիլիսոփայությունը, աստվածաբանության աղախինն էր»: Եվ իրապես, շատ դժվար է որոշել այդ սահմանը՝ որն է աստվածաբանությունը, որն է փիլիսոփայությունը,

հատկապես, եթե դա չի վերաբերում անտիկ հեղինակների գործերին: Կարելի է ասել, որ Կառլեն Միրումյանը և Սեն Արևշատյանը կարողանում էին ցույց տալ այն փիլիսոփայական կատեգորիաները, որտեղ աստվածաբանությունը հանդես էր գալիս որպես փիլիսոփայություն կամ փիլիսոփայությունը դրսևորվում էր իր ձևերի մեջ: Պետք է ասել, որ սա մի կարևոր հարց է, և հայ միջնադարյան գրականության դեպքում միշտ ծառանում է այն հարցը, թե որն է գրականությունը, իսկ որն է մատենագրությունը:

Այսպիսի ըմբռնում կա, որ գրականությունն այն է, ինչ ունի ներքին հերոս և զգացում, իսկ մատենագրությունը այն է, որը չունի ներքին հերոս (հեղինակ) և զգացում: Օրինակ, Ներսես Շնորհալին իր տաղերում իր ցնծությունն էր հայտնում, որ Քրիստոսը ծնվեց: Գրիգոր Տա-

թևացին իր ճառերում բացատրում է, թե ինչի Քրիստոսը ծնվեց ու ինչի աշխարհ եկավ: Դրանով է այդ տարբերությունը, որ Տաթևացին ինչոր տեղ հայ գրականության մաս չի կազմում, իսկ Շնորհալին հայ գրականության մասն է:

Կառլեն Միրումյանի բնագիտական, էսթետիկական, փիլիսոփայական այդ հարցադրումները գալիս էին մեզ օգնելու գտնել այն սահմանը, թե ինչ չափով պետք է ներկայացվի միջնադարյան մատենագրությունը որպես գրականություն: Պետք է ասեն, որ թե՛ Կառլեն Միրումյանը և թե՛ Սեն Արևշատյանն այս մեր 6 հատորներից առաջին 2-ի հեղինակներն են, և ես կարծում եմ, որ նրանք կշարունակեն նույնը լինել թե՛ հայ արվեստի պատմության, թե՛ հայ գեղագիտական մտքի պատմության հետագա շարադրանքներում:



ЭДИК МИНАСЯН

**декан исторического факультета
Ереванского государственного
университета, д. и. н., профессор**

Должен отметить, что у таких очень важных научных конференций есть одна цель: не только представить богатейшее научное наследие, но и в своих дальнейших научных работах еще больше осмыслить и углубить концептуальные принципы той или иной личности.

Должен отметить, что я давно знаком с Карленом Мирумяном, и мы были настоящими друзьями: и спорили, и обсуждали. Он также много лет преподавал историю армянской философской мысли в ЕГУ (не только на факультете философии и психологии, но и на факультете истории). Надо сказать, что свои фундаментальные, концептуальные знания он излагал своим студентам очень подробно, и неслучайно, что он был одновременно строг, последователен и, в то же время, справедлив. Студенты его очень любили.

Любили за его бескрайние знания, любили за дискуссионные обсуждения. Очень часто обсуждения продолжались в коридорах. Я никогда не забуду, это было за 2 месяца до его смерти, когда он приезжал ко мне (я не видел Мирумяна один-два года). Он похудел. Мирумян принес мне свою книгу «История армянской политической мысли», изданную на русском языке. Мы с удовольствием сели за обсуждение. В нем словно полыхал огонь, и он сказал, что принес книгу, чтобы подарить мне, потому что это история – переосмысление всего исторического процесса, от начала и до наших дней.

Мы обсуждали различные темы исторического характера, и, действительно, эта внушительного объема, мощная книга, характеризующая его как личность, и при презентации которой мы присутствуем сегодня, надо сказать, очень удачная книга, великолепный труд, произведение крупнейшего представителя науки. Книга, которая представляет собой политическую мысль, от начала и почти до наших дней, с непосредственным изображением политических переходных событий.

Нынешние политические процессы в ней также есть. Он действительно разработал методологию нашей отечественной истории. Не случайно, многие его работы служат основой для теоретических, исторических и критических подходов к армянской национальной идеологии, а не только к истории армянской культуры, духовным представлениям в целом, от языческого периода до наших дней, оценки политической мысли в полной мере представлены в его произведениях.

Здесь было представлено великое наследие, которое он оставил. Экспертный анализ полных собраний сочинений показывает, что мы имеем дело с сильнейшей научной личностью, гением научной мысли, титаном теоретической мысли. Наряду с теоретическими основаниями и анализом он был человеком с концептуальным мышлением. И представление идеологии Павликианского движения в

новой форме и интерпретации – лучшее тому доказательство.

Когда я позвонил ему и сказал, что прочитал книгу и был поражен концептуальным и методологическим характером поставленных вопросов, он сказал, что это – результат его многолетних размышлений.

И, действительно, мы имеем дело с лучшим мыслителем, величайшим ученым, и главным уроком сегодняшнего мероприятия должно стать дальнейшее изучение и углубление его важнейших идей. Я уверен, что в ЕГУ, именно на факультете Философии, есть такие студенты. Перед приездом сюда я беседовал с Багдасаряном и Сейраном Закарян, и мы пришли к выводу, что действительно эти студенты должны изучать и развивать лучшие работы Карлена Мирумяна и создавать на их основе новые научные труды. Это – главный урок.

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

**ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,
պ. գ. դ., պրոֆեսոր**

Պետք է նշեմ, որ գիտական նման շատ կարևոր կոնֆերանսները մի նպատակ ունեն. ոչ միայն գիտական շատ հարուստ ժառանգությունը ներկայացնելու, այլ նաև տվյալ անձնավորության և նրա ուղենշած կոնցեպտուալ սկզբունքները հետագայում նաև է՛լ ավելի իմաստավորելու և խորացնելու իրենց գիտական աշխատանքներում:

Նշեմ, որ Կառլեն Միրումյանին վաղուց եմ ճանաչում, և մենք իսկապես ընկերություն էինք անում. և՛ բանավիճում, և՛ քննարկումներ անում: Նաև երկար տարիներ ԵՊՀ-ում (ոչ միայն փիլիսոփայության և հոգեբանության, այլ նաև պատմության ֆակուլտետում) դասավանդել էր հայ փիլիսոփայության մտքի պատմությունը: Նշեմ, որ իր սկզբունքային, կոնցեպտուալ գիտելիքները խորությամբ ներկայացնում էր իր ուսանողներին, և պատահական չէ միաժամանակ նրա խստապահանջությունը, հետևողականությունը, արդարամտությունը: Ուսանողները շատ էին սիրում նրան:

Միրում էին նրա ծով գիտելիքների համար, սիրում էին բանավիճային քննարկումների համար: Շատ հաճախ միջանցքներում էլ բանավեճերը շարունակում էին: Ես երբեք չեմ մոռանա. մահից 2 ամիս առաջ էր, երբ նա այցելեց ինձ (ես Միրումյանին 1-2 տարի է, ինչ չէի տեսել)... նիհարել էր: Բերել էր իր գիրքն ինձ նվիրելու՝ ռուսերեն հրատարակած «Հայ քաղաքական մտքի պատմությունը»:

Ուրախությամբ նստեցինք քննարկման: Նրա մեջ ուղղակի կրակ էր կարծես եռում, և ասեց, որ հատուկ է բերել այդ գիրքն ինձ նվիրելու, քանի որ սա պատմությունն է, պատմական ամբողջ անցուդարձի վերաիմաստավորում՝ սկզբից մինչև մեր օրեր: Մենք պատմական բնույթի տարբեր թեմաներով էինք քննարկումներ անում, և իսկապես այդ վիթխարածավալ և հզոր, իբրև անհատականություն նրան ներկայացրած գիրքը, որի շնորհանդեսն է այսօր, ես պետք է ասեմ, որ շատ հաջողված գիրք է, հոյա-

կապ աշխատություն, գիտական հզոր անհատականության ստեղծագործություն, որտեղ ներկայացված է քաղաքական միտքը, սկզբից գրեթե մինչև մեր օրերը՝ քաղաքական անցուդարձի, իրադարձությունների անմիջական ներկայացմամբ:

Քաղաքական ներկայիս անցուդարձը նույնպես այստեղ կա: Նա իսկապես մեր ազգային պատմության մեթոդաբանությունն է մշակել: Պատահական չէ, որ նրա աշխատություններից շատերը հայոց ազգային գաղափարախոսության տեսական, պատմական, քննադատական այդ մոտեցումների հիմքերը տալիս են, և ոչ միայն հայ մշակույթի պատմությունը, հոգևոր ընկալումներն ամբողջությամբ, հեթանոս շրջանից սկսած մինչև մեր օրերը, քաղաքական մտքի գնահատականները նրա մոտ ամբողջացված ներկայացված են աշխատություններում:

Այստեղ ներկայացվեց նրա թողած հզոր ժառանգությունը: Ամբողջական աշխատությունների քննական վերլուծությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք գիտական հզոր անհատականության, գիտական մտքի հանճարի, տեսական մտքի տիտանի հետ: Տեսական

հիմնադրություններով, վերլուծություններով հանդերձ նա կոնցեպտուալ մտածողության տեր անձնավորություն էր: Պավլիկյան շարժման գաղափարախոսությունը նոր ձևերով և ընկալումներով ներկայացումը, դրա լավագույն վկայությունն է:

Երբ ես նրան զանգեցի և ասեցի, որ գիրքն ընթերցել եմ և զարմացած եմ նրա այդ հարցադրումների կոնցեպտուալության և մեթոդաբանության վրա, նա ասեց, որ նրա՝ տարիների ընթացքում մտածողության արգասիքն է դա:

Եվ իսկապես, մենք գործ ունենք լավագույն մտածողի, մեծավաստակ գիտնականի հետ, և այսօրվա այս միջոցառման գլխավոր դասը պետք է լինի նրա այդ կարևորագույն ուսմունքների հետագա ուսումնասիրումը և խորացումը: Ես վստահ եմ, որ ԵՊՀ-ում հենց փիլիսոփայության ֆակուլտետում էլ կան նման ուսանողներ: Այստեղ գալուց առաջ զրուցել եմ Բաղդասարյանի հետ, Մեյրան Զաքարյանի հետ, և մենք եկել ենք այն եզրակացության, որ իսկապես, որ Կառլեն Միրումյանի լավագույն գործերն այդ ուսանողները պետք է, անշուշտ, ուսումնասիրեն, խորացնեն և դրա հիման վրա նաև հետագայում գիտական նոր աշխատություններ ստեղծեն: Սա է գլխավոր դասը:



ВАГЕ ТОРОСЯН

**Ученый секретарь библиотеки
Матенадарана им. Месропа Маштоца**

Безусловно, связь между Карленом Мирумяном и библиотекой Матенадарана очень глубока, и эта связь была очень крепкой, очень устойчивой, учитывая тот факт, что его научным руководителем был бессменный директор Матенадарана академик Сен Аревшатян. По моим сведениям, между Аревшатыном и Мирумяном была связь (г-жа Ширинян также подтвердит) не только как научного руководителя и ученика, но и как больших друзей, и это уже переросло в дружбу между семьями, о чем г-н Мирумян упоминал каждый раз, когда приезжал в библиотеку, проводил там исследования, каждый раз вспоминая Сена Аревшатяна.

И не случайно, когда мы недавно отмечали 90-летие академика, мы все сошлись во мнении, что Карлен Мирумян должен принять самое активное участие в работе. Я также имел честь позвонить ему, обсудить эту тему, и был очень рад видеть большой энтузиазм, с которым г-н Мирумян участвовал в работе конференции, а затем и в издании сборника.

Я имел счастье быть знакомым (как и присутствующие здесь) с Карленом Мирумяном, пусть и непродолжительное время, хотя слышал о нем еще до преподавания в семинарии. Несколько лет назад я получил задание написать о принятии христианства на государственном уровне в академическом много-томном журнале по истории Армении. Я боялся, потому что это была очень сложная тема, в том числе и с точки зрения формулировки, и я постоянно искал работы, которые помогли бы мне, подтолкнули меня к написанию статьи, поскольку надо было учесть и подчеркнуть политическую значимость этой темы.

К величайшему счастью, я нашел в сборнике «Армения и христианский Восток» статью нашего великого ученого «Национально-

политическая проблематика государственного принятия христианства», где нашел именно те основания, которые воодушевили меня и помогли мне наконец написать эту статью. Гораздо больше меня порадовало то, что я представил на суд г-на Мирумяна уже напечатанный вариант статьи, и, не считите за нескромность, получил похвалу.

За время этих коротких, но таких содержательных встреч с ним я отметил для себя несколько особенностей, о которых постараюсь рассказать очень кратко. Одной из таких была его принципиальность во всех аспектах – как в науке, так и даже в политических взглядах. Безусловно, достойно восхищения глубокое знание истории, особенно армянского Средневековья.

Поражал и удивлял также его принцип учитывать мнение каждого. Опять же, для меня было большим удовольствием и ответственностью получить предложение прочитать и прокомментировать том по истории политической мысли перед его публикацией. И в этом случае я тоже боялся, что сказать великому ученому, потому что считаю, что его труды очень основательны, и там очень мало, что можно предложить, либо же сделать какие-то замечания, на что я уж точно не имел права. Но я был польщен и осмелел, когда он призвал меня обязательно прочитать работу и сказал, что очень ценит мнение каждого.

Хочу отметить еще один эпизод, который был своего рода проявлением его патриотизма в науке. Он спросил меня, когда в историографии датируется основание царства Аршакидов, я же ответил, что, согласно принятой версии, в 66 году. Он же в свойственной ему манере извинился (он много употреблял слово «извини») и возразил: «Но разве это не было в 54 году? Трдат же уже был армянским царем, почему бы вам все это не изменить, почему вы сокращаете провозглашение царства на 12 лет?»

Вроде бы мелочь, но в ней, естественно, выразились его научные принципы, патриотизм как в его научной жизни, так и в его общении со всеми нами, и в его работе. От имени дирекции Матенадарана им. Месропа Маштоца также приветствую всех присутствующих, так как Карлен Мирумян был очень связан с Матенадараном.

Мы всегда были приятно удивлены, когда встречали г-на Мирумяна довольно поздно в читальном зале Матенадарана в 20:00–20:30 (читальный зал Матенадарана работает до 21:00 вечера). Я был очень рад видеть его там и всегда просил его позвонить перед приездом, чтобы у меня была возможность хотя бы 1–2 часа на проведение личной беседы с ним. Эту возможность он щедро предоставлял как мне, так и многим его друзьям, которые сегодня находятся в Матенадаране, творят и, наверняка, помнят и будут помнить его.

ՎԱՀՇԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Մ. Մաշտոցի անվան մատենադարանի գիտական քարտուղար

Մատենադարանի և Կառլեն Միրումյանի կապը շատ ամուր է եղել, շատ հաստատուն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա գիտական ղեկավարը եղել է մատենադարանի երկարամյա տնօրեն, երջանկահիշատակ ակադեմիկոս Սեն Արևշատյանը։ Կապը, իմ տեղեկությամբ, տիկին Շիրինյանը ևս կվկայի, այստեղ ոչ միայն գիտական ղեկավարի և աշակերտի, այլև մեծ բարեկամի և արդեն դա վերածվել էր ընտանիքներով բարեկամության, որն արտահայտվում էր պարոն Միրումյանի՝ ամեն անգամ Մատենադարան գալով, այնտեղ ուսումնասիրություններ կատարելով, Սեն Արևշատյանին ամեն անգամ հիշելով։

Եվ պատահական չէ, որ երբ մենք վերջերս նշում էինք ակադեմիկոսի 90-ամյակը, բոլորս միակարծիք էինք, որ աշխատանքներին ամենաակտիվ մասնակցությունը պետք է ունենա Կառլեն Միրումյանը։ Ես նաև պատիվ ունեցա նրան զանգահարելու, խոսելու այդ թեմայով և շատ ուրախ էի այն մեծ ոգևորությունը տեսնել, որով պարոն Միրումյանը մասնակցում էր գիտաժողովին, այնուհետև ժողովածուի հրատարակմանը։

Այստեղ ներկաները, ես էլ բարեբախտություն եմ ունեցել, թեկուզ կարճ ժամանակում ճանաչելու պարոն Միրումյանին, չնայած ես նրա մասին լսել էի ավելի վաղ, քան ճեմարանում դասավանդելը։ Տարիներ առաջ հանձնարարություն ստացա գրել Քրիստոնեության պետականորեն ընդունման մասին Հայոց պատմության ակադեմիական բազմահատորյակում։ Երկյուղ ապրեցի, որովհետև շատ բարդ թեմա էր, նաև հնչեղությունը հաշվի առնելով, և անընդհատ փնտրում էի աշխատություններ, որոնք ինձ կօգնեին, կխրախուսեին հաշվի առնելու, որ պետք է գրվեր այդ թեմայի քաղաքական կարևորությունը։

Մեծագույն բարեբախտություն էր, որ «Հայաստանը և քրիստոնյա արևելքը» ժողովածուի մեջ գտա մեր մեծավաստակ գիտնականի հող-

վածը «Քրիստոնեության պետականորեն ընդունման ազգային-քաղաքական խնդրակարգը» վերնագրով, որտեղ գտա այն հիմքերը, որոնք ինձ խրախուսեցին, օգնեցին ի վերջո շարադրելու այդ պատմությունը: Շատ ավելի ուրախ էի, որ արդեն տպագրված տարբերակով հանձնեցի պարոն Միրումյանի դատին և, անհամեստություն չթվա, արժանացա գովասանքի:

Նրա հետ կարճ ժամանակի, բայց նաև բովանդակալից այդ շփումներում առանձնացրել եմ մի քանի հատկանիշ, որոնց մասին շատ կարճ կփորձեմ խոսել: Դա նրա սկզբունքայնությունն էր, բնականաբար նորույթ չեմ ասի, բոլոր առումներով՝ թե՛ գիտության մեջ, թե՛ անգամ քաղաքական հայացքներում: Լինելով փիլիսոփա, նա զարմացնում և ապշեցնում էր պատմագիտական իր խորը, հատկապես հայոց միջնադարի, գիտելիքներով: Անշուշտ հիացմունքի է արժանի նրա՝ յուրաքանչյուրի կարծիքի հետ հաշվի նստելու սկզբունքը:

Կրկին մեծ երջանկություն և պատասխանատվություն էր մինչև հրատարակվելը քաղաքական մտքի պատմության հատորը կարդալու և կարծիք արտահայտելու նրա առաջարկը: Այս դեպքում էլ նույնպես երկյուղած էի, թե ի՞նչ պետք է ասեմ մեծավաստակ գիտնականին, որովհետև կարծում եմ, որ նրա գործերը շատ հիմնավոր են և այնտեղ դիտողություն անելու, առաջարկություն անելու շատ քիչ բան կա, և վստահաբար ինձ չէր, որ վերապահված էր այդ իրավունքը: Բայց շոյվեցի և համարձակությունս ավելի ամրապնդվեց, երբ հորդորեց անպայման կարդալ և ասելով, որ շատ կարևորում է յուրաքանչյուր կարծիք:

Ես ընդամենը մեկ դրվագ կուզեմ նշել: Դա նաև գիտության մեջ նրա հայրենասիրության դրսևորումն էր ինչ-որ առումով: Ինձ հարցրեց, թե պատմագիտության մեջ երբ է թվագրվում Արշակունյաց թագավորության հիմնադրումը, ես ընդունված տարբերակով պատասխանեցի՝ 66թ., և իրեն բնորոշ ձևով ասեց. «Կներես (շատ էր օգտագործում այդ բառը), բայց չէ՞ որ 54թ. արդեն Տրդատը հայոց թագավոր էր, ինչու՞ չէք փոխում այդ ամենը, ինչու՞ եք 12 տարով պակասեցնում թագավորության հռչակումը»:

Թվում է, թե մանրուք է, բայց բնականաբար դա արտահայտում էր նրա գիտական սկզբունքայնությունը, հայրենասիրությունը, ինչպես նրա գիտական կյանքում, այնպես էլ բոլորիս հետ շփումներում և ստեղծագործության մեջ:

Ձեզ եմ փոխանցում նաև մաշտոցյան Մատենադարանի տնօրինության ողջույնը ներկաներին, քանի որ Կառլեն Միրումյանի կապը Մատենադարանի հետ բավականին սերտ էր, և մենք միշտ հաճելիորեն զարմանում էինք, երբ բավականին ուշ ժամի՝ 20.00-20.30-ին (իսկ Մատենադարանի ընթերցասրահը աշխատում է մինչև ժամը 21.00-ը) հանդիպում էինք պարոն Միրումյանին ընթերցասրահում: Ես անչափ ուրախ էի իրեն այնտեղ տեսնելով, և միշտ խնդրում էի գալուց առաջ զանգահարել, որպեսզի հնարավորություն ունենայի նրա հետ առանձին գոնե 1-2 ժամ զրուցելու: Նա շոյալորեն տալիս էր ինձ այդ հնարավորությունը, ինչպես նաև իր շատ ընկերներին, ովքեր այսօր Մատենադարանում են, ստեղծագործում են և վստահաբար հիշում են ու կհիշեն նրան:



ВАЛЕРИЙ ПОГОСЯН

**Бывший судья
Конституционного суда РА**

С Карленом Мирумяном мы знакомы более 40 лет, мы успели подружиться, сблизиться, работать вместе, и это мне очень помогло, и я многому у него научился. Мирумяна я знал еще со времен аспирантуры, но как автора (я работал в редакции Энциклопедии и, естественно, имел дело с философами, у которых заказывал статьи для энциклопедии). Он в то время был неизвестен, он был незнаком публике, тем более в редакции Энциклопедии, но, поскольку у меня были влиятельные советники, они говорили мне, к кому обращаться по данной статье, кого идентифицировать как автора.

Советниками были известные философы Гамлет Геворкян, Сен Аревшатян, Сурен Аветисян и другие. По их совету я пригласил Мирумяна как автора статьи и заказал у него много статей. После этого, уже на основе взаимного признания, мы продолжали работать вместе, начиная с 70-х годов и до последнего времени. Трудно говорить о проблемах, которые он затрагивал, потому что их очень много. Когда мы говорим «философия», я, прежде всего, имею в виду историю философии. Историк философии, такой, как Карлен Мирумян, страшное явление, в том смысле, что, хочет он этого или нет, он изучает многие области: науку, общество и т.д.

Не случайно и политическая наука, и педагогика, и культура, и история синтезируются и соединяются в философии, и философ самостоятельно иногда отклоняется то туда, то обратно, но остается в философии. Поскольку только что было сказано о годе коронации Трдата Первого, мы с Карленом Мирумяном много говорили об этой теме. Я вижу большую проблему, и что-то подсказывает мне, что мы и наша историография все еще находимся в плену европоцентризма.

Почему Трдат Первый упоминается как царь с 66 г. н.э.? Потому что историки Древ-

него Рима так считали, а мы остались в плену у их мнения. Я был просто поражен, когда прочитал, что Франсуа Рабле писал о Трдате I. Когда Нерон принял Трдата, он принял его не на коронации. Ему нужно было, чтобы Трдат стал его союзником, его другом, и он был объявлен другом и союзником Рима. Другими словами, Нерон не чтит Трдата, а готовил себе почву для того, чтобы иметь дружественное государство, с которым он мог бы установить отношения. То есть Трдат I был субъектом, а не объектом для Рима, о чем Рим прекрасно знал. Эти европоцентристские подходы не позволяют нам правильно оценивать собственную историю.

В своей последней работе Мирумян много внимания уделил политической концепции, которой руководствовались армяне на протяжении всей своей истории, основой которой была культура. Государство считалось сильным, прежде всего, не оружием, а культурой, а под «культурой» мы понимаем все, что создал народ в ходе своего духовного развития. Карлен Мирумян подчеркивает здесь этот факт. Тигран Великий довольно основа-

тельно ввел эллинизм. В наших учебниках мы будем понимать эллинизм как греческий, но он – наш, армянский, представляет собой синтез. Это возможно, когда у вас уже есть культура, при встрече двух культур не ваша культура переходит в другую, а другая приходит и входит в вашу культуру.

Все это привело к тому, что армянская духовная культура смогла стать мощным фактором формирования, укрепления и развития государства. Карлен Мирумян подчеркивает эту мысль, начиная с Тиграна Первого, на протяжении нескольких столетий. Поэтому и сегодня это понимание должно стать для нас ориентиром, уроком истории, которому мы должны следовать. Сегодня, если мы спросим, что нужно для создания сильного государства, то первым назовут армию и экономику, но никто не упомянет культуру и ее значение. Без культуры не может быть и речи о могучем государстве.

Этому нас учит Мирумян, и мы должны суметь воспользоваться оставленным им наследием, набраться мудрости, чтобы двигаться вперед.

ՎԱՆԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի նախկին դատավոր

Ավելի քան 40 տարի է Կառլեն Միրումյանի հետ ծանոթ եմք, հասցրեցինք ընկերանալ, մտերմանալ, համատեղ աշխատել և դա մեծապես օգնեց ինձ ու նրանից շատ բան սովորեցի: Միրումյանին գիտեի դեռևս ասպիրանտ լինելու ժամանակից, բայց իրեն որպես հեղինակ (ես աշխատում էի հանրագիտարանի խմբագրությունում և բնականաբար գործ ունեի փիլիսոփաների հետ, որոնց պատվիրում էի հոդվածներ հանրագիտարանի համար): Այն ժամանակ նրան դեռ չէին ճանաչում, անհայտ էր հասարակության համար, առավել ևս հանրագիտարանի խմբագրությունում, բայց քանի որ ես ունեի հզոր խորհրդատուներ, այդ խորհրդատուներն էին ինձ ասում, թե տվյալ հոդվածի համար ում դիմեմ, ում հեղինակ ճանաչեմ:

Խորհրդատուներն էին հայտնի փիլիսոփաներ Համլետ Գևորգյանը, Մեն Արևշատյանը, Սուրեն Ավետիսյանը և այլք: Նրանց խորհրդով Միրումյանին հրավիրեցի որպես հոդվածի հեղինակ և նրան բազմաթիվ հոդվածներ պատվիրեցի: Դրանից հետո արդեն համատեղ ճանաչելիության հիման վրա շարունակեցինք միասին աշխատել՝ սկսած 70-ական թվականներից մինչև կարելի է ասել, վերջին ժամանակաշրջանը: Դժվար է խոսել այն հարցերի մասին, որոնց նա անդրադարձել է, որովհետև դրանք այնքան շատ են: Երբ ասում ենք փիլիսոփայություն, առաջին հերթին ես հասկանում եմ փիլիսոփայության պատմություն: Փիլիսոփայության պատմաբանը, ինչպիսին և Կառլեն Միրումյանն էր, դա մի ահավոր բան է, այն իմաստով, որ ուզի, թե չուզի իր մեջ ընդգրկում է շատ բնագավառներ՝ գիտության, հասարակության և այլն:

Պատահական չէ, որ և՛ քաղաքագիտություն, և՛ մանկավարժություն, և՛ մշակույթ, և՛ պատմություն այս ամեն ինչը գալիս սինթեզվում և միավորվում են փիլիսոփայության մեջ ու արդեն փիլիսոփան անկախ իրենից երբեմն

այս կողմ և այն կողմ շեղումներ է կատարում, բայց դա մնում է փիլիսոփայության մեջ: Ինչպես նոր նշվեց Տրդատ Առաջինի թագադրման թվականի մասին, ես և Կառլեն Միրումյանը շատ ենք խոսել այդ հարցի շուրջ: Ես տեսնում եմ մի հիմնական խնդիր՝ մեր պատմագրությունը դեռևս գերի է մնում եվրոպակենտրոնությանը:

Տրդատ Առաջինը ինչու էր 66թ.-ից նշվում որպես թագավոր, քանի որ Հին Հռոմի պատմիչները այդպես են համարել, և մենք էլ մնացել ենք դրա գերին: Ես ուղղակի զարմացա, երբ կարդացի, թե ինչ է գրում Ֆրանսուա Ռաբլեն Տրդատ Առաջինի մասին: Երբ Ներոնը ընդունում էր Տրդատին, նա ոչ թե թագադրելու համար էր ընդունում, այլ նրան պետք էր, որ Տրդատը դառնա նրա դաշնակիցը, իր բարեկամը և հռչակվեց Հռոմի բարեկամ ու դաշնակից: Այսինքն ոչ թե Տրդատի մեծարում էր, այլ Ներոնը իր համար հոդ էր պատրաստում, որ բարեկամ պետություն ունենա, որի հետ կարող է հարաբերություններ ստեղծել: Այսինքն Տրդատ Առաջինը սուբյեկտ էր, ոչ թե օբյեկտ Հռոմի համար: Ինչը Հռոմը շատ լավ գիտակցում էր: Եվրոպակենտրոնական այս մոտեցումները թույլ չեն տալիս ճիշտ գնահատելու մեր իսկ պատմությունը:

Վերջին իր աշխատության մեջ Միրումյանը մեծ ուշադրություն էր դարձնում քաղաքական հայեցակարգին, որով հայերը առաջնորդվել են իրենց պատմության ընթացքում, որի հիմքը եղել է մշակույթը: Պետությունը համար-

վել է հզոր առաջին հերթին ոչ թե զենքով, այլ մշակույթով, իսկ մշակույթ ասելով հասկանում ենք ամեն ինչ, ինչը ստեղծել է ժողովուրդը իր հոգևոր զարգացման ընթացքում: Այստեղ Կառլեն Միրումյանը շեշտում է այս հանգամանքը: Տիգրան Մեծը բավականին հիմնավոր ձևով ներմուծեց հելլենիզմը: Մեր դասագրքերում հելլենիզմը կհասկանանք հունականություն, բայց դա մերն է, հայկականն է, որը սինթեզ է: Դա հնարավոր է, երբ ունես մշակույթ, երկու մշակույթների հանդիպման ժամանակ ոչ թե քո մշակույթը գնում «ուրիշի մեջ է մտնում», այլ ուրիշն է «գալիս մտնում» քո մշակույթի մեջ: Այս ամենը հանգեցրել է նրան, որ հայկական հոգևոր մշակույթը կարողացել է դառնալ հզոր գործոն պետության ձևավորման, հզորացման և զարգացման համար: Այս գաղափարը Կառլեն Միրումյանը շեշտադրում է սկսած Տիգրան Առաջինից, մի քանի դարերի ընթացքում: Հետևաբար, այսօր էլ այս պատկերացումը պետք է դառնա մեզ համար ուղեցույց, պատմության դաս, որին մենք պետք է հետևենք:

Այսօր, եթե հարցնենք, թե ինչ է հարկավոր ուժեղ պետություն ստեղծելու համար, առաջինը կնշեն բանակ, տնտեսություն, սակայն ոչ ոք չի նշում մշակույթը, դրա կարևորությունը: Առանց մշակույթի ոչ մի հզոր պետության մասին խոսք չի կարող լինել: Սա է, որ Միրումյանը մեզ ուսուցանում է, իսկ մենք պետք է կարողանանք օգտվել իր թողած ժառանգությունից, խելք հավաքենք առաջ գնալու համար:



**Протоархимандрит
ЗАКАРИЯ БАГУМЯН**

**Директор Центра христианского
воспитания Св. Эчмиадзина**

Современный период можно охарактеризовать как кризис мыслящих людей. В сегодняшней реальности геополитическая ситуация, то, что происходит с нами в последние годы, причиняет боль особенно думающим людям, умеющим анализировать, копать вглубь, пытаться понять происходящее. Одним из таких людей был наш любимый учитель Карлен Мирумян.

Мне посчастливилось знать его с 1995 года, когда сначала я был учеником в школе «Вазгенян» на Севане, а потом стал его другом и близким человеком. Я думаю, что все, что было сказано сегодня, действительно правда, но есть одна вещь, на которой я хочу, чтобы мы сосредоточились. Сегодня нам не хватает мечты. Мечты, которая может стать видением, а Карлен Мирумян был человеком с видением, который точно знал, что он делает, как он это делает, и его жизнь была действительно жизнью настоящего ученого с ясностью, дисциплиной, и он знал, что в этот момент ему делать, что ему делать через год, что ему делать через 10 лет.

На мой взгляд, именно преподавание в семинариях во многом способствовало его научным достижениям. Будучи студентами, мы наблюдали, как философ вскоре стал теологом, арменоведом в самом широком смысле этого слова. Я думаю, что мы уже видим человека, который подходит к нашим летописцам как к учителям, как к носителям этого духовного наследия. Я думаю, что лучшее, что мы можем сделать в память о нашем учителе – это продолжать его работу, публиковать написанное им, писать самим, проповедовать и иметь такое же видение, как у него.

Спасибо, что все вы здесь, потому что я считаю, что подобные мероприятия важны для нас, и хочу оставить за собой право, как представителя первого поколения школы «Ваз-

генян», от имени всего сообщества «Вазгенян» искренне поблагодарить нашего учителя, с которым ежедневное общение было в радость: споры, интересы. Будучи студентом, я, выражаясь простонародно, «часто играл с его душой», но мои современники знают, что у нас были очень теплые и родственные отношения.

Перед публикацией одной из его последних работ он мне сказал: «...Прочитайте один

раз эту главу, как вардапет, посмотрите, возможно, я что-то не так написал». Это говорило о мышлении действительно великого ученого, который мог говорить с как с признанным ученым, так и с ребенком, юношей и студентом. Он всегда ценил интеллигентное духовенство и всегда поощрял его. Пусть память о нашем Учителе будет по-настоящему светлой.

Տեր ԶԱԶԱՐԻԱ ծայրագույն վարդապետ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Սբ. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն

Այսօրվա ժամանակաշրջանը կարող ենք բնորոշել որպես մտածող մարդկանց ճգնաժամ: Այսօրվա իրականության մեջ աշխարհաքաղաքական իրադրությունը, այն, ինչ կատարվում է մեզ հետ վերջին տարիներին, ցավ է պատճառում հասկապես մտածող մարդկանց, որոնք կարող են վերլուծել, խորանալ, փորձել հասկանալ, թե ինչ է կատարվում: Այդ մարդկանցից մեկն էր մեր սիրելի ուսուցիչը՝ Կառլեն Միրումյանը:

Ես բախտ եմ ունեցել իրեն ճանաչելու 1995թ.-ից, սկզբում որպես Սևանի Վազգենյան դպրանոցի աշակերտ, այնուհետև՝ որպես ընկեր, հարազատ և բարեկամ: Կարծում եմ, որ այն ամենը, ինչ այսօր նշվեց, իսկապես ճշմարիտ է, բայց մի բան կա, որի վրա ուզում եմ մենք ուշադրություն դարձնենք: Այսօր մեզ պակասում է երազը: Երազը, որը կարող է դառնալ տեսլական, իսկ Կառլեն Միրումյանը տեսլական ունեցող անձ էր, ով հստակ գիտեր՝ ինչ էր անում, ինչպես էր անում, և նրա կյանքը իսկապես ճշմարիտ գիտնականի կյանք էր՝ հստակությամբ, կարգապահությամբ, և նա գիտեր, թե այս պահին ինչ պետք է անի, մեկ տարի հետո ինչ պետք է անի, 10 տարի հետո ինչ պետք է անի:

Իմ կարծիքով, նրա գիտական վաստակին մեծապես նպաստեց հենց հոգևոր ճեմարաններում դասավանդելը: Լինելով ուսանողներ, մենք հետևում էինք, թե ինչպես էր փոխառված մերթնդմերթ դառնում աստվածաբան, հայագետ բառիս լայն իմաստով: Կարծում եմ, որ մենք արդեն տեսնում ենք մի մարդու, որը մեր մատենագիրներին մոտենում է իբրև վարդապետի, իբրև հոգեմտավոր այդ ժառանգության կրողի: Կարծում եմ, որ լավագույն բանը, որ մենք կարող ենք անել մեր ուսուցչի հիշատակը վառ պահելու համար, դա իր գործունեությունը շարունակելն է, նրա աշխատությունները հրատարակելը, ստեփական աշխատանքներ գրելը, քարոզելը և նրա նման տեսիլք ունենալը:

Շնորհակալություն, որ այստեղ եք, որովհետև կարծում եմ, որ այս և նմանատիպ միջոցառումները կարևոր են մեզ համար, և ես ուզում եմ ինձ իրավունք վերապահել իբրև Վազգենյան դպրանոցի առաջին սերնդի ներկայացուցիչ, բոլոր Վազգենյանցիների անունից իսկապես շնորհակալություն հայտնել մեր ուսուցչին, որի հետ ամենօրյա շփումը ուրախություն էր. բանավեճերը, հետաքրքրությունները:

Լինելով ուսանող, ես, ժողովրդական լեզվով ասած, «իր հոգին շատ եմ կերել», սակայն

իմ սերնդակիցները գիտեն, որ մենք շատ ջերմ ու մտերմիկ հարաբերություններ ենք ունեցել:

Վերջին աշխատություններից մեկի հրատարակումից առաջ նա ասաց. «...մի հատ կարդա այս գլուխը, որպես վարդապետ տես՝ ինչ եմ գրել, հնարավոր է՝ ինչ-որ սխալ բան կա»: Սա խոսում էր իսկապես մեծ գիտնականի մտածողության մասին, ով կարող էր խոսել և՛ կայացած գիտնականի, և՛ երեխայի, և՛ պատանու, և՛ ուսանողի հետ: Նա միշտ գնահատել է մտավորական հոգևորականներին ու միշտ խրախուսել նրանց: Թող մեր ուսուցչի հիշատակն իսկապես վառ մնա:



АШОТ ЕНГОЯН

**первый декан факультета Политологии
Российско-Армянского университета,
д. полит. н., профессор**

Так или иначе, мы все имеем дело с эпизодами, которые произошли в нашей жизни. За последние 20 лет вместе с Карленом Артаваздовичем мы проделали, пожалуй, одну из самых важных работ в плане образования, формирования и воспитания будущей молодежи, создали факультеты политологии и международных отношений в Российско-Армянском университете. Все эпизоды, которые здесь обсуждались, мы с Карленом Артаваздовичем неоднократно обсуждали — как с научной точки зрения, так и с точки зрения гуманитарно-бытовых вопросов. Мы были очень близки с Карленом Мирумяном, и то, что вы все сказали, мне очень близко, потому что я все это осознаю. Мы были не только коллегами, но и настоящими друзьями.

Ելնելով այս կանխադրությանից՝ Կ. Միրումյանը հայ հոգևոր մշակույթի, հատկապես ազգային մտքի հետազոտության մեթոդաբանական ելակետ է համարում **ազգային կեցություն** հասկացությունը. «Ազգային կեցությունը նյութական և հոգևոր գոյացումների ամբողջությունն է, որոնք կազմում են ազգի գոյատևման ու գործառնության հիմքը»[4]: Այդ գոյացումներն են՝ սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական պայմաններն ու հոգևոր-մշակութային գործունեության նյութականացված

ձևերը: Ընդ որում, **ազգային կեցություն** հասկացության մեջ հետազոտողն առանձնացնում է երկու մակարդակներ՝ **առկա կեցություն** և **կեցություն-նպատակ**: Նրա կարծիքով՝ «...առկա ազգային կեցությունը կարելի է դիտել որպես իրականության բնական մոդել, իսկ «իդեալականացվածը»՝ տեսական մոդել, իդեալ, նպատակ, նպատակային դիրքորոշում, որին ուղղված է ազգային ինքնագիտակցության ամբողջ ներուժը» [5]:

Ազգային պետականության առկայության դեպքում **հասարակական կեցություն** և **ազգային կեցություն** հասկացությունները հիմնականում համընկնում են, իսկ բացակայության դեպքում՝ ոչ, բայց երկուսն էլ «ածանցյալ են կեցություն ընդհանուր փիլիսոփայական կատեգորիայից, իսկ տարբերությունը պայմանավորված է հասարակություն և ազգ հասկացությունների ծավալի ու բովանդակության տարբերությամբ» [6]:

Մեթոդաբանական վերոհիշյալ դիրքորոշումը թույլ է տվել տարբերակված մոտեցում ցուցաբերել անցյալի տեսական ժառանգության նկատմամբ և ձևակերպել **հետազոտական ևս մեկ ելակետ**: Կ. Միրումյանը գրում է՝ «...եթե մասնագիտական-փիլիսոփայական տեքստերը փիլիսոփայության պատմության ծագումնաբանական հետազոտության առարկա են, ապա ոչ փիլիսոփայական և մերձփիլիսոփայական տեքստերը վերաբերում են հետազոտության գործառնական կողմին» [7]: Այս ելակետը, կարծում ենք, հեղինակի մոտ ընդհանուր մեթոդաբանական դիրքորոշում է ձևավորել, ինչը դրսևորվել է նաև

հայ քաղաքական մտքի հետազոտության ոլորտում:

Կ. Միրումյանն այդ կապակցությամբ նշում է, «որ քաղաքական կեցությունն արտացոլվում է ոչ միայն քաղաքական տեսություններում և հայեցակարգերում, այլև գործնական քաղաքականության ոլորտում, որը, սակայն, ինքնին պատմա-քաղաքագիտական հետազոտության անմիջական առարկա չի համարվում և մտնում է քաղաքական պատմության իրավասության մեջ» [8]: Նա գործնական քաղաքականության մեջ երկու մակարդակ է առանձնացնում՝ 1) իրավիճակային խնդիրների լուծմանն ուղղված քաղաքական գործողություններ և 2) բազմակողմանի ու նախօրոք հիմնավորված քաղաքական հայեցակարգի կամ գործունեության ծրագրի կենսագործմանն ուղղված քաղաքական գործողություններ, որոնք միտված են համապետական մարտավարական ու ռազմավարական խնդիրների ու նպատակների կենսագործմանը [9]:

Այսպիսով՝ նշանավոր հայագետը կարծում է, որ «քաղաքական գիտության պատմության օբյեկտ կարող է դառնալ նաև ներքնապես փոխկապակցված այն քաղաքական գործողությունների ամբողջությունը, որոնք իրենցից ներկայացնում են նախապես մշակված և «մտովի» հիմնավորված քաղաքական հայեցակարգի կամ ծրագրի իրականացման փորձ: Ընդ որում՝ եթե իրական քաղաքականության տեսակետից կարևոր են գործողությունների արդյունքները, ապա քաղաքական մտքի պատմության տեսանկյունից ոչ պակաս կարևոր են քաղաքական մտածողության

դրսևորումը, «աշխատանքը», քաղաքական կեցության մոդելավորման եղանակները և այլն:

Այդ պատճառով քաղաքական գիտության պատմության խնդրի մեջ է մտնում, մեր կարծիքով, քաղաքական գործողությունների ծրագրային-հայեցակարգային բնույթի (առկայության դեպքում) բացահայտումը, որից հետո՝ նրանց հիմքում ընկած քաղաքական հայեցակարգերի, գաղափարների ու սկզբունքների ռեկոնստրուկցիան» [10]: Այս մոտեցումը Կ. Միրումյանը կենսագործել է իր «Культурная самобытность в контексте национального бытия» (1994), աշխատության մեջ, այնուհետև այլ աշխատություններում, իսկ ամենավերջում՝ «Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIII в.)» (2021) յուրօրինակ հետազոտության մեջ: Կարծում ենք, որ այդ հետազոտական կտրվածքը հնարավորություն է տվել հատկապես (բայց ոչ միայն) մինչև V դարը եղած հայրենական (սեպագիր ու մեհենագիր) ու օտար հեղինակների թողած կցկտուր տեղեկություններից **օբյեկտիվ գործընթացներին համարժեք** (ոչ թե որոշակի քաղաքական շահեր սպասարկող՝ գերիշխող գաղափարախոսական կաղապարներին հարմարեցված) **պատմափիլիսոփայական ու քաղաքագիտական տեսությունների ու հայեցակարգերի բխեցումը**:

Պետականությունից զրկված հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության մեջ վճռական դեր է խաղում քաղաքական գիտակցությունը: Ինչպես Կ. Միրումյանն է ձևակերպում՝ «Ազգային-քաղաքական սկիզբն է, որ գաղափարախոսությանը հա-

ղորդում է գործնական բնույթ, որի հետևանքով գաղափարախոսությունը, արտացոլելով առկա կեցությունը, առավելագույնս նպատակաուղղված է դեպի ապագան: Այն ավելի շոշափելի և առարկայորեն է արտահայտում ազգի շահերն ու կարիքները, ազգի առջև ծառացած գործնական-քաղաքական և հոգևոր-մշակութային խնդիրները» [11]:

Ազգային կեցություն հասկացության ելակետով Կ. Միրումյանի առաջին ամբողջական հետազոտությունը կոչվում է՝ «Культурная самобытность в контексте национального бытия», որտեղ հեղինակը ներկայացնում է Հին Հայաստանի մշակութային-պատմական գործընթացների առանձնահատկություններն ու օրինաչափությունները **մշակույթի քաղաքական հայացակարգի ձևավորման** կտրվածքով: Այնտեղ մասնավորապես ցույց է տրված, որ հայ մշակույթի գործիչները շարունակաբար զարգացնելով սեփական ավանդույթները և հավաքագրելով համամարդկային արժեքներն ու դրանք անցկացնելով ազգային գիտակցության պրիզմայով, դրանք ծառայեցրել են ազգային կեցության հիմնախնդիրների լուծմանը: «Քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր ստեղծել կենսունակ ու գործող, ազգային կեցության լայն գունապնակը լուծելու ընդունակ իսկապես յուրօրինակ ազգային մշակույթ» [12]: Կ. Միրումյանի այդ աշխատության մեջ ցույց է տրված, թե ինչպես է Տիգրան Մեծի կողմից ազգային կեցության հիմնախնդիրներին ծառայող **մշակույթի քաղաքական հայեցակարգ** ստեղծվել, իսկ հետո այդ ավանդույթի շարունակականու-

թյունն է ներկայացվում ինչպես հեթանոսական, այնպես էլ (արդեն վերաարժեքավորված ձևով) վաղմիջնադարյան քրիստոնեական շրջանի հայ իրականության մեջ:

Կ. Միրումյանի վերոհիշյալ դիրքորոշումը խտացված ձևով առկա է նաև նրա քաղաքականության փիլիսոփայության կտրվածքով կատարված (մեր կարծիքով) «Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIII в.)» ուսումնասիրության մեջ, որի առանձին հիմնախնդիրներին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, մասնավորապես նրանց, որոնց հետ կապված մեզ մոտ որոշ ցանկություններ ու դիտարկումներ են առաջացել:

Վերոհիշյալ ելակետից է բխում Կ. Միրումյանի այն ձևակերպումը, որ Հայաստանի պատմական գործընթացը պետականության պայմաններում սոցիալ-պատմական բնույթ է ունեցել, իսկ պետականության բացակայության պայմաններում՝ ազգային-պատմական. դրանք պատմական գործընթացի տարբեր կողմեր կամ մակարդակներ են, որոնցից մեկը մյուսին չի հակադրվում կամ փոխարինում, այլ պատմական զարգացման տարբեր կտրվածքներում կարող է գերակայող լինել մյուսի նկատմամբ [13]: Միանգամայն արդարացի համարելով այս դիրքորոշումը՝ կարծում ենք, որ կարելի էր Արշակունիների իշխանության վերացումից մինչև Բագրատունիների դաշնային պետության ձևավորման ժամանակի նկատմամբ՝ հենց այդ դիրքորոշումից բխող որոշ վերապահում անել՝ տարբերակել այն Ուշ միջնադարից ու Նոր ժամանակից, քանի որ Վաղ

միջնադարում առկա էր նախարարական համակարգը, իսկ նախարարությունները, կենտրոնական պետականության կորստից հետո մնացել էին որպես ազգային պետականության տեղային դրսևորումներ, որոնք երբեմն, հատկապես Արևելյան Հայաստանում, ինքնավարություն էին ձեռք բերում:

Հայկի ու Բելի հակամարտության խնդրին անդրադառնալիս, մեր կարծիքով, աշխատության այդ հատվածի համար ավելի շահեկան կլինեք, եթե վկայակոչվեր Մեբեռսի տեղեկությունն այն մասին, որ Բելը Հայկին առաջարկել էր դառնալ իր բանակի գլխավոր հրամանատարը հետևյալ խոսքերով՝ «... հանձնվիր իմ ձեռքը և խաղաղությամբ ապրիր իմ տանը՝ **դեկավարելով իմ տան որսորդ զինվորներին** (ընդգծումն իմն է՝ Մ.Մ.)» [14]: Դա թույլ կտար ավելի պարզորոշ ցույց տալ Հայկի ռազմական-կազմակերպական ունակությունները և ըստ այդմ՝ նրա հետ կապված Բելի **ռազմաքաղաքական** ծրագիրը:

Այս աշխատության մեջ առանցքային է դեռևս 90-ական թթ. Միրումյանի մոտ բյուրեղացված այն սկզբունքը, որ հայ աշխարհիկ ու հոգևոր գործիչների քաղաքական մտածողության մեջ ներծծված գլխավոր ծրագրային գաղափարը ազգային միասնության, պետական ամբողջականության պահպանումն է, իսկ դրա կորստից հետո՝ վերականգնել ազգային, քաղաքական, պետական անկախությունը: Նա գրում է՝ «Ինչն իրականում կորսվել է, նրանք ձգտել են պահպանել ժողովրդի գիտակացության և պատմական հիշողության մեջ՝ պետականության, տարածքային ամբողջակա-

նության, քաղաքական անկախության բացակայությունը փոխհատուցելով ազգի լեզվական, հոգևոր-մշակութային և գաղափարախոսության միասնության ստեղծումով» [15]:

Կարծում ենք, որ հայոց այսօրվա պետական-քաղաքական գործիչների իրական քաղաքական գործունեության համար կարևոր է հաշվի առնել Կ. Միրումյանի այն բանաձևումը, թե Տիգրան Երվանդյանի գործելակերպի հիմքում ընկած էր այն սկզբունքը, որ նա «իր և իր երկրի համար ստացել է այնքան ազատություն ու անկախություն, որքան նա կարողացել է իրացնել՝ ապահովելով Հայաստանի հարաբերական անկախությունն ու բարեկեցությունը» [16]: Այս գործելակերպը, մեր կարծիքով, հայ քաղաքական միտքը կարող է կողմնորոշել դեպի շահերի ու հնարավորությունների իրատեսական հաշվառում, որն էլ կարող է նպաստել հնարավորությունների վերագնահատմանն ու հարստացմանը և արդյունքում շահերի առավել լիարժեք իրագործմանը:

Կ. Միրումյանը Ասորիքի կողմից Տիգրան Մեծի իշխանությունն ընդունելու պատճառը հայոց արքայի զինուժի միջոցով «բարբարոս» Հռոմի ոտնձգությունից պաշտպանվելու սելևկյան ավագանու ձգտումներով է բացատրում [17]: Ճիշտ է Միջերկրականում այդ պահին Հռոմը գերիշխող ուժ էր, ինչի պատճառով Սելևկյան պետության ծովափն անպաշտպան էր դարձել, իսկ Փոքր Ասիայի զգալի մասն էլ նրա ենթակայության տակ էր կամ քաղաքական ազդեցության տիրույթում, բացի այդ՝ Ք.ա. 92թ. պարթևների հետ կնքած

պայմանագրով Հռոմը հավակնում էր Եփրատի աջափնյա շրջաններին, սակայն Հռոմի ուղղակի ռազմաքաղաքական ճնշմանը Սելևկյան պետությունը ենթարկվել ու թուլացել էր հիմնականում Ք.ա. 190-160-ական թվականներին, մինչդեռ Սելևկյան ավագանու մոտ հատկապես թարմ պետք է լիներ նաև պարթևական վտանգի զգացողությունը: Պատճառն այն էր, որ Ք.ա. 140-130թթ. պարթևները սելևկյաններին ծանր հարվածներ հասցրին ու գրավեցին Եփրատից արևելք ընկած նրանց բոլոր տարածքները, որի արդյունքում Սելևկյան պետությունը ավելի թուլացավ, կույճ եկավ Ասորիքի տարածքում և ավելի ուշ սկսեց անվանվել Սիրիական թագավորություն: Իսկ Ք.ա. 87թ., (մինչև հայ-պարթևական պատերազմը) նույնիսկ պարթևական Միջագետքի կուսակալն էր իր գորքով ավերել ու թալանել Սիրիան ու գերեվարել նրա արքա Դեմետրիոս III Սելևկյանին:

Քանի որ Տիգրան Մեծը իր Ք. ա. 87թ. սկսած ռազմարշավով ջախջախեց պարթևներին ու պայմանագրով տիրացավ նրանց հյուսիսային հսկայական տարածքներին ու Եփրատով սահմանակցեց Ասորիքին, ուստի արքայական գահը ներդինաստիական պայքարի ասպարեզի վերածվելու պայմաններում սելևկյան ավագանին պետք է ապավիներ հայոց արքայի պաշտպանությանը նաև այն պատճառով, որ նա հաղթել էր իրենց տարածքները աստիճանաբար զավթած հզոր Պարթևստանին: Կարծում ենք, որ դեպի Տիգրան Մեծը Սելևկյան ավագանու կողմնորոշման քաղաքական դրդապատճառների մեջ կարելի էր շեշտադրել նաև այդ հանգամանքը:

Կարող է տպավորություն է ստեղծվել, որ Տիգրան Մեծի կողմից պետական շինարարության կարևոր գործոնի վերածված, պետական գաղափարախոսության կարգավիճակ ստացած հելլենիստական մշակույթը միանգամայն տարբեր է հայկականից, քանի որ ուսումնասիրության մեջ երիցս շեշտվում է, որ Տիգրան Մեծը այդպիսին դարձրեց ոչ թե ազգային, այլ հելլենիստական արժեհամակարգը: Տերության համար դա միանգամայն հասկանալի է, քանի որ նրանում ապրում էին տարբեր ժողովուրդներ: Սակայն հելլենիզմը, որպես մշակութային իրողություն, համադրական բնույթ ուներ, ուստի այն Հայաստանում, Պարթևստանում, Ասորիքում իր յուրահատկություններն ուներ, քանի որ տեղականի (ազգայինի) ու հունականի համադրություն էր: Այն հայ ազատանու հոգեկերտվածքից չէր կարող դուրս մղել ազգայինը, Տիգրան Մեծն էլ նման նպատակ չէր կարող ունենալ: Բացի այդ՝ հայության բացարձակ մեծամասնությունն ապրում էր գյուղերում, որտեղ տիրապետողը ազգային ավանդական մշակույթն էր:

Այլ է հունարեն լեզվի գործոնը, որը, պետական կարգավիճակ ստանալով, պետք է ազգամիջյան շփման միջոց լիներ (հիմնականում ազատանու, հարուստ վաճառականության համար): Նույնը կարելի է ասել հայոց դիցարանի մասին. հայության մեծագույն մասը իր պաշտամունքն էր մատուցում սեփական ազգային աստվածներին (որոնք տվյալ ժամանակաշրջանում վերանվանվել էին հունական աստվածների անուններով)՝ վերջիններիս հետ կապված ավանդույթներով ու ծիսա-

կարգով: Կարծում եմ, որ այստեղ նույնպես կարելի էր այդ նրբերանգը շեշտադրել:

Քանի որ հետազոտական նոր հայեցակարգ առաջ քաշելուց անմիջապես հետո Կ.Միրումյանը վերագնահատել է պավլիկյան շարժումն՝ իր գաղափարախոսական ու գործնական կողմերով, ուստի հարկ ենք համարում համառոտ անդրադարձ կատարել նաև պատմական այդ իրողությանը վերաբերող միրումյանական դիրքորոշմանը:

Հայտնի է, որ մշակույթի պատմական զարգացման ընթացքում անընդհատությունն իրականացվում է ժառանգորդման կամ սոցիալական փորձի փոխանցման միջոցով: Թեև զարգացման համար պետք է ժառանգորդվի առաջադիմականն ու կենսահաստատը, բայց իրեն սպառաժին ու ժամանակավրեպին էլ պետք է հաղորդ լինել՝ դասեր քաղելու և հնարավոր մարտահրավերներին դիմագրավելու համար: Դա վերաբերում է նաև պավլիկյան շարժմանը, որի էությունն ու նշանակությունը վերախմաստավորելու փոխարեն իսպառ հանվել է ավագ դպրոցի ծրագրից, իսկ VII դասարանի դասագրքում (Ա. Մելքոնյան և ուրիշներ) հակաարաբական ազատագրական պայքարին նվիրված թեմայի շրջանակներում բնութագրվում է միայն որպես Դվինի 719թ. ժողովի կողմից դատապարտված աղանդավորական շարժում, որը միանում է VIII դարի հակաարաբական ապստամբությանը, մասնակցում «օտար նվաճողների դեմ մղվող համահայկական պայքարին»:

Նման պատկերացումը խորհրդային ավանդույթ է, ըստ որի՝ պավլիկյան շար-

ծումը համարվում է Հայաստանում ու Բյուզանդիայում հակաֆեոդալական շարժումներից ամենահզորն ու ազդեցիկը [18], որը միաժամանակ ազգային-ազատագրական կամ «ժողովրդաազատագրական» [19] բնույթ է ունեցել: Աղբյուրներում շարժման ազգային-ազատագրական բնույթը հաստատող փաստեր չկան (ինչը համոզիչ փաստերով ներկայացրել է պրոֆեսոր Կ. Միրումյանը), իսկ «ժողովրդաազատագրական» հասկացության հիմքում, կարծում ենք, Հ. Մանանդյանի այն ենթադրությունն է, թե հայերի հակաարաբական ելույթները (դրանց է միացնում նաև պավլիկյան շարժումը՝ Ս.Մ.) «ունեցել են **կա՛մ սոցիալական ու դասակարգային և կա՛մ եղել են ժողովրդական-ազատագրական շարժումներ** ընդդեմ ճնշող ու կեղեքող օտար տիրապետողների (ընդգծումը իմն է՝ Ս.Մ.)» [20]:

Թեև Հայկական խորհրդային հանրագիտարանում աղանդավորությունը ներկայացված է որպես «կոմունիստական աշխարհայացքին հակադիր գաղափարախոսություն» [21], սակայն մինչխորհրդային շրջանում իշխող խավերի դեմ ուղղված ամեն մի շարժման մեջ կոմունիստական գաղափարախոսությունը առաջադիմական երևույթ է տեսել: Մինչդեռ եթե պավլիկյանների զինված ջոկատները երբեմն բյուզանդական զորամասերի հետ գործել են արաբների դեմ, ինչպես նաև արաբների օգնությամբ լայնամասշտաբ ռազմական գործողություններ են վարել Բյուզանդիայի դեմ, դա դեռևս չի նշանակում, որ նրանց պայքարը ազգային-ազատագրական բնույթ ուներ:

Միանգամայն արժեքավոր էր Կ. Միրումյանի վերագնահատող դիրքորոշումը պավլիկյան շարժման ու գաղափարախոսության նկատմամբ: Հիրավի պավլիկյանների շարժումն իրականում ուղղված էր ոչ միայն արտաքին ճնշման, այլև եկեղեցու և նախարարական համակարգի դեմ: Հայտնի է, որ համահայկական պետականության անկումից հետո ազգային պետականությունը գոյատևում էր նախարարական համակարգի միջոցով: Իրենց սոցիալական պահանջներով կազմալուծելով այդ համակարգը՝ պավլիկյանները ոչ միայն կարող էին վերացնել ազգային պետականության այդ տեղային դրսևորումը (փաստորեն նրանք ձգտում էին իրականացնել այն, ինչի իրականացմանն էին վաղուց ձգտում արաբական ու բյուզանդական իշխանությունները), այլև ավելի անպաշտպան ու խոցելի դարձնել Հայաստանն ու հայ ժողովրդին: Ինչ վերաբերում է Հայ եկեղեցուն, այն տվյալ ժամանակաշրջանում արդեն ազգայնացված ու ինքնուրույնություն ձեռք բերած միակ համահայկական կառույցն էր, որը ոչ միայն ապահովում էր ողջ հայության հոգևոր միասնությունը, այլև սերտաճել էր հայ քաղաքական համակարգի հետ՝ իր վրա վերցրելով պետականության որոշ գործառնություններ, հատկապես որոշակի պատասխանատվություն ստանձնելով ազգի ճակատագրի նկատմամբ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարաբերություններում:

Կարծում ենք՝ այս առումով մեթոդաբանական ելակետի դեր կարող է խաղալ Ն. Ադոնցի այն կարծիքը, թե «իր ներքին զարգացման ընթացքում հայոց եկեղեցին

պետք է **հարմարվեր տեղական քաղաքական կարգերին** այնպես, ինչպես կայսերական (բյուզանդական՝ Ս.Մ.) եկեղեցին հարմարվում էր կայսրության վարչական կառուցվածքին» [22]: Բացի այդ՝ Հայ եկեղեցին, սեփական ժողովրդի համար հոգևոր հենարան լինելով, օտար ազդեցությունից զերծ մնալու համար ինքն էլ սոցիալ-քաղաքական հենարանի կարիք ուներ: Դա նշանակում է, որ պետք է միահյուսվեր հայոց ազգային կեցության հետ՝ ազգայնացվեր: Հայ եկեղեցու «ազգայնացումը տեղի էր ունենում նրա նախարարականացման կամ ֆեոդալականացման ուղիով» [23]: Այդ ուղիով հայ եկեղեցին դարձավ միջնադարի հայոց պետաիրավական համակարգի բաղկացուցիչ մասը, ուստի թագավորության անկումից հետո այն պատասխանատվություն ստանձնեց ինչպես արտաքին քաղաքական կողմնորոշման, այնպես էլ քաղաքակրթական ընտրանքի գործում:

Պավլիկյան շարժումը պառակտում էր առանց այդ էլ քաղաքական ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդին, իսկ ամուսնաընտանեկան հարաբերությունների իրենց ըմբռնումը կարող էր խաթալել հասարակության կայունության ամենակարևոր բջիջներից մեկը՝ ավանդական ու աստվածակենտրոն մտածողության մեջ սրբագործված ընտանիքը: Նույնիսկ եթե կանանց համայնացման ու նրանց հետ ազատ «խառնակվելու» գաղափարները պավլիկյաններին վերագրվել են [24], ճիշտ չեն, և նրանք ընդամենը ամուսնաընտանեկան հարաբերություններն առանց եկե-

ղեցու մասնակցության կառուցելու և ազատ սիրո կողմնակից էին [25], ապա դա նույնպես կարող էր խաթալել հասարակական օրգանիզմը, որի առանցքային օղակներից մեկը «ընտանիք» կոչվող սոցիալական ինստիտուտն էր:

Ողջ ասվածի օգտին կարելի է բերել նաև այն փաստը (որի վրա ուշադրություն է հրավիրել Կ. Միրումյանը), որ 748–750թթ. հակաարաբական ապստամբությունը պառակտվում է շարժմանը պավլիկյանների զինված ջոկատների միանալու պատճառով [26], քանի որ նրանք իրենց սոցիալական պահանջներով կազմալուծում են արդեն սկսված ազգային-ազատագրական ելույթը և արդյունքում սրվում են Բագրատունիների ու Մամիկոնյանների միջև մինչ այդ եղած հակասությունները, ինչը թուլացնում է հակաարաբական ընդհանուր ճակատը, մանավանդ ազգային պետականության վերականգնման հիմքերը [27]: Այս հարցում նույնպես միանգամայն հիմնավորված է ազգային կեցության գաղափարի միրումյանական ելակետը:

Հայտնի իրողություն է, որ այս շարժումը ծանր հարված էր ազգային գենոֆոնդին, քանի որ աղանդավորների դեմ պայքարող բյուզանդական կայսրերը հարյուր հազարավոր [28] հայերի կոտորել ու բռնազաղթեցրել են (մի մասն էլ իր ցանկությամբ է վերաբնակեցվել) Բալկանյան թերակղզի, իսկ որոնց մի մասն օգտագործվել է կայսրության թշնամիների դեմ պայքարում [29] ու ոչնչացվել, մյուս մասը ձուլվել է օտար միջավայրում [30]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бердяев Н. Смысл истории. М., 1987. С. 5.
2. Геворкян Г.А. Очерк исторической методологии науки. Ер., 1987. С. 15.
3. Միրումյան Կ.Ա., Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին//Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 2, Եր., 1995: էջ. 29–30:
4. Նույն տեղում: էջ 38:
5. Նույն տեղում: էջ 42:
6. Նույն տեղում: էջ 39:
7. Միրումյան Կ. Հայոց փիլիսոփայության առարկայի և աղբյուրների հարցի շուրջը// Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 3, 1998: էջ 60:
8. Мирумян К.А. Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIII в.), Ер., 2021. СС. 14–15.
9. Նույն տեղում: էջ 15:
10. Նույն տեղում: էջ. 15–16:
11. Միրումյան Կ., Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին//Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, էջ 42:
12. Мирумян К. Культурная самобытность в контексте национального бытия. Ер., 1994. С. 98.
13. Мирумян К.А. Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIIIв.). С. 24.
14. Սեբեոս, Եր., 2004: էջ 11:
15. Мирумян К.А. Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIIIв.). С. 29.
16. Նույն տեղում: էջ 39:
17. Նույն տեղում: էջ. 53–54:
18. Հայ ժողովրդի պատմություն, հտ. II, Եր., 1984, էջ 389:
19. Նույն տեղում: էջ. 396–397:
20. Մանանդյան Հ. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Եր., 1939: էջ 3:
21. ՀՍՀ, հտ. I, Եր., 1974: էջ 245:
22. Ադունց Ն. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987: էջ 399:
23. Նույն տեղում: էջ 401:
24. Տեր-Մինասյան Ե. Միջնադարյան աղանդների ծագման ու զարգացման պատմությունից, Եր., 1968: էջ 125:
25. Մելիք-Բախշյան Ստ. Տ., Պավլիկյան շարժումը Հայաստանում, Եր., 1953: էջ. 227–228:
26. Մելիք-Բախշյան Ստ. Տ. Հայաստանը VII–IX դարերում, Եր., 1968: էջ 312:
27. Мирумян К.А. Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIIIв.). С. 283.
28. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, Եր., 1981: էջ 788:
29. Նույն տեղում: էջ. 803–811:
30. Բարթիկյան Հ. Պավլիկյան շարժման գաղափարախոսությունը/ Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, թիվ 8: էջ 96:

МИРУМЯНОВСКИЕ «ОТПРАВНЫЕ ТОЧКИ» ИССЛЕДОВАНИЯ ОТЕЧЕСТВЕННОЙ ИСТОРИИ

С.Б. Маргарян

АННОТАЦИЯ

В статье постулируется мысль о том, что в 90-е годы XX века армянский народ, оказавшись на пороге переходного периода, столкнулся с необходимостью переосмысления прошлого, что могло бы способствовать как извлечению уроков из прошлого, так и пониманию природы и целей вызовов, стоящих перед армянским народом, и разработке эффективной стратегии противостояния им. В этом смысле бесспорен вклад видного арменоведа, профессора Карлена Мирумяна. Разработанная им концептуально-методологическая концепция национального бытия позволила избавиться от социологического метода, предваряющего исследование национальной мысли, и вывести метод, исходя из особенностей предмета исследования. Все это именитый арменовед совершил в различных областях арменоведения. В рамках статьи, в частности, была рассмотрена политическая концепция культуры, сложившаяся во времена Тиграна Великого, а также переосмысление К. Мирумяном процесса развития армянской политической мысли и Павликианского движения.

Ключевые слова: социологический метод, общественное бытие, национальное бытие, настоящие бытие, цель бытия, национальная мысль, политическая концепция культуры, Павликианство.

MIRUMYAN'S "STARTING POINTS" OF THE RESEARCH OF NATIONAL HISTORY

S. Margaryan

ABSTRACT

The article postulates the idea that in the 90s of the twentieth century the Armenian people, being on the threshold of a transitional period, faced the need to rethink the past, which could contribute both to learning lessons from the past and understanding the nature and goals of the challenges facing the Armenian people, and the development of an effective strategy to confront them. In this sense, the contribution of the prominent Armenologist, Professor Karlen Mirumyan is indisputable.

The conceptual and methodological concept of national existence, developed by him, made it possible to get rid of the sociological method that precedes the study of national thought, and to invent the method, based on the characteristics of the subject of study. The eminent Armenologist did all this in various fields of Armenology. Within the framework of the article, in particular, was examined the political concept of culture that developed during the time of Tigran the Great, as well as K. Mirumyan's rethinking of the process of development of Armenian political thought and the Pavlikian movement.

Keywords: sociological method, social being, national being, real being, purpose of being, national thought, political conception of culture, Paulicianism.

КАРЛЕН МИРУМЯН – ЭСТЕТИК

А.С. Аревшатян

д.иск., проф.

Институт искусств НАН РА

anna_arevshatyan@hotmail.com

АННОТАЦИЯ

Статья посвящена работам профессора Карлена Артаваздовича Мирумяна, затрагивающим вопросы истории эстетической мысли, которые впервые становятся предметом отдельного рассмотрения. В частности, его статьи, освещающие идейно-теоретические истоки эстетики и литературного наследия выдающегося ученого-энциклопедиста армянского Средневековья Ованеса Саркавага (XI–XII вв.), а также статья «О соотношении вокальной и инструментальной музыки в эпоху Средневековья» представляют особый интерес. В них К.А. Мирумяном сделаны примечательные выводы о прогрессивном вкладе Ованеса Саркавага не только в армянскую эстетическую мысль, но и эстетическую мысль своего времени в целом. Обращаясь к теме соотношения вокальной и инструментальной музыки, Мирумян рассматривает проблему, начиная с Древнего Востока и греческой Античности вплоть до Нового времени, отмечая, что она, обладая рядом национальных особенностей, является одной из основополагающих в истории музыкальной эстетики и музыкальной культуры, каждая из которых заслуживает отдельного исследования.

Ключевые слова: Карлен Мирумян, эстетика, Армения, Средневековье, Ованес Саркаваг, вокальная и инструментальная музыка.

Научное наследие доктора философских наук, основателя и заведующего кафедры политической теории Российско-Армянского университета, заведующего сектором истории философии Института философии, права и социологии НАН РА (1986–2022 гг.), профессора Карлена Артаваздовича Мирумяна обширно и разнообразно. Широта его научных интересов известна. В круг проблем, интересовавших его, наряду с историей средневековой армянской философии и ее отдельных выдающихся представителей, как Анания Ширакаци [1], Ованес Саркаваг [2] и другие, входили история естественной [3],

педагогической [4], политической [5] мысли в Армении и т.д. Он мыслил масштабно, комплексно, всеохватно. Научные труды К. Мирумяна отличаются глубоким аналитическим мышлением, меткими характеристиками, примечательными обобщениями. Однако мы остановимся на работах, посвященных истории эстетической мысли, которые впервые становятся предметом отдельного рассмотрения.

Одной из магистральных тем в научном наследии К. Мирумяна является исследование мировоззрения выдающегося армянского ученого-энциклопедиста, философа, поэта и гимнографа XI–XII вв. Ова-

неса Саркавага Имастасера, представителя нового интеллектуального течения, мировоззрение которого отмечено предвозрожденческими чертами, ученого, который за два века до Роджера Бекона провозгласил опыт критерием истины [6]. Ованесу Саркавагу посвящена монография Мирумяна, опубликованная в 1984 году. Всестороннее исследование мировоззрения Ованеса Саркавага не обошло стороной и его эстетические взгляды, которым посвящены как отдельная глава в вышеупомянутой монографии, так и следующие статьи Мирумяна: «Յովհաննէս Սարկավազի էսթետիկայի գաղափարախօսական ակունքները» («Идейно-теоретические истоки эстетики Ованеса Саркавага»), опубликованная в ежегоднике Армянского отделения философского общества СССР в 1986 году в сборнике «Հայ գեղագիտական մտքի պատմությունից» в 1986 году [7], а также статья «Յովհաննէս Սարկավազի գրական ժառանգութիւնը որպէս փիլիսոփայական-էսթետիկական մտքի աղբիւր» («Литературное наследие Ованеса Саркавага как источник философско-эстетической мысли»), опубликованная в Арменоведческом журнале университета Айказеан Бейрута в 1997 году [8].

Статья К. Мирумяна, освещающая идейно-теоретические истоки эстетики Ованеса Саркавага имеет подзаголовок – «Очерк античной теории мимезиса». Статья открывается обзором истории изучения наследия Саркавага, начиная с о. Г. Алишана и публикации поэмы «Слово мудрости», заложившей основы для изучения эстетического учения Саркавага. Ученые советского периода (М. Абемян, А. Аракелян, Г. Апресян, Я. Хачикян, Н. Тагмизян, А. Мнацаканян и другие) внесли свой ценный вклад в исследование эстетических

взглядов Саркавага. Подробный анализ эстетических учений Античности, одной из которых было учение о мимезисе как основе всякого искусства, рассматривается автором также на примере суждений европейских мыслителей и богословов Средневековья, доводя обзор их воззрений о мимезисе до эпохи Возрождения, Леонардо да Винчи, Альбрехта Дюрера и позже, включая эпоху Просвещения, в частности, французских энциклопедистов. Однако, как показано в очерке, мыслители прошлого под мимезисом «подразумевали как теорию подражания, так и теорию воспроизведения с сильными элементами реализма и творческой фантазии» [9]. Свои наблюдения Мирумян заключает выводом, что Ованесом Саркавагом был выдвинут и по своему решен ряд вопросов, имеющих первостепенное значение с точки зрения развития эстетической мысли. «Армянский мыслитель обобщил и подытожил множество положительных и ценных идей, имевшихся у предшественников, локализуя и развивая их. Саркаваг подчинил все это своим общим теоретическим принципам, создав цельное и оригинальное учение об искусстве, которое опирается как на культурные традиции прошлого, так и на армянскую художественную практику своего времени, исходя из реальных и актуальных требований развития армянского искусства» [10].

В статье «Յովհաննէս Սարկավազի գրական ժառանգութիւնը որպէս փիլիսոփայական-էսթետիկական մտքի աղբիւր» дана четкая жанровая дифференциация литературного наследия Саркавага, которое Мирумян подразделяет на три части: стихотворения, шараканы и молитвы [11]. Соответственно, статья также состоит из трех

разделов. Разумеется, большая часть статьи посвящена знаменитой поэме Иованнеса Саркавага «Слово мудрости, обращенное к птице скворцу» («Բան իմաստութեան և արեւի թռչնի»), вобравшей в себя эстетические взгляды автора, став своеобразным эстетическим манифестом, не имеющим аналогов в свое время как на Востоке, так и на Западе [12]. Как пишет Мирумян: «В поэме выражена суть саркаваговой эстетики. В эпоху средневекового мышления, когда еще не была создана какая-либо общая или частная теория искусства, появление этого сочинения символизировало одну из важных вех не только истории армянской эстетической мысли, но и развития всей эстетической мысли», в ней обсуждается проблема соотношения “искусства природного” и “человеческого”» [13].

«Поэма «Слово мудрости» – основное поэтическое сочинение Саркавага, проникнутое тонким лиризмом и глубиной философско-эстетического мышления, высокохудожественными достоинствами. В то же время она содержит теоретическое осмысление важнейших проблем общей теории искусства, происхождения и характера ис-

кусства, соотношения искусства и реальности, “естественного” и “приобретенного, выученного” искусств, роли и значения природного начала в процессе художественного творчества, функций искусства и других вопросов» [14]. От себя добавлю, что заслуга Саркавага состояла в том, что противопоставляя укоренившейся с раннего Средневековья в армянской эстетической мысли неопифагорейской традиции, выдвигающей на первый план в музыке умозрительное, абстрактное начало, связанное с математическими исчислениями основных звуков открытого Пифагором обертонового ряда, он возродил традиции противоположного учения Аристоксена¹. Учения, базировавшегося на тезисе о приоритете художественной практики, в частности, живого звучащего музыкального искусства и его непосредственного восприятия.

Анализируя поэму Ованеса Саркавага и затронутые в ней вопросы соотношения природного таланта, одаренности и обучения в искусстве, Мирумян апеллирует к эстетике Августина², у которого ставятся во главу угла те же вопросы [15]. «Предметом выражения искусства, в частности, му-

¹Аристоксен (370/360 до н.э. – после 300 до н.э.) – древнегреческий философ и теоретик музыки. Писал о музыке и философии, истории, педагогике, упоминается как автор в общей сложности около 450 книг (почти все утеряны). Среди трактатов музыкально-теоретического и эстетического содержания «Элементы гармонии» (сохранилась во фрагментах), «О мелопее» (не менее 4 кн.), «О ладах», «О восприятии музыки», «О музыке» (не менее 4 кн.), «Элементы ритмики» (сохранилась во фрагментах), «Об авлогах и [других музыкальных] инструментах», «Об авлетах», «О хороводах» и др. Оказал огромное влияние на развитие позднейшей античной науки о музыке. Для ученого-музыканта (μουσικός), по мнению Аристоксена, непосредственное восприятие – первая и важнейшая предпосылка дальнейшего (рационального) исследования музыки.

²Аврелий Августин Иппонийский (354–430гг.), также известный как Блаженный Августин – богослов, философ и епископ Гиппона Царского в Нумидии, римской Северной Африке. Его труды повлияли на развитие западной философии и западного христианства. Августин признан святым в Католической церкви, Восточной Православной церкви и Англиканской церкви. Считается одним из самых важных отцов Латинской церкви. Среди его значительных работ – «О граде Божьем», «Христианская наука» и «Исповедь». Автор трактата «О музыке» (388–389), оказавшим большое влияние на эстетическую мысль Средневековья, который содержит знаменитое определение музыки *Musica est ars bene modulandi* («Музыка есть искусство благосочетаемое») с подробным толкованием.

зыкального и поэтического искусств, является широкое отражение особенностей, чувств, переживаний, порывов души человеческой. Все это, – пишет Мирумян, – в равной степени отображается в искусстве и находится в состоянии гармонии (внутреннем благозвучии). Подчеркивание функциональности музыки и поэзии выражается в принципе “согласованности”, который в европейской музыкальной практике применил в IX веке Ноткер³, а в сфере теории распространился в эпоху Возрождения» [16]. Профессор Мирумян справедливо определяет, что «языку поэмы присуще сочетание научной точности и художественной образности» [17]. Суммируя свои выводы об эстетических взглядах Ованеса Саркавага, К. Мирумян отмечает, что в поэме философ выделяет четыре основные функции искусства: «коммуникативную, гедонистическую, познавательную (просветительскую) и воспитательную, которые служат одной верховной цели – социальным и национальным интересам» [18]. (...) «продолжая традицию предыдущего периода армянской эстетической мысли, в частности, линию Давида Керакана (VIв.), Саркаваг видит ценность и значение искусства в его полезной роли в социальном плане и в долговечности его позитивного воздействия на духовный мир человека» [19].

Следующий раздел статьи посвящен одному из известных шараканов Ованеса Саркавага – песнопению на обедню из канона Св. Гевонду и его сподвижникам – «Պշխման շիր» («Воссияли ныне святые»), о котором Мирумян пишет: «Со-

циальные проблемы и тенденции, отраженные в поэме “Слово мудрости” получают определенность и национально-политическую направленность в шараканах, одах, посвященных армянским полководцам, царям и иным историческим лицам. Воспевающая историческое прошлое нации, великий мыслитель и патриот стремился обнадеежить и вдохновить соотечественников как в настоящем, так и будущем» [20]. Именно в этом ключе рассматривает Мирумян содержание шаракана Ованеса Саркавага, посвященного мученикам, отдавшим жизнь за веру Христову, отождествляя их подвиг с национально-освободительной борьбой. Точно также подходит Мирумян и к молитвам Саркавага, подчеркивая, что в этих молитвах поднимаются также вопросы социально-философского и морального порядка. Следуя примеру Григора Нарекаци, «Ованес Саркаваг обращается к Господу непосредственно, выявляя несоответствие между его целью и деянием» [21]. Социальная несправедливость и неравенство людей, отсутствие воздаяния несправедливым, нарушающим нормы христианской добродетели, царящие в реальной жизни, все это входит в противоречие с пониманием божественного провидения и милосердия. Отсюда близкие к Григору Нарекаци мотивы в его молитвах, вместе с тем здесь можно усмотреть предвосхищение социального протеста, столь ярко проявившегося в поэзии Фрика. Подводя итоги своего исследования, обобщая его, Мирумян пишет: «Творчество Ованеса Саркавага явилось порождением своего време-

³Ноткер Заика (840–912) – монах-бенедиктинец Сен-Галленского монастыря, поэт, музыкант, хронист и богослов. Причислен Католической церковью к лику блаженных в 1512 году. Автор около 40 сек-

венций на главные праздники литургического года, объединенные в 884 году в *Liber hymnorum* («Книгу гимнов»).

ни, отражением определенной исторической ситуации и, вместе с тем, это – взгляд в будущее. Благодаря ясности формы и программному характеру, оно приобретает особую силу воздействия на национальные чувства и сознание, приобщает к высоким идеям национального единения и в этом направлении формирует национальное самосознание» [22].

Заслуживает отдельного рассмотрения обширная статья К.Мирумяна «О соотношении вокальной и инструментальной музыки в эпоху Средневековья» [23]. Казалось бы, сфера музыкальной эстетики для Мирумяна в целом далекая. Однако проблема соотношения вокальной и инструментальной музыки, являющейся «одной из стержневых проблем музыкальной эстетики», как отмечает автор в преамбуле исследования, привлекла его внимание. Примечательно, что обращаясь к этой проблеме, Мирумян со свойственной ему широтой охвата избранной проблемы, не ограничился лишь взглядами армянских мыслителей, но обратился к ее различным аспектам начиная с античности. Опираясь на труды известных отечественных, русских и европейских музыковедов и историков эстетической мысли (Аберт, Саккетти, Комитас, Кушнарев, Грубер, Шестаков и др.), он дает широкий обзор становления и перипетий эволюции воззрений на данную проблему в трудах, некоторые из которых в Армении известны лишь узкому кругу специалистов. Обращаясь к данной теме, Мирумян совершенно справедливо указывает на то, что проблема соотношения вокальной и инструментальной музыки «пронизывает также всю историю музыкальной эстетики и музыкальной культуры, начиная с Древнего Востока и гречес-

кой античности. Во все культурно-исторические периоды и эпохи данная проблема проявлялась и решалась по-разному. До Нового времени она была тесно переплетена с морально-этическими, социальными, политическими, психологическими, мировоззренческими и др. факторами» [24]. Далее он обращает внимание на методологическое значение изучения этой проблемы: «...обращение к данному вопросу в аспекте развития музыкальной эстетики может иметь и самостоятельное значение, может послужить хорошим подспорьем для выявления ряда особенностей развития как музыкальной эстетики (в контексте развития музыкальной культуры, художественного мышления эпохи), так и художественного философского мировоззрения той или иной эпохи, отдельно взятой страны» [25].

В поле его зрения – Древний Китай и Индия, Египет, где вокальная музыка преимущественно превалировала в отношении инструментальной, имеющей подчиненную роль. Обращая внимание на специфику управления государством в Древнем Китае, Мирумян указывает: «Что касается теоретических трактатов, то в них на первое место выдвигалась государственно-политическая функция музыки. Цель музыки – способствовать удержанию в подчинении народные массы. Так, в одном из трактатов говорится, – продолжает он, – что “правила поведения, музыка, наказание и управление в конечном итоге едины”» [26]. В свою очередь, «греческая музыка претерпела определенное влияние египетской музыки», о чем свидетельствуют «не только сведения и легенды о годах ученичества Орфея и Пифагора (около 580–500 до н.э.) в Египте, а также сопряженность учения греков о гармонии небесных

сфер с музыкально-мистическими воззрениями египтян, идея о воспитательном значении музыки и целый ряд музыкальных инструментов, но и вопрос о соотношении вокальной музыки, инструментальной музыки и слов, подчиненное положение инструментальной музыки» [27]. Примечательно, что, согласно сообщениям Страбона и Диодора Сицилийского, как указывает Мирумян, «...в Египте не было в обычае изучение музыки, ибо считалось, что музыка не только бесполезна, но и вредна, так как изнеживает мужественность» [28]. Разумеется, речь идет об инструментальной музыке. «Только у Аристотеля, – продолжает Мирумян, – и то лишь как исключение, встречается мысль об эстетической сущности инструментальной музыки, намек на её самостоятельное значение» [29].

К сожалению, «от греческого музыкального искусства почти ничего не сохранилось, и мы можем судить о нем лишь по литературным источникам. (...) Поэтому, говоря о влиянии греческой музыки на музыкальное искусство других народов, в первую очередь имеется в виду музыкальная теория греков, а не практика музыкального исполнения. В греческом мировоззрении и системе духовных ценностей *музыкальная теория (и не только музыкальная) доминировала над музыкальной практикой*» [30]. Кстати, это отчетливо прослеживается на примере армянской традиционной теории музыки, о чем в свое время писал известный музыковед, ученик Комитаса Спиридон Меликян [31].

Обращаясь к музыкальной практике и теории Древнего Рима Мирумян прозорливо отметил несколько важных факторов. Ссылаясь на мнение известного историка музыки Л.А. Саккетти, он пишет, что «рим-

ляне смотрели на музыку, как на искусство, имеющее целью занимать слух. Нравственного значения, которое приписывали ей греческие мыслители, она не имела (...). Чувственный взгляд римлян на музыку привел к значительному понижению нравственного уровня. (...). Римляне, не ценя нравственного влияния музыки, не вводили её в воспитание юношества» [32].

Христианство, противопоставляясь языческой религии, как известно, отвергало все, связанное с ней. «Одним из основных компонентов оргиастических увеселений, характерных для римского общества, были музыкальные инструменты, на которых играли как мужчины, так и женщины (...). Поэтому (...), выступая против музыки, христианство особенно строго относилось к женщинам-музыкантам: “Христианская девушка не должна даже знать, что такое лира или флейта и в чем состоит её употребление”. (св. Иероним)» [33]. Важен вывод профессора Мирумяна о том, что христианство, «критикуя музыкальное искусство (...), на самом деле критиковала римскую музыку. И эта критика была не беспочвенной. (...) Другими словами, христианская религия в лице своих апологетов, отцов церкви отрицала не музыку как таковую, не как вид искусства, а господствующую в римском обществе реально звучащую музыку» [34]. Далее Мирумян приводит оценки музыки как таковой и инструментальной музыки, в частности, в трудах отцов церкви Климента Александрийского (Пв.) и Беды Достопочтенного (673–735гг.), показывая, какую радикальную трансформацию в течение 5–6-ти столетий претерпевает отношение церкви к инструментальной музыке не только как к виду искусства, но и в плане её нравственной

оценки – от резкого осуждения к полному одобрению. Как писал Беда Достопочтенный: «Польза музыки велика и сама она, осмелившаяся войти во врата церкви, удивительна и весьма добродетельна. Никакое знание не осмелилось войти во врата церкви за исключением музыки» [35].

На рубеже X–XI веков музыкальные инструменты начинают применяться в литургических драмах, в церковь проникает органная музыка. В светской музыке «инструментальная музыка особенно проявлялась в танцевальной музыке» [36]. Далее, как известно, эволюция профессиональной музыки в западноевропейских странах развивалась стремительно. Идеалы гуманизма эпохи Возрождения, бурное развитие городской культуры и тенденции секуляризации искусства в целом внесли свои решительные коррективы в сферу как церковной, так и светской музыки.

Второй раздел рассматриваемой статьи, Мирумян посвятил анализу армянской средневековой музыкальной культуры и особенностям ее развития, в частности, отражению соотношения вокальной и инструментальной музыки в трудах армянских мыслителей, отмечая, что отношение церкви к ней имело свои различия в Армении. «Комитас, А. Ованисян, Х. Кушнарев и другие, приходят к выводу, – пишет Мирумян, – что в основе церковно-музыкального искусства лежит народно-музыкальное искусство, что церковь усваивала и преобразовывала произведения народной музыки, включая и мелодии плясового характера» [37]. Основываясь на сочинениях армянских историков, он приводит примеры как из церковной, так и светской музыкальной практики, в частности, искусства гусанов. Весьма примечательной, хотя и

спорной, представляется мысль Мирумяна о присущем армянской музыке монодическом складе мышления: «Господство монодии в Армении по-видимому можно объяснить тем, что *если в период становления христианской религии пение в унисон символизировало единство церкви и народа, то впоследствии оно, в отличие от стран Запада, олицетворяло идею национального единства*» [38].

Известны и хорошо изучены богатые традиции музыкальной культуры Армении как дохристианской, так и средневековой эпох. В частности, в вопросе соотношения вокальной и инструментальной музыки примечательны воззрения Давида Анахта, Степаноса Сюнеци, Григора Магистроса, Ованеса Ерзнкаци и других, отражающие реалии музыкального быта Средневековья и отношения церкви к различным видам музыки. Уже в «Определениях философии» Давидом Непобедимым (V–VI вв.) была дана четкая дифференциация видов вокальной и инструментальной музыки, из которой состоит музыкальное искусство: «По его мнению, – цитирует Давида Мирумян, – инструментальная музыка образуется с помощью лир, рожков и медных тарелок, а настоящая музыка для своего образования нуждается только в голосе» [39]. В этом проявляется дихотомный принцип, которого придерживался Давид в классификации искусства вообще и музыки, в частности, подразделяя искусство на доброе, вечное и полезное, подразумевая музыку, звучащую в церкви, и недоброе, бесполезное и недолговечное, подразумевая светское вокально-инструментальное и сугубо инструментальное музыкальное искусство.

В эстетических взглядах Степаноса Сюнеци (VII–VIII вв.), отраженных в его «Толковании грамматики», Мирумян выделяет фрагмент, посвященный гусанскому искусству. Он пишет: «В связи с освещением структуры гусанских мелодий Степаннос Сюнеци впервые в истории армянской эстетической мысли выдвинул принцип “лоскутности”. Очевидно, под этими формами понимаются таги, построенные из различных по настроению и внутренне связанные между собой музыкально-поэтических частей» [40].

На основе суждений эстетического характера Григора Магистроса (XI в.) [41], также упоминающего принцип «лоскутности» в рапсодии (хагнергутюн), Мирумян высказывает интересное, хотя и не бесспорное предположение, что «под частями, “кусками” музыкально-поэтических произведений подразумевается *не только и не столько сочетание различных гласов, сколько гармоничное единство поэтической метрики и музыкальной ритмики, то есть текста и мелодии*» [42].

Наконец, в заключительном разделе исследования Мирумян обращается к эстетическим воззрениям крупного мыслителя и теоретика музыки XIII века Ованеса Ерзнкаци, который в «Толковании грамматики» «под “гармоничностью” лирической поэзии подразумевает “согласованность между голосом и инструментальной игрой, как это замечается и при исполнении гусанских песен. Ованес Ерзнкаци подчеркивает также самостоятельное значение игры на музыкальных инструментах, полагая, что не всё возможно выразить посредством слов. Многие чувства и мысли в состоянии отразить лишь инструментальная музыка.

«Данная концептуальная установка, – как пишет Мирумян, – становится достоянием армянской музыкально-эстетической мысли» [43]. В дальнейшем она получила свое продолжение в трудах Вардана Аревелци, Аракела Сюнеци и других.

Суммируя свои наблюдения, автор заключает, что «проблема соотношения вокальной и инструментальной музыки действительно является “сквозной” и проходит красной нитью через всю историю культуры Древнего Востока, Античности и Средневековья, в том числе армянской. При этом намечается четкая демаркация двух уровней: уровня теоретического осмысления проблемы и ее официального признания, и уровня музыкальной практики, особенно в музыкальной практике народных масс (в первую очередь городской музыкальной жизни). (...) В скрытом или явном противоборстве различных концептуальных установок на проблему соотношения вокальной и инструментальной музыки проявляется общая тенденция развития как составляющих музыкальной культуры, так и их взаимоотношений внутри музыкальной культуры как некоей целостности» [44].

В заключение хочу отметить, что эстетические труды Карлена Артаваздовича Мирумяна представляют несомненную научную ценность. Они написаны в лучших традициях армянских ученых Аршака Адамяна, Вазгена Чалояна, Сена Аревшатяна, Никогоса Тагмизяна и других, в той или иной степени обращавшихся к эстетической тематике. Думается, что к этим трудам в будущем еще не раз будут обращаться исследователи новых поколений.

ЛИТЕРАТУРА

1. *Շիրակացի Ան.* Միրումյան Կ., Պողոսյան Վ., Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ, ՀԳԱԱ, Եր. «Նոյյան Տապան», 1998:
2. *Միրումյան Կ.* Հովհաննես Սարկավազի աշխարհահայացքը, Եր., 1984:
3. *Мирумян К.А.* Становление естественнонаучной мысли в Армении, Ер.: Изд-во АН, 1991.
4. *Мирумян К.А.* Антология армянской педагогической мысли, Ер., 2019.
5. *Мирумян К.А.* Армянская политическая мысль. Формирование и этапы развития (до XVIII века), Ер.: Изд-во РАУ, 2021.
6. *Аревшатян С.С., Тагмизян Н.К.* «Армения» // «Музыкальная эстетика стран Востока», общая редакция и вступит. статья В.П. Шестакова. М.: «Музыка», 1967. С. 341.
7. *Միրումյան Կ.* Հովհաննես Սարկավազի էսթետիկայի գաղափարատեսական ակունքները // ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքի տարեգիրք. «Հայ գեղագիտական մտքի պատմությունից», Եր., 1986, էջ. 28–55:
8. *Միրումյան Կ.* Յովհաննես Սարկավազի գրական ժառանգությունը որպես փիլիսոփայական-էսթետիկական մտքի աղբյուր // Հայկազեան Հայագիտական Հանդես, ԺԷ, Պեյրուր, 1997, էջ. 311–329:
9. *Միրումյան Կ.* Հովհաննես Սարկավազի էսթետիկայի գաղափարատեսական ակունքները // ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքի տարեգիրք. «Հայ գեղագիտական մտքի պատմությունից», Եր., 1986, էջ 53:
10. Там же. С. 52.
11. *Միրումյան Կ.* Յովհաննես Սարկավազի գրական ժառանգությունը որպես փիլիսոփայական-էսթետիկական մտքի աղբյուր // Հայկազեան Հայագիտական Հանդես, ԺԷ, Պեյրուր, 1997, էջ 311:
12. *Արևշատյան Ա.* Անիի երաժշտական մշակույթը, Եր., «Գիտություն», 2014, էջ 108–127:
13. *Միրումյան Կ.* Յովհաննես Սարկավազի գրական ժառանգությունը որպես փիլիսոփայական-էսթետիկական մտքի աղբյուր // Հայկազեան Հայագիտական Հանդես, ԺԷ, Պեյրուր, 1997, էջ 312:
14. Там же.
15. Там же. С. 314.
16. Там же. С. 313.
17. Там же. СС. 313–314.
18. Там же. С. 317.
19. Там же.
20. Там же. С. 323.
21. Там же.
22. Там же. С. 324.
23. *Мирумян К.* О соотношении вокальной и инструментальной музыки в эпоху Средневековья // «Из истории армянской эстетической мысли», сборник исследований. Книга 6-ая, под редакцией Я.И. Хачикяна и К.А. Мирумяна / Ответственный редактор К.А. Мирумян, Ер., 2006. СС. 125–146.
24. Там же. С. 125.
25. Там же. СС. 125–126.
26. Там же. С. 126.
27. Там же.

28. Там же.
29. Там же.
30. Там же. С. 128.
31. *Մելիքեան Ս.* Յունական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսականի վերայ, Տփղիս, 1914:
32. *Միրումյան Կ.* О соотношении вокальной и инструментальной музыки в эпоху Средневековья // «Из истории армянской эстетической мысли», сборник исследований. Книга 6-ая, под редакцией Я.И. Хачикяна и К.А. Мирумяна. Ответственный редактор К.А. Мирумян, Ер., 2006. С. 135.
33. Там же. С. 131.
34. Там же. С. 132.
35. Там же. С. 134.
36. Там же.
37. Там же. С. 135.
38. Там же. С. 137.
39. Там же. С. 141.
40. Там же. СС. 141–142.
41. *Արեւիստյան Ա.* Григор Магистрос – гимнограф и эстетик. Ер.: «Гитутюн», 2018. СС. 68–103.
42. *Միրումյան Կ.* О соотношении вокальной и инструментальной музыки в эпоху Средневековья // «Из истории армянской эстетической мысли», сборник исследований. Книга 6-ая, под редакцией Я.И. Хачикяна и К.А. Мирумяна. Ответственный редактор К.А. Мирумян, Ер., 2006. С. 142.
43. Там же.
44. Там же. С. 144.

KARLEN MIRUMYAN – THE AESTHETICIAN

A. Arevshatyan

ABSTRACT

This article is devoted to the works of Professor Karlen Mirumyan that touch upon the issues of the history of aesthetic thought, which for the first time become the subject of a separate consideration. In particular, the articles highlighting the ideological and theoretical origins of the aesthetics and literary heritage of the outstanding scientist-encyclopedia and hymnographer of the Armenian Middle Ages Hovhannes Sarkavag (XI–XII centuries), as well as the article “On the relationship between vocal and instrumental music in the Middle Ages” are of particular interest. In them K.A. Mirumyan made remarkable conclusions about the progressive contribution of Hovhannes Sarkavag not only to Armenian aesthetic thought, but also to the aesthetic thought of his time as a whole. Turning to the theme of the relationship between vocal and instrumental music, Mirumyan considers the problem from the Ancient East and Greek antiquity up to the New Age, noting that it, having a number of national characteristics, each of which deserves a separate study, is one of the fundamental ones in the history of musical aesthetics and musical culture.

Keywords: Karlen Mirumyan, aesthetics, Armenia, Middle Ages, Hovhannes Sarkavag, vocal and instrumental music.

ԿԱՌԼԵՆ ՄԻՐՈՒՄՅԱՆԸ՝ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

*Լ.Թ. Ասատրյան
մանկ.գ.դ., պրոֆ.*

Խ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

asatryanlaura49@aspu.am

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է մեր օրերի մեծագույն գիտնականի, փիլիսոփա-մանկավարժի՝ պրոֆեսոր Կառլեն Միրումյանի ներդրումը հայ մանկավարժական մտքի պատմության մեջ: Հիմնավորվում է, որ լինելով խոշորագույն փիլիսոփա, նա միաժամանակ խոշորագույն մանկավարժ էր, ով մատենադարանի պահոցներից վեր հանեց և աշխարհին ներկայացրեց մինչև այսօր չուսումնասիրված հայ խոշորագույն փիլիսոփաների, գիտնական մանկավարժների, քաղաքական գործիչների դեռևս չուսումնասիրված և առայսօր արդիական հնչեղություն ունեցող տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները:

Կառլեն Միրումյանը հայ մանկավարժական մտքի ակունքներում էր այն կարևորագույնի գիտակցմամբ, որ հայ մանկավարժական մտքի պատմությունը մանկավարժական ուսմունքների սոսկ էմպիրիկ, նկարագրական շարադրանքը չէ, ինչպես կարծում էին նախորդ հետազոտողները և այդպես էլ ներկայացնում էին, այլ ըստ նրա՝ հայ մանկավարժական մտքի հարուստ պատմությունն իր մեջ ներառում է անցյալի մեծ մտածողների մանկավարժական հայեցակարգերը, մեթոդաբանական և գիտամեթոդական մոտեցումները, կրթության փիլիսոփայությունը, դպրոցաշինական, գրքաստեղծման գործունեությունը, որոնք էական դեր են կատարել և այսօր էլ կարող են կատարել կրթության ժամանակակից ռազմավարության մշակման և գործնականում դրանց ներդրման գործում:

Մասնավորապես, նրա **«Հայ մանկավարժական մտքի անթոլոգիա: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»** ռուսերեն լեզվով գրված կոթողային աշխատությունում համակարգված ձևով ներկայացված են հայ դպրոցի և մանկավարժական մտքի փաստագրական պատմությունը, տարբեր դարաշրջաններում հայ կրթական համակարգի և մանկավարժական մտքի զարգացման յուրահատկություններն ու օրինաչափությունները:

Հիմնաբառեր՝ հայ մանկավարժական միտք, փիլիսոփա, ազգային մտածողություն, քաղաքակրթական, պատմություն, հայեցակարգեր, մեթոդաբանություն, գիտամեթոդական մոտեցումներ, կրթության փիլիսոփայություն, դպրոցաշինական գործունեություն, կրթական համակարգ, զարգացում:

Ինձ համար անչափ դժվար է հաղթահարել իմ լավագույն բարեկամի՝ տաղանդաշատ գիտնականի, ազնվագույն մարդու, անաչառ խորհրդատուի վաղաժամ կորստյան ցավը և գրել նրա մասին: Բայց հոգու պարտք ունեմ կատարելու և ուզում եմ խոսքս սկսել նրա անուն-ազգանունից՝ ԿԱՌԼԵՆ ՄԻՐՈՒՄՅԱՆ: Գրում եմ մեծատառերով, որովհետև նա մեծատառով ՄԱՐԴ էր, ով իր մեջ կրում էր անչափելի գիտական ներուժն ու աստվածաշնորհ տիեզերական լույսը: Նա անմնացորդ սիրով սիրում էր իր հայրենիքն ու իր ազգը և մինչև իր երկրային կյանքի վերջը բոլորանվեր ծառայեց նրան:

Ես այն երջանիկ մարդկանցից մեկն եմ, ում բախտ է վիճակվել համագործակցել ակնավոր գիտնականի հետ, լինել նրա՝ **«Հայ մանկավարժական մտքի անթուղի: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»** կոթողային աշխատության խմբագիրներից մեկը:

Կառլեն Միրումյանն իր մեջ խտացրել էր հայ փիլիսոփայական մտքի անպարփակ խորությունը, մանկավարժ-գիտնականի խորամտությունը, լեզվաբանի բառոգտագործման վարպետությունը, գրաբարյան լեզվամտածողությունը, և, որ ամենակարևորն է, հայրենասիրությունն ու ազգային մտածողությունը, ինչի արդյունքում նրա ստեղծագործ գրչի տակ շունչ ու ոգի էին առնում հայ խոշորագույն փիլիսոփաների, գիտնական մանկավարժների, քաղաքական գործիչների դեռևս չուսումնասիրված և առայսօր արդիական հնչեղություն ունեցող տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները:

Փիլիսոփա մակավարժի գիտական խոսքի շարունակում օր օրի իրենց տեղն էին գտնում ու կենդանանում հայ մանկավարժական մտքի կարկառուն դեմքերը՝ իրենց սոցիալ-փիլիսոփայական, մանկավարժական հայացքներով ու գործունեությամբ, կրթության փիլիսոփայությամբ: Այդ ամենի համընդհանրացումը եղան նրա գիտական բազմաթիվ հոդվածները, մենագրություններն ու աշխատությունները:

Կառլեն Միրումյանի գիտական հետազոտություններում առանձնակի տեղ էր գրավում հնագույն շրջանի և միջնադարյան հայ մանկավարժական մտքի պատմությունը, որն, ըստ նրա, շարունակում է մնալ հայ հոգևոր մշակույթի քիչ ուսումնասիրված բնագավառներից մեկը [1]:

Կառլեն Միրումյանը հայ մանկավարժական մտքի ակունքներում էր այն կարևորագույնի գիտակցմամբ, որ հայ մանկավարժական մտքի պատմությունը մանկավարժական ուսմունքների սոսկ էմպիրիկ, նկարագրական շարադրանքը չէ, ինչպես կարծում էին նախորդ հետազոտողները և այդպես էլ ներկայացնում էին, այլ ըստ նրա՝ հայ մանկավարժական մտքի հարուստ պատմությունն իր մեջ ներառում է անցյալի մեծ մտածողների մանկավարժական հայեցակարգերը, մեթոդաբանական և գիտամեթոդական մոտեցումները, կրթության փիլիսոփայությունը, դպրոցաշինական, գրքաստեղծման գործունեությունը, որոնք էական դեր են կատարել և այսօր էլ կարող են կատարել կրթության ժամանակակից ռազմավարության մշակման և գործնականում դրանց ներդրման գործում:

Մինչև «Հայ մանկավարժական մտքի անթուղզիայի» ստեղծումը նրա հեղինակությամբ լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ, մենագրություններ, որոնք նվիրված են ոչ միայն հայ հին և վաղ միջնադարյան փիլիսոփայության ձևավորմանն ու զարգացմանը, այլև փիլիսոփայական մտքի շրջանակներում հայ փիլիսոփա մանկավարժների մանկավարժական հայացքների, հայեցակարգային մոտեցումների, կրթության փիլիսոփայության վերլուծությանն ու լուսաբանմանը [2]: Դրանցում նորովի են մեկնաբանվել հայ փիլիսոփա մանկավարժների մի շարք հիմնադրույթներ հայ դպրոցի և կրթության գործի կազմակերպման, ուսուցման և դաստիարակության խնդիրների լուծման վերաբերյալ, ինչպես նաև որոշակի ճշգրտումներ են մտցվել հայագիտության մեջ տեղ գտած գնահատականներում [3]:

Մեծանուն գիտնականը նպատակ էր դրել մենագրության շրջանակներում առաջին անգամ համապարփակ, համակարգված, փաստագրական լայն հիմքի վրա ուսումնասիրել և արժևորել հայ դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման միտումները պատմական Հայաստանում՝ սկսած անտիկ շրջանից մինչև XVIII դարը, քանի որ ցայսօր մնում են չուսումնասիրված և չբացահայտված հայ բազմադարյան հոգևոր մշակույթի մաս կազմող, իրենց ժամանակաշրջանից շատ առաջ անցած մանկավարժ գիտնականների մանկավարժական ուսմունքների, հայեցակարգային մոտեցումների փիլիսոփայական-իմացաբանական, մեթոդաբա-

նական, աշխարհայացքային հիմքերը, ինչպես նաև հայ փիլիսոփաների, պատմիչների, բնագետների, իրավաբանների, քաղաքական, հոգևոր գործիչների և մեծ մտածողների գիտամանկավարժական, լուսավորական, դպրոցաստեղծ, դասագրքաստեղծ գործունեության հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները:

Պրոֆեսոր Միրումյանն իրականացրեց իր նպատակն ու առաջին անգամ իր **«Հայ մանկավարժական մտքի անթուղզիա: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»** ուսերեն լեզվով գրված աշխատությունում համակարգված ձևով ներկայացրեց հայ դպրոցի և մանկավարժական մտքի փաստագրական պատմությունը, տարբեր դարաշրջաններում հայ կրթական համակարգի և մանկավարժական մտքի զարգացման յուրահատկություններն ու օրինաչափությունները:

Անառարկելի է, որ մինչև այս բարձրարժեք աշխատությունը ոչ մի հետազոտողի կողմից առաջօր այդպես համահավաք և ամփոփ ձևով հետազոտված և ներկայացված չէր նշված ժամանակահատվածի հայ մանկավարժական մտքի պատմության լիարժեք որևէ ուսումնասիրություն, որը կարող էր հիմք ծառայել վերլուծելու, համադրելու, համեմատելու հայ կրթական համակարգի արդի զարգացումները համաաշխարհային մանկավարժական մտքի զարգացման համատեքստում: Ուստի Կ. Միրումյանի կողմից հայ մանկավարժական մտքի զարգացման փուլերի, առանձնահատկությունների, չուսումնասիրված հեղինակների մանկավարժական

ուսմունքների, հայեցակարգային մոտեցումների բացահայտումն ու արժևորումը, դրանց դերի ու նշանակության հիմնավորումը առանձնակի կարևորություն են ձեռք բերում հայ ժամանակակից կրթական համակարգի ձևավորման, սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման, ազգապահպանման և ազգային հոգևոր-մշակութային անվտանգության ապահովման և այն համաշխարհային գիտական հանրությանը ներկայացնելու տեսանկյունից:

Այս առումով Կ. Ա. Միրումյանի «Հայ մանկավարժական մտքի անթոլոգիա» խորագրով աշխատությունը ոչ միայն հայ, այլև համաշխարհային կրթամշակութային իրականության մեջ աննախադեպ երևույթ է իր նպատակադրմամբ, բովանդակային ընդգրկմամբ ու գաղափարական հագեցվածությամբ:

Անթոլոգիան ընդգրկում է մեծածավալ նյութ. հեղինակը գիտական բարձր պատասխանատվությամբ և նվիրումով ի մի է բերել հայ մանկավարժական մտքի՝ հնագույն շրջանից մինչև 18-րդ դարն ընդգրկող հատընտիրը, որն ընդգրկում է ուսումնասեր ու կրթական գործին նվիրյալ թագավորների, հոգևոր առաջնորդների, մանկավարժության տեսության և պատմության ոլորտում մեծ ներդրում ունեցած փիլիսոփա մանկավարժների դպրոցաստեղծ գործունեությունը, կրթադաստիարակչական ուսանելի մտքերը, գաղափարները, տեսություններն ու սկզբունքները, որոնք ամփոփված են նրանց աշխատություններում և որոնց մեծ մասը ընդհուպ մինչև 18-րդ դարը դասագրքերի դեր են կատարել հայկական դպրոցներում:

Անթոլոգիայում ներառված են նաև փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական, իրավական, հոգևոր բնույթի փաստագրական նյութեր, որոնք թույլ են տալիս խորությամբ ընկալել տվյալ ժամանակաշրջանում մանկավարժական մտքի զարգացման ընթացքը: Գրաբարի գերազանց իմացությունը մեծ հնարավորություն էր ընձեռել տաղանդաշատ գիտնականին խոր վերլուծությամբ ուսումնասիրել, բացահայտել և գիտական շրջանառության մեջ է դրել ցայսօր անհայտ կամ քիչ հայտնի աշխատություն հայ մտածողների և մանկավարժների մանկավարժական ուսմունքների ու հայեցակարգերի գիտական և գաղափարախոսական ուղղվածությունը և հիմնավորել դրա բացառիկ նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ու համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում:

Գիտական այդ բարձրարժեք աշխատությունում հայ մեծանուն մտավորականների՝ փիլիսոփա մանկավարժների փիլիսոփայական-իմացաբանական հայացակարգերի վերլուծությունը, մեթոդաբանական մոտեցումները ներկայացված են ժամանակաշրջանի կրթության բովանդակության, գաղափարական ուղղվածության և գործնական մոտեցումների տիրույթում: Մասնավորապես բովանդակային վերլուծության և համադրման, պատմական փաստերի որոշակիացման, համակարգման, ընդհանրացման, տեսակավորման, պատմահամեմատական և իմաստաբանական մեթոդների կիրառման հիման վրա նա բնութագրել և կրթության փիլիսոփայության տեսանկյունից մեկնա-

բանել է բազմադարյան հոգևոր մշակույթի մաս կազմող մանկավարժական ուսմունքները և նրանց գիտամանկավարժական շեշտադրումները, մանկավարժական մտքի շարժընթացային զարգացումները՝ հիմնավորելով հայ կրթական համակարգի կայացման և զարգացման գործում դրանց դերն ու նշանակությունը, շեշտադրելով հայ կրթական համակարգի և մանկավարժական մտքի զարգացման տրամաբանությունն ու դրա օրինաչափ դրսևորումների առանձնահատկությունները:

Գիտնական հետազոտողը փաստագրական նյութի հիման վրա ցույց է տվել դպրոցական և կրթական խնդրակարգի փոխկապվածությունն ու փոխադասանավորվածությունը հայ ժողովրդի հասարակական, ազգային և մշակութային կյանքի մյուս կողմերի հետ, բացահայտել միջնադարյան հայ մանկավարժական տեսությունների, կրթական համակարգի հայեցակարգային և ծրագրային բնույթը, դրանց առնչությունը ազգի առջև ծառացած ճակատագրական խնդիրներին:

Գործառույթային իմաստով անթուղ գիայում որոշակիացված են հայ մանկավարժական մտքի պատմության դերն ու նշանակությունն այսօր և այսուհետ, քանի որ հեղինակը, առաջնորդվելով մեթոդաբանական գիտելիքների բազմամակարդակ հայեցակարգով, համեմատական եզրությամբ որոշակիորեն իրար է կապել անցյալը, ներկան և ապագան սահուն անցումների և գերակա ձեռքբերումների հենքի վրա: Նշվածները արդյունք են փիլիսոփայական, մանկավարժական, բնագիտական, սոցիոլոգիական մտքի համադրման,

որի հիմնական առանցքը հեղինակը համարում է ազգային ինքնության, ինքնագիտակցության, աշխարհընկալման մեթոդաբանական հիմքերը, որոնք ոչ միայն համահունչ են արդի կրթական քաղաքակրթության մակարդակին, այլև հնարավորություն են տալիս ուղղորդելու մեր հայ պատմամշակութային և գիտակրթական ձեռքբերումները համաշխարհային տիրույթ:

Աշխատությունը մնայուն, կոթողային արժեք է, քանի որ մեր իրականության մեջ առաջին անգամ այսօրինակ լայն ընդգրկմամբ ռուսաց լեզվով ներկայացվում են նաև մանկավարժական, բարոյագիտական, արժեքաբանական, աղբյուրագիտական մեծ ներուժ ունեցող բանահյուսական նմուշներ՝ առասպելներ, վիպերգեր, ավանդազրույցներ, հատվածներ «Մասնածոեր» դրուցազնավեպից: Ուսանելի է հատկապես կրթադաստիարակչական բովանդակությամբ բանահյուսական ժանրերի՝ հեքիաթների, առած-ասացվածքների դիպուկ ընտրությունն ու վերլուծությունը: Մեծ տեղ է հատկացված հայ պատմիչների երկերին, որոնց շնորհիվ արժեքավոր տեղեկություններ են հասել հայ դպրոցների, դպրոցական ծրագրերի, կրթության բովանդակության, ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների մասին:

Անթուղգիայի մեծագույն արժեքը պայմանավորված է նաև նրանով, որ ներկայացված բնագրերն ուղեկցվում են հանգամանալից վերլուծություններով, ինչն օտարալեզու ընթերցողներին առավել խորությամբ հաղորդակից կդարձնի հայ մշակույթի նվիրյալների ազգանվեր գործու-

նեությանն ու նրանց մինչև այժմ էլ արդիական մանկավարժական հայացքներին վերաբերող ընտիր էջերին:

Անթուղզիան ծանրակշիռ ներդրում է ոչ միայն մանկավարժական գիտության, այլև աղբյուրագիտության, արժեքանության և մշակութաբանության մեջ, քանի որ գիտամանկավարժական վերլուծություններն ու մեկնաբանություններն արված են հայագիտության, մշակութաբանության և արժեքանության լայն համատեքստում: Այն էական ներդրում է համաշխարհային մանկավարժական մտքի պատմության մեջ և քաղաքակրթական կարևորագույն նշանակություն ունի:

Ըստ մեծանուն գիտնականի՝ յուրաքանչյուր նոր սերունդ, յուրաքանչյուր պատմամշակութային դարաշրջան, յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմական և ազգային գոյության տարբեր փուլերում վերընթերցում, իմաստավորում, վերաշա-

րադրում է պատմությունը՝ կարծես նորից վերագտնելով անցյալը. Յուրաքանչյուր ազգ պարբերաբար դիմում է անցյալի հոգևոր և մշակութային արժեքների վերաիմաստավորմանն ու վերարտադրությանը՝ գիտության նոր նորմերի և իդեալների, նոր աշխարհայացքի, սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարական կարիքների և պահանջների տեսանկյունից [1, էջ10]:

Կառլեն Միրումյանն էլ որպես այդ սերնդի ականավոր ներկայացուցիչ, ազգանվեր գիտնական տքնաջան խիզախումով բացահայտեց, իմաստավորեց և աշխարհին ներկայացրեց հայ հոգևոր և մշակութային ժառանգության կարևորագույն մաս կազմող մանկավարժական մտքի պատմությունը և այլ գիտական մեծարժեք մնայուն կոթողներ, որոնք դարձան գրավոր հուշարձաններ և նրա անունը տանելու են դարերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Мирумян К.А.* Антология армянской педагогической мысли. Ер., 2019.
2. *Արևշատյան Ս.Ս., Միրումյան Կ.Ա.* Հայոց փիլիսոփայության պատմություն, Եր., «Լուսաբաց հրատարակչություն», 2007, էջ 4:
3. *Միրումյան Կ.Ա.* Անանիա Շիրակացի, Եր., «Լուսաբաց հրատարակչություն», 2012, էջ 4:

КАРЛЕН МИРУМЯН В ИСТОКАХ АРМЯНСКОЙ ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ

Л.Т. Асатрян

АННОТАЦИЯ

В статье представлен бесценный вклад крупнейшего ученого современности, философа-педагога профессора Карлена Мирумьяна в историю армянской педагогической мысли. Утверждается, что, будучи величайшим философом, он был в то же время великим педагогом, который извлек из архивов Матена-

дарана и представил миру теории и концептуальные подходы величайших армянских философов, ученых педагогов, политических деятелей, не изучены до сих пор и имеют современный резонанс по сей день.

Карлен Мирумян стоял у истоков армянской педагогической мысли с важнейшим осознанием того, что история армянской педагогической мысли – это не просто эмпирический, описательный очерк педагогического учения, как думали и представляли предшествующие исследователи, а, по его мнению, богатая история Армянской педагогической мысли включает в себя педагогические концепции великих мыслителей, методические и научно-методические подходы, философия образования, школьное строительство, книгоиздательская деятельность, которые сыграли значительную роль и еще могут сыграть роль в разработке современных стратегий образования и их реализация на практике. В частности, в его монументальном труде «Антология армянской педагогической мысли», с древнейших времен до наших дней, написанном на русском языке, систематически представлена документальная история армянской школы и педагогической мысли, особенности и закономерности развития армянской системы образования и педагогической мысли разных эпох.

Ключевые слова: армянская педагогическая мысль, философ, национальное мышление, цивилизационное, история, концепции, методология, научно-методические подходы, философия образования, школьное строительство, система образования, развитие.

KARLEN MIRUMIAN, IN THE CORNERS OF ARMENIAN PEDAGOGICAL THOUGHT

L. Asatryan

ABSTRACT

The article presents the contribution of today's greatest scientist, philosopher-pedagogue professor Karlen Mirumyan to the history of Armenian pedagogical thought. It is argued that being the greatest philosopher, he was at the same time a great pedagogue, who took out from the archives of the library and presented to the world the theories and conceptual approaches of the greatest Armenian philosophers, scientific pedagogues, political figures that have not been studied until now and have a modern resonance to this day.

Karlen Mirumyan was at the beginning of Armenian pedagogical thought with the most important realization that the history of Armenian pedagogical thought is not just an empirical, descriptive essay of pedagogical teachings, as previous researchers thought and presented, but according to him, the rich history of Armenian pedagogical thought includes the past. Pedagogical concepts of great thinkers, methodological and scientific-methodical approaches, philosophy of education, school construction, book-making activities, which played a significant role and can still play a role in the development of modern education strategies and their implementation in practice.

In particular, his monumental work “Anthology of Armenian Pedagogical Thought” written in Russian language from ancient times to the present day systematically presents the documentary history of the Armenian school and pedagogical thought, the peculiarities and patterns of the development of the Armenian educational system and pedagogical thought in different eras.

Keywords: Armenian pedagogical thought, philosopher, national thinking, civilizational, history, concepts, methodology, scientific-methodical approaches, philosophy of education, school building activity, educational system, development.

ԱԶԳԱՅԻՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՌԼԵՆ ՄԻՐՈՒՄՅԱՆԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Լ. Ս. Սարվազյան
փիլիս. գ. թ., դոցենտ

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտ*

lilit.sarvazyan@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում է Կ. Միրումյանի ազգային մեթոդաբանական հայեցակարգը: Նա հիմնավորում է, որ հասուն ու զարգացած քաղաքական միտք ունեցող ժողովուրդը պետք է ունենա իր մեթոդաբանական հայեցակարգը: Մեթոդաբանական սկզբունքները պետք է բխեն իրական պատմամշակութային գործընթացի կոնկրետ վերլուծությունից և արտացոլեն այս գործընթացի էությունն ու ներքին օրինաչափությունները: Հիմնվելով Հայոց պատմության պատմափիլիսոփայական վերլուծության վրա՝ փիլիսոփան պնդում է, որ պետականության բացակայության պայմաններում ավելի ճիշտ է խոսել ոչ թե հասարակության կամ սոցիալական համայնքի, այլ ազգի և ազգային համայնքի մասին: Միրումյանի փիլիսոփայական-քաղաքական հայեցակարգի մեթոդաբանական ելակետը ազգն է, ազգի էության հիմքերը, որոնց ձևակերպումը ազգային խնդիրների ըմբռնման բանալին է:

Հիմնաբաներ՝ Կ. Միրումյան, ազգային մեթոդաբանական հայեցակարգ, պատմամշակութային գործընթաց, ազգային կեցություն, գաղափարաքաղաքական միասնություն:

Հայ փիլիսոփայության պատմաբան, քաղաքագետ, մանկավարժ, պրոֆեսոր Կառլեն Միրումյանի գիտափիլիսոփայական ժառանգությունը իմաստավորվում է հայ փիլիսոփայության պատմության և մեթոդաբանության, պատմության փիլիսոփայության, ազգային ու համաշխարհային քաղաքական գիտության պատմության և տեսության, հայ մանկավարժական մտքի պատմության գիտամեթոդաբանական վերլուծությամբ: Նրա

մենագրություններում, ուսումնամեթոդական ձեռնարկներում և գիտական բազմաթիվ հոդվածներում փաստարկվում են հայոց պետականության ու քաղաքական անկախության, ինքնիշխանության, քրիստոնեական արժեհամակարգի և հայադավանության պահպանման, ազգային միասնության, հայոց մշակութային-քաղաքակրթական ինքնության գաղափարները, սահմանադրական կառավարման սկզբունքները, մարդու,

քաղաքացու և ազգային իրավունքների անօտարելիությունը, ազգային քաղաքականության նպատակներն ու միտումները:

Հարկ է նշել, որ հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության քաղաքական իրողությունների համատեքստում անհրաժեշտ էր դարձել վերաիմաստավորել ազգային փիլիսոփայական, քաղաքական գաղափարները, հայեցակարգերը և դրանց առնչությունը դարաշրջանի քաղաքական կեցությանն ու արդիականությանը: Բնականաբար՝ վերաիմաստավորումը ենթադրում էր մեթոդաբանական նախկին տեսությունների քննական վերլուծություն և նոր սկզբունքների ու չափորոշիչների առաջադրում: Խնդիրը բավական բարդ էր, և դրա լուծման նպատակով XX դարավերջին և XXI դարասկզբին հայ որոշ հեղինակներ (Ս. Արևշատյան, Հ. Գևորգյան, Հ. Միրզոյան, Կ. Միրումյան, Ռ. Միրումյան, Ս. Սարգսյան և այլք) հանդես եկան փիլիսոփայապատմական հետազոտությունների մեթոդաբանական խնդիրների շուրջ ուրույն մեկնաբանությամբ: Այս առումով առանձնակի արժևորվում է Կառլեն Միրումյանի առաջադրած մեթոդաբանական հայեցակարգը, որը համահունչ է անցյալի ազգային մեթոդաբանական մտքին:

Կ. Միրումյանի փիլիսոփայաքաղաքական մտակառուցումների մեթոդաբանական ելակետը **ազգն է, ազգի կեցությանին հիմքերը**, որոնց բացահայտումը բանալի է՝ հետազոտելու ազգային հիմնախնդիրները: Ըստ մտածողի՝ «...գիտելիքի մեթոդաբանական կողմնորոշիչների և սկզբունքների, մասնավորապես՝ մեթոդա-

բանական հիմքերի մշակումը առավել հրատապ է դառնում հասարակության զարգացման բեկումնային փուլերում, երբ հոգևոր արժեքների «հին» համակարգի վերագնահատման, անձի կենսական դիրքորոշման, քաղաքացիական և գաղափարաքաղաքական կողմնորոշման վերանայման անհրաժեշտություն է ծագում»[1]:

Հայտնի է, որ Խորհրդային Միության ժամանակաշրջանում հումանիտար գիտությունները, այդ թվում՝ հայ փիլիսոփայության պատմությունը զարգանում էին մարքսիստական մեթոդաբանության հիման վրա: Միրումյանի դիտարկմամբ՝ մարքսիզմի հիմնադիրներն ինքնին նպատակ չունեին՝ ստեղծելու փիլիսոփայապատմական և քաղաքագիտական հետազոտությունների ավարտուն մեթոդաբանություն: Բացի այդ, մարքսիստական մեթոդաբանության ոչ բոլոր մեթոդներն ու սկզբունքներն են հերքելի: Այլ հարց է, որ «...այն բացարձակ և միակ ճշմարիտ մեթոդաբանությունը չէ, ինչպիսին այն համարվում էր տասնամյակների ընթացքում» [2]: Ընդ որում՝ պրոֆ. Միրումյանի այս դիտարկումը վերաբերում է ոչ միայն մարքսիստական, այլև անցյալի ու ժամանակակից ցանկացած տեսության ու մեթոդաբանության: Ըստ մտածողի՝ դրանցից որևէ մեկը չի կարող հավակնել բացարձակ, «միակ գիտականը լինելու» կարգավիճակի, որովհետև յուրաքանչյուր տեսություն պատմական գործընթացներն ու անցյալի քաղաքական ուսմունքները հետազոտում է՝ ունենալով որոշակի նպատակ: Նա նաև հաստատում է, որ մեթոդաբանական բոլոր հայեցակարգերն ունեն գոյության հավասար իրավունք, իսկ դրանց բազմազա-

նությունը պայմանավորված է քաղաքական գործընթացների և ուսմունքների բազմազանությամբ:

Հետխորհրդային պատմաշրջանում ծավալվեց մարքսիստական մեթոդաբանության սկզբունքներից հրաժարման գործընթաց, ինչի հետևանքով հումանիտար գիտությունների բնագավառում առաջացավ մեթոդաբանական մտքի ճգնաժամ, որի հաղթահարումը հրատապ ու բարդ խնդիր էր: Փիլիսոփայության և քաղաքական գիտության պատմությանը վերաբերող մեթոդաբանական բազմաթիվ հայեցակետեր գոյություն ունեն: Ճգնաժամի պայմաններում կարող էր հրապուրիչ թվալ «քաղաքակիրթ աշխարհում» համամարդկային արժեք համարվող արևմտյան հայեցակարգերից որևէ մեկի ընտրությունը: Այս մոտեցման չարդարացված լինելը Կ. Միրումյանը հիմնավորում է հետևյալ փաստարկներով. «Նախ՝ գոյություն ունեցող արևմտյան հայեցակարգերը ստեղծվել են պատմամշակութային և սոցիալ-քաղաքական այլ նյութի հիման վրա կամ ելնում են ընդհանուր վերացական դիրքորոշումներից: *Երկրորդ՝* դրանք արտացոլում են հասարակական-քաղաքական զարգացման արևմտյան ուղին, քաղաքական մտքի զարգացման արևմտյան ավանդույթը: *Երրորդ՝* դրանց մեխանիկական «...տեղադրումը կոնկրետ, այն էլ ոչ-արևմտյան ժողովուրդների քաղաքագիտական մտքի պատմության մեջ բազում վերապահումներ է ենթադրում և հղի է ազգային-քաղաքական զարգացման և մտածողության յուրահատկության «համահարթեցման» վտանգով» [3], և իրական պատմամշակութային, այդ թվում՝ փիլիսոփայաքաղաքա-

կան գործընթացը համաշխարհային համապատասխան գործընթացի ընդհանուր ուրվագծերին ենթարկելու միտումով:

Նշված փաստարկներից զատ, Կ. Միրումյանն ուշադրություն է հրավիրում այն իրողությանը, որ գոյություն ունեցող հայեցակարգերի զգալի մասը զուտ տեսաբանական արդյունք է, իսկ փիլիսոփայաքաղաքական մտքի պատմությունը հետազոտելիս անհրաժեշտ է փաստագրական հիմք: Նա նաև հիշեցնում է, որ մարքսիզմը նույնպես արևմտյան քաղաքակրթության ծնունդ է, որի մեխանիկական կիրառման արդյունքի՝ խորհրդային ամբողջատիրության դեմ էր ուղղված հետխորհրդային պետությունների և ժողովուրդների ատելությունը:

Այդպիսով, Կ. Միրումյանի համոզմամբ՝ ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մշակույթի մեթոդաբանությունը պետք է ստեղծվի ոչ թե գոյություն ունեցող այս կամ այն հայեցակետի իրականացման ճանապարհով, այլ հակառակ եղանակով. «...մեթոդաբանական սկզբունքներն ու տեսությունները պետք է բխեցվեն իրական պատմամշակութային գործընթացի կոնկրետ վերլուծություններից, այս կամ այն տեսական մակարդակի վրա արտացոլեն այդ գործընթացի էությունն ու ներքին օրինաչափությունները» [4]:

Անդրադառնալով մեթոդաբանական մտքի պատմությունն ուսումնասիրելու անհրաժեշտության հիմնահարցին՝ Կ. Միրումյանը հիմնավորում է, որ «...պատմամշակութային յուրաքանչյուր դարաշրջան, զարգացած փիլիսոփայական մտածողության առկայության դեպքում ստեղծել է մե-

թողաբանական իր հայեցակետը» [5]: Ուստի՝ մեթոդաբանական մտքի վերլուծությունը հնարավորություն է տալիս, մի կողմից, բացահայտել մեթոդաբանական հայեցակետերի լինելիության ողջ շարժընթացը, մյուս կողմից՝ այն կարող է *«կապակցող օղակի»* դեր խաղալ անցյալի մեթոդաբանական որոնումների և կոնկրետ պատմական հետազոտությունների միջև: Բացի այդ, անցյալի մեթոդաբանական սկզբունքները կարող են օգտակար լինել նաև ժամանակակից մեթոդաբանական իրավիճակներում կողմնորոշելու և հայեցակարգեր մշակելու գործում:

Փիլիսոփայաբաղադրական մտքի պատմության հետազոտության բանալին *սեփական՝ ազգային մեթոդաբանական հայեցակարգն է՝ «...կառուցված քաղաքական կոնկրետ գործընթացների և դրանք արտացոլող քաղաքական ուսմունքների վերլուծության հիման վրա»*: Ըստ մտածողի՝ այս նկատառումը ենթադրում է գոյություն ունեցող մեթոդաբանական հայեցակարգերի իմացություն՝ որպես հետազոտական կողմնորոշիչներ: Այս մոտեցմամբ՝ հնարավոր է դառնում *«...հայ քաղաքական միտքը քննել, մի կողմից, որպես ազգային հոգեմտավոր գոյացում, մյուս կողմից՝ համաշխարհային քաղաքական մտքի օրինաչափությունների հարաբերակցությամբ»* [6]:

Կ. Միրումյանի ազգային մեթոդաբանական հայեցակարգի առանցքային բաղադրիչը *մեթոդաբանական ելակետային*

սկզբունքներն են, որոնց առաջադրումն էական նշանակություն ունեցավ հայ փիլիսոփայաբաղադրական մտքի արդի հետազոտությունների համար: Ըստ նրա՝ յուրաքանչյուր հայեցակարգի հիմքում ընկած են ելակետային որոշակի հասկացություններ, որոնց միջոցով վերլուծվում է պատմաբաղադրական գործընթացը՝ թե՛ կեցության, թե՛ իմացության առումով. *«Դրանք էլ, ի վերջո, որոշում են հայեցակարգի կառուցման տրամաբանությունը և բուն իսկ հայեցակարգը՝ գործառնության շրջանակները, առանձին պատմական իրադրությունների, ուսմունքների, տեսությունների հետ հարաբերակցությունը և այլն»* [7]:

Մտածողի դիտարկմամբ՝ յուրաքանչյուր տեսություն կարող է հավակնել լոկ *հարաբերական ճշմարտության*՝ այն իմաստով, որ այն հնարավորություն է տալիս պատմական, քաղաքական իրողությունները քննարկել հետազոտական որոշակի կտրվածքով: Այս առնչությամբ նա արդիական է համարում Դավիթ Անհաղթի մեթոդաբանական դիրքորոշումը, ով փիլիսոփայության առարկան սահմանելիս հիմնավորում է ոչ թե մեկ կամ երկու, այլ վեց ոչ հակադիր՝ համադրվող սահմանումների անհրաժեշտությունը՝ որպես մեկ ընդհանուր սահմանման բաղադրիչներ: Մեթոդաբանական պլյուրալիզմը հնարավոր է դարձնում ազգային պատմական անցյալի լուսաբանումը տարբեր հայեցակարգերի դիրքերից^{4*}:

* Այս հիմնահարցի մանրամասն վերլուծությունը տես՝ Միրումյան Կ., «Ազգային պատմության մեթոդաբանություն» հասկացության կարգավի-

ճակի մասին // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 3, Եր., 1998, էջ. 21–25:

Ըստ Միրումյանի՝ «...մեթոդաբանական սկզբունքները և հայեցակարգերը պետք է բխեցվեն իրական պատմամշակութային և հատկապես՝ փիլիսոփայապատմական գործընթացի կոնկրետ վերլուծությունից, տեսական վերլուծության այս կամ այն մակարդակի վրա արտացոլեն այդ գործընթացների էությունն ու տրամաբանությունը»[8]: Դա ենթադրում է հաշվի առնել մեթոդաբանական առկա հայեցակարգերը, որոնք, իհարկե, պետք է ստուգվեն ու ճշգրտվեն կոնկրետ-պատմական հետազոտությունների ընթացքում: Այսինքն, դրանք կոչված են՝ կատարելու ոչ թե բուն տեսությունների, այլ «մեթոդաբանական հայեցակարգային կողմնորոշիչների» դեր:

Խորհրդային ժամանակաշրջանում հետազոտողները ղեկավարվում էին սոցիոլոգիական մեթոդի սկզբունքներով, ինչի հետևանքով ոչ միայն «համահարթեցվում» էին փիլիսոփայապատմական և քաղաքական իրական գործընթացների բազում կողմեր, այլև անտեսվում ազգային մտքի առանձնահատկությունները: Ըստ Միրումյանի՝ «Սոցիոլոգիական մեթոդի հնարավորություններն ակնհայտորեն անբավարար են, երբ խոսքն այնպիսի երկրների և ժողովուրդների պատմական անցյալի մասին է, որոնք դարեր շարունակ զրկված են եղել քաղաքական անկախությունից, քանզի դրա հետևանքով հիշյալ գործընթացները ձեռք են բերել գերազանցապես ազգային-պատմական, ազգային-մշակութային ձև՝ հետին պլան մղելով հասարակական-պատմական հատկանիշը» [9]: Հարկ է նշել, որ նշված իրողությունը չի

նշանակում «ազգային և հասարակական» հակադրում, քանի որ դրանք հանդես են գալիս միասնաբար՝ որպես պատմական միասնական ընթացքի կողմեր: Ուստի՝ խոսքը միայն ամբողջի շրջանակներում այս կամ այն սկզբի գերակայության մասին է, այն էլ որոշ պատմաշրջաններում:

Այս համատեքստում ուշագրավ է փիլիսոփայաքաղաքական առանցքային հասկացությունների Կ. Միրումյանի մեկնաբանությունը: Նա ելնում է այն դրույթից, որ **«հասարակություն»** հասկացությունն առնչվում է **«պետություն»** հասկացությանը: Պետականության բացակայության պարագայում հասարակության մասին խոսվում է պայմանականորեն, օրինակ՝ «հանրային» իմաստով: «Հասարակություն» հասկացության սոցիոլոգիական բովանդակությունը ենթադրում է պետական-քաղաքական կառույցների, իրավական նորմերի համակարգի առկայություն, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները պետության մեջ:

Իրավիճակը փոխվում է, երբ որևէ բնիկ ազգի արմատական հայրենիքը զավթողականության հետևանքով ներառվում է մեկ այլ պետության կազմի մեջ: Քաղաքական անկախությունն ու պետականությունը կորցնելով՝ հպատակ ժողովուրդը դառնում է «...օտար հասարակության մաս, ենթարկվում այնտեղ գործող պետական-քաղաքական, հասարակական-տնտեսական հարաբերություններին, իրավական և օրենսդրական համակարգերին և այլն» [10]: Միաժամանակ՝ Միրումյանը շեշտում է, որ երկրի ռազմաքաղաքական

նվաճումը չի հանգեցնում ավանդական հարաբերությունների ոչնչացման: Դա կախված է հպատակ ժողովրդի ազգային ավանդույթների կայունությունից, հոգևոր ներուժից, ազգային գիտակցության և ինքնագիտակցության մակարդակում ազգային պետական կառույցի կարևորության իմաստավորումից, ազգի քաղաքական ակտիվությունից և այլն:

Հայոց պատմության փիլիսոփայապատմական վերլուծության հիման վրա Կ. Միրումյանը հաստատում է, որ պետականագուրկ իրավիճակում առավել ճիշտ է խոսել ոչ չէ հասարակության կամ սոցիալական հանրույթի, այլ **«ազգի և ազգային հանրույթի»** մասին, որոնք կարող են դիտվել որպես **մեթոդաբանական ելակետային հասկացություններ**¹, հայ ժողովրդի պատմական անցյալի և փիլիսոփայաքաղաքական մտքի ուսումնասիրության ժամանակ: Ըստ մտածողի՝ խորհրդային շրջանի հայագիտության թերություններից էր այն, որ հետազոտությունը կառուցվում էր պատմության սոցիոլոգիական հայեցակետի հիման վրա: Այս իրողության բացասական հետևանքն այն էր, որ պատմաբանները և քաղաքագետ-փիլիսոփաները ստիպված էին ոչ թե վերլուծել պատմական գործընթացը կամ քաղաքական միտքը, այլ դրանք համապատասխանեցնել իշխող գաղափարախոսությանը:

Հարկ է նշել, որ Կ. Միրումյանը լիովին չի անտեսում սոցիոլոգիական մեթոդաբանությունը, այլ որոշ վերապահումով է մեկնաբանում այն՝ հաշվի առնելով հետազոտության առարկայի և մեթոդի համապատասխանությունը: Օրինակ՝ փաստարկե-

լով այն իրողությունը, որ «Հայաստանը հզոր պետություն է եղել կենտրոնացված պետական-քաղաքական իշխանությամբ՝ Այրարատյան թագավորության, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների հարստությունների օրոք», ինչպես նաև Կիլիկյան Հայկական թագավորության պատմաշրջանում, նա հաստատում է, որ «...այս դեպքերում կարող ենք խոսել հայ հասարակության մասին սոցիոլոգիական կտրվածքով»: Ինչ վերաբերում է հայության հպատակության կարգավիճակին՝ հռոմեական, բյուզանդական, պարսկական, արաբական, օսմանյան և ռուսական տիրապետության ներքո, խնդիրը էապես փոխվում է: Բանն այն է, որ հպատակության կարգավիճակում հաճախ երկրի առանձին նահանգներ կամ գավառներ պահպանում էին ինքնիշխանության որոշակի աստիճան, պետականության որոշակի տարրեր, ինչպես նաև «...ներագային և մշակութային կյանքի կազմակերպման ոլորտում որոշակի ինքնուրույնություն»: Այս պարագայում «...արդեն դժվար է միանշանակ խոսել հայ հասարակության մասին՝ նշված իմաստով» [11]:

Հետևաբար՝ Կ. Միրումյանի վերլուծությունից բխում է, որ «Սոցիոլոգիական տեսանկյունը բավարար չէ հայ ժողովրդի պատմության, ազգային մշակույթի, գիտության և փիլիսոփայության պատմության ուսումնասիրության համար և չի կարող որոշիչ դեր խաղալ, միակ մեթոդաբանությունը համարվել» [12]: Բանն այն է, որ մարքսիստական և սոցիոլոգիական այլ մեթոդաբանություններ, որոնք «...կառուցված են **հասարակություն կամ հասարա-**

կական կեցություն» հասկացությունների վրա» [13], առաջնային են համարում արտադրահարաբերությունները, դասակարգային պայքարը, պրոլետարիատի դիկտատուրան և այլն: Բհարկե՝ հեղինակը չի հակադրում «ազգային գործոն» և «հասարակական գործոն» հասկացությունները, բայց իրավամբ հատկանշում է, որ քաղաքական անկախությունից և ազգային պետականությունից զրկված ազգերի «...պատմական զարգացումը ձեռք է բերել գերազանցապես *ազգային-պատմական բնույթ, հետին պլան մղելով հասարակական գործոնը*» [14]:

Այս դիտարկումը թույլ է տալիս նորովի գնահատել ոչ միայն ազգային պատմությունը, այլև հայ մտածողների գիտափիլիսոփայական ժառանգությունը և ազգային գործիչների քաղաքական գործունեության արդյունքները: Ըստ Կ. Միրումյանի՝ յուրաքանչյուր հայեցակարգ տեսականորեն արտահայտում է որոշակի դասակարգերի, քաղաքական խմբերի, կուսակցությունների, պետական կառույցների շահերը: Խորհրդային գաղափարախոսներն ու տեսաբանները քաղաքական-հասարակական միտքը լուսաբանում էին սոսկ դասակարգային պայքարի տեսության ելակետից: Շեշտելով, որ դասակարգային պայքարը պատմության իրական կողմերից է, այնուամենայնիվ, նա հաստատում է, որ «...պատմական ողջ գործընթացի տրամաբանությունը, ներքին մեխանիզմը սոսկ դասակարգային պայքարի բանաձևին չի հանգում» [15]: Այն առավել բարդ և բազմաշերտ գործընթաց է:

Հարկ է նշել, որ նշված նկատառումներն առավելապես վերաբերում են *ազ-*

գային պատմությանն ու ազգային-քաղաքական մտքին: Այս համատեքստում Կ. Միրումյանը ուշագրավ փաստարկներով հատկանշում է, որ XIX դարի ականավոր շատ մտածողներ, քաջաճանոթ լինելով դասակարգային պայքարի տեսությամբ, գիտակցաբար շրջանցում էին այն: Հասարակությունը նրանք բաժանում էին ոչ թե դասակարգերի, այլ «ունևորների և ընչազուրկների»՝ անտեսելով սոցիալական խավերի հակադրության հանգամանքը: Բանն այն է, որ այն պատմաշրջանում, երբ Հայաստանը զրկված էր քաղաքական անկախությունից և բաժանված էր Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի միջև, դասակարգային պայքարի գաղափարի առաջադրումը կնշանակեր ազգի ոչ միայն արտաքին՝ քաղաքական, այլև ներազգային այլ բաժանումներ՝ տնտեսական, սոցիալական ու հոգևոր-մշակութային ոլորտներում: Մինչդեռ անհրաժեշտ էր քաղաքական այնպիսի հայեցակարգ, որը հիմնավորեր ազգի ջլատված ուժերի գաղափարաքաղաքական միասնության անհրաժեշտությունը՝ նպաստելով ազգի միավորման գործընթացին: Միրումյանի հիմնավորմամբ՝ «Քաղաքական հայեցակարգը միաժամանակ ազգային-ազատագրական պայքարի և առհասարակ ազգային գաղափարախոսության՝ ազգային կեցության համատեքստում գերագույն արժեքի տեսական հիմքն է» [16]:

Վերը նշված դիտարկումների համատեքստում և ազգային-քաղաքական հիմնախնդիրների մեր հետազոտությունների արդյունքում կարող ենք հաստատել, որ XIX դարի հայ մտածողների փիլիսոփայաքաղաքական հայեցակարգերում գերա-

կայել է **ազգային գաղափարակարգը**: Մական խորհրդային շրջանում մարքսիստական գաղափարների ազդեցությունը կրող շատ պատմաբանների համար մերժելի էր այդ իրողությունը: Օրինակ՝ ոմանք քննադատում էին արևմտահայ հանրահայտ մտածող Մադաքիա Օրմանյանին՝ նշելով, թե «...նա խուսանավում էր դասակարգային պայքարի պատմություն գրելուց» [17]: Մական Կ. Միրումյանի առաջադրած մեթոդաբանական նոր՝ ազգային մոտեցմամբ քննադատական այս կարծիքը իրավամբ գնահատում ենք որպես Օրմանյանի դիրքորոշման ճշգրիտ վերլուծություն, քանզի «...նրա հայեցակարգում ազգային գործոնն արժևորվել է որպես պատմական շարժընթացի իմաստավորման հիմք» [18]: Նա ձգտում էր **Ազգի ու Հայրենիքի** գաղափարների շուրջ համախմբել ողջ հայությանը՝ մերժելով դասային, խմբային, կուսակցական և այլ խտրություններ, ինչպես նաև ազգային ինքնիշխանության, ազգային-սահմանադրական սկզբունքների քարոզչությամբ բարձրացնել ազգային գիտակցության մակարդակը:

Ըստ Կ. Միրումյանի՝ «Հայ հոգևոր մշակույթի բոլոր բնագավառների, կրոնա-եկեղեցական և քաղաքական-գաղափարախոսական գործունեության զարգացման համար ելակետային նշանակություն ունի **ազգային կեցություն** հասկացությունը» [19]: Ազգային կեցությունը նա մեկնաբանում է որպես ազգի նյութական և հոգևոր գոյացումների ամբողջություն, որոնք կազմում են ազգի գոյատևման և գործառնության հիմքը [20]: Բնականաբար՝ մտածողն իր իսկ առաջադրած հասկացություն

ըն միանշանակ չի կիրառում Հայաստանի տարբեր պատմաշրջաններում:

Հայոց պետականության առկայության պարագայում «ազգային կեցությունը» որոշ վերապահումներով համընկնում է «հասարակական կեցություն» հասկացությանը, իսկ պետականագուրկ դարաշրջաններում այն դառնում է **որոշիչ և ելակետային**: Միաժամանակ «ազգային կեցություն» հասկացությունը հայ գաղափարախոսները դիտարկում են որպես **«նպատակադրույթ»**: Միրումյանի մեկնաբանությամբ՝ «Ազգային կեցության, որպես ն՝ ելակետային, և՛ նպատակային գաղափարի, երկու մակարդակները կապակցվում են ազգային ինքնագիտակցություն հասկացության միջոցով» [21]: Ընդ որում՝ «ազգային կեցության» երկակի ընկալումը դարձավ ազգային գաղափարախոսության և քաղաքականության, մշակույթի, կրթության ու դաստիարակության ծրագրերի մշակման հիմք: Ազգային մտածողության ընդհանուր փիլիսոփայական մակարդակի վրա մշակվում են մեթոդաբանական սկզբունքներ, որոնք կիրառվում են նաև սոցիալական և քաղաքական փիլիսոփայության բնագավառում: Ազգային կեցության՝ որպես ելակետային մեթոդաբանության առանձնացումը կարևորվում է ինչպես բուն պատմական իմացությամբ, այնպես էլ մեթոդաբանական մտքի պատմությամբ:

Կ. Միրումյանի դիտարկմամբ՝ ազգային փիլիսոփայության ուսումնասիրությունն ազգի համար ոչ միայն ունի ինքնուրույն պատմական-ճանաչողական նշանակություն, այլև համաշխարհային փիլի-

սովորության իրական պատմության ստեղծման կարևորագույն ուղիներից է: Գիտական առումով անհրաժեշտ է «...առավել անաչառ ներկայացնել ազգային և համաշխարհային փիլիսոփայությունների հարաբերակցության խնդիրը, բացահայտել ազգային փիլիսոփայության իրական տեղն ու դերը համաշխարհային փիլիսոփայության պատմության մեջ» [22]:

Այս համատեքստում Կ. Միրումյանը կարևորում է *հայ քաղաքական մտքի*՝ որպես ազգային տեսական մտածողության բաղադրիչի և ազգային գիտակցության ուրույն ձևի պատմության հետազոտությունը: Մտածողի դիտարկմամբ՝ սովետահայ հասարակագիտության մեջ քաղաքական ուսմունքների պատմությունը ուսումնասիրվում էր իրավագիտական հիմնախնդիրների համատեքստում: Սակայն XX դարի 80-ական թվականներին քաղաքական գիտությանը հաղորդվեց ինքնուրույն գիտական կարգավիճակ, ինչի արդյունքում անհրաժեշտ դարձավ այն ուսումնասիրել քաղաքագիտության տեսանկյունից՝ համապատասխան առարկայի շրջանակներում ու մեթոդաբանությամբ:

Պատմականության և տրամաբանական սկզբունքների հիման վրա Կ. Միրումյանը բացահայտում է քաղաքագիտական մտքի *կոնկրետ պատմական* և *տեսական* մակարդակները: Ըստ նրա՝ քաղաքագիտական մտքի պատմությունը և՛ պատմական, և՛ տեսական գիտություն է: Խոսքը պատմականորեն ձևավորվող և զարգացող տեսական հայեցակարգերի մասին է, որոնցում քաղաքագիտական իմացությունը տրամաբանական-հասկացութային ար-

տահայտություն է ստանում: Մյուս կողմից՝ «...քաղաքագիտական ուսմունքների տեսական-հայեցակարգային հիմքերը և մեթոդաբանական մոտեցումներն ու սկզբունքները ժամանակի ընթացքում վերածվել են քաղաքագիտական մտքի զարգացման անհրաժեշտ տարրերի, քաղաքական մտածողության տեսական մոդելների՝ իբրև այդպիսին ներառվելով ժամանակակից քաղաքագիտության մեջ» [23]:

Հետևաբար՝ քաղաքագիտական մտքի համարժեք մեկնաբանության համար Կ. Միրումյանը պահանջում է քաղաքական գիտելիքի կառույցում առանձնացնել նշված երկու մակարդակները: Կոնկրետ պատմական սկզբունքով բացահայտվում են առկա հասարակության, պետության, իրավունքի, քաղաքականության և այլ իրողությունների նկատմամբ հայացքների պատմական որոշակիությունը, յուրահատկությունները և դրանց հարաբերակցությունը դարաշրջանի պատմական ու զաղափարախոսական գերակայությունների հետ, ինչպես նաև քաղաքական մտածողների անձնական դիրքորոշումը, աշխարհայացքը և այլն: Իսկ տեսական մակարդակն արտացոլում է «...քաղաքական ուսմունքի փիլիսոփայական, ճանաչողական-էութենական հիմքերը, տեսական կառուցումների ելակետային սկզբունքները, մտածողության ձևերը, մոդելները, որոնք որոշիչ նշանակություն ունեն առանձին մտածողի համար» [24]:

Այդպիսով՝ պատմականի և տրամաբանականի միասնականության սկզբունքով բացահայտվում են քաղաքական ուսմունքների թե՛ ընդհանուր տեսական հա-

մատեքստը, թե՛ պատմական կողմը, մասնավորապես՝ ազգային ավանդույթների դերը փիլիսոփայաքաղաքական գաղափարների լինելիության ընթացքում: Պատմահամեմատական վերլուծության սկզբունքով էլ կոնկրետացվում են ընդհանուրի և առանձնահատուկի մասին գիտելիքները, ինչը նպաստում է քաղաքական ուսմունքների առավել ճշգրիտ դասակարգման և տիպականացման չափանիշների բացահայտմանը: Մյուս կողմից՝ Կ. Միրումյանը հաստատում է, որ «...քաղաքական տեսություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ աշխարհայացքային, գաղափարախոսական և արժեքանական կտրվածք» [25]: Ընդ որում՝ նշված հարթությունները փոխկապված են, քանի որ հասարակական-քաղաքական և պետաիրավական իրողությունների քաղաքագիտական իմացությունը իրականանում է որոշակի «գաղափարա-աշխարհայացքային» դիրքերից՝ ունենալով այդպիսի միտվածություն:

Անդրադառնալով՝ հայ քաղաքական ուսմունքների պատմության մեթոդաբանական ելակետային և նպատակային հասկացություններին՝ Կ. Միրումյանը հիմնավորում է, որ դրանք համընկնում են, քանզի երկու դեպքում էլ առնչվում ենք

«ազգային (քաղաքական) կեցություն» հասկացությանը: Միաժամանակ նա բացահայտում է դրանց տարբերությունը՝ հետևյալ փաստարկով. «...առաջին դեպքում գործ ունենք առկա կեցության, երկրորդ դեպքում՝ սպասվելիք կեցության հետ» [26]: Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ հայ ժողովրդի պատմաքաղաքական կեցության տեսանկյունից ազգային կեցությունը՝ որպես նպատակ նշանակում է ազգային պետականության վերականգնում և քաղաքական անկախության նվաճում:

Պրոֆեսոր Կառլեն Միրումյանի ազգային մեթոդաբանական հայեցակարգը, առաջադրած սկզբունքները էական ազդեցություն ու կողմնորոշիչ դեր են ունեցել հայ փիլիսոփայության, ազգային իրավաքաղաքական հիմնախնդիրներով զբաղվող ժամանակակից հետազոտողների համար: Արդյունքում՝ գրվել են բազում մեկնադրություններ, գիտական հոդվածներ, ատենախոսություններ, ավարտական թեզեր: Կարծում ենք՝ նրա աշխատությունները մշտապես կհամարվեն հայ փիլիսոփայական-քաղաքական մտքի և ազգային մեթոդաբանության պատմության հետազոտության կարևոր սկզբնաղբյուրներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Միրումյան Կ.* Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2006: էջ 15:
2. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմության գիտական կարգավիճակի մասին // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 4, Եր., 2000: էջ 68:
3. *Միրումյան Կ.* Քաղաքական ուսմունքների պատմություն, էջ 15: Միրումյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Եր., 2002: էջ. 14–16:

4. *Միրումյան Կ.* Փիլիսոփայապատմական հետազոտությունների մեթոդաբանական խնդիրների շուրջ // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 1, Եր., 1992: Էջ 53:
5. Նույն տեղում: Էջ 54:
6. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից: Էջ 16:
7. *Միրումյան Կ.* Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին (հարցադրման կարգով) // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 2, Եր., 1995: Էջ 19:
8. *Միրումյան Կ.* Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին: Էջ 28:
9. Նույն տեղում: Էջ 29:
10. Նույն տեղում: Էջ 30:
11. Նույն տեղում: Էջ. 31–32:
12. *Միրումյան Կ.* Անանիա Շիրակացի (2-րդ լրացված և վերամշակված հրատ.), Եր., 2012: Էջ 15:
13. *Միրումյան Կ.* «Ազգային պատմության մեթոդաբանություն» հասկացության կարգավիճակի մասին: Էջ 33:
14. Նույն տեղում:
15. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմության գիտական կարգավիճակի մասին: Էջ 69:
16. Նույն տեղում: Էջ 70:
17. *Մկրտչյան Հ.* Արևմտահայերի Ազգային սահմանադրության սովետահայ պատմագրությունը // Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1985: Էջ 135:
18. *Մարվազյան Լ.* Մաղաքիա Օրմանյան (Ազգային-փիլիսոփայական հայեցակարգը), Երևան, 2013: Էջ 11:
19. *Միրումյան Կ.* Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին, էջ 33: *Мирумян К.* Культурная самобытность в контексте национального бытия. Ер., 1994.
20. *Միրումյան Կ.* «Ազգային փիլիսոփայություն» հասկացությունը փիլիսոփայության արդի համակարգում // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 4, Եր., 2000: Էջ 40:
21. *Միրումյան Կ.* Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին: Էջ 35:
22. *Միրումյան Կ.* «Ազգային փիլիսոփայություն» հասկացությունը փիլիսոփայության արդի համակարգում: Էջ 52:
23. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմության գիտական կարգավիճակի մասին // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 4, Եր., 2000: Էջ 57:
24. Նույն տեղում: Էջ 58:
25. *Мирумян К.А.* История политической науки. Эпоха античности. Часть I. Ер., 2004. С. 11.
26. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմության գիտական կարգավիճակի մասին: Էջ 67:

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ ИССЛЕДОВАНИЯ
НАЦИОНАЛЬНОЙ ФИЛОСОФСКО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ
В КОММЕНТАРИЯХ КАРЛЕНА МИРУМЯНА**

Л.С. Сарвазян

АННОТАЦИЯ

В данной статье анализируется национальная методологическая концепция К. Мирумяна. Он обосновывает, что нация, обладающая зрелой и развитой политической мыслью, должна иметь собственную методологическую концепцию. Методологические принципы должны быть выведены из конкретного анализа реального историко-культурного процесса и отражать сущность и внутренние закономерности этого процесса. На основе философско-исторического анализа армянской истории мыслитель утверждает, что в безгосударственной ситуации правильнее говорить не об обществе или социальной общности, а о нации и национальной общности. Методологическим исходным пунктом философско-политической концепции Мирумяна является нация, сущностные основы нации, выявление которых является ключом к осмыслению национальных проблем. По его мнению, понятие национального бытия имеет основополагающее значение для развития всех направлений армянской духовной культуры, религиозно-церковной и политико-идеологической деятельности. Он трактует «национальное бытие» как совокупность материальных и духовных образований нации, составляющих основу существования и функционирования нации. При наличии армянской государственности «национальное бытие» совпадает с понятием «общественное бытие» с некоторыми оговорками, а в безгосударственные эпохи становится определяющим и исходным. В то же время армянские идеологи рассматривают понятие «национальное бытие» как «целевую идею». Согласно трактовке Мирумяна, два уровня национального бытия, как исходная точка и целевая идея, связаны понятием национального самосознания. Кроме того, двойственное восприятие «национального бытия» стало основой для разработки национальной идеологии и программ политики, культуры, образования и воспитания.

Ключевые слова: К. Мирумян, национальная методологическая концепция, историко-культурный процесс, национальное бытие, идейно-политическое единство.

**METHODOLOGICAL PRINCIPLES OF THE RESEARCH
OF NATIONAL PHILOSOPHICAL AND POLITICAL THOUGHT
IN THE COMMENTS OF KARLEN MIRUMIAN**

L. Sarvazyan

ABSTRACT

